



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Utn

✓ 763.


1999

ԱՆՅՈՆՍ ՏԷ ԼՍՄԱՐԹԻՆ

ԿՐԱՑԻԷԼԼԱ

ԹԱՐԳԱՆՆՑ

Ս. Կ. Է.



ԵՐՐՈՐԴ ՏԻՊ




ՏԷՐ ԵՒ ՀՐԾՏԱՐԱՆԻՉ

ՏԵՂԵՆ ԵՐԲՈՂՔԻՆ ԵՒՏԷՆԱՆ

ՋՐԻՌՆԵԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԷՆԱՆ

— 1874 —




ՄԱՅՈՒՆ ԵՎ ԼԱՄԱՐՈՒՆ

ԿՐԱՅԻՒՆՆԵՐ

ԹԱԳՄԱՆԵՑ

Ս. Կ. Է.

ԵՐԵՎԱՆ ԿՐԱՅԻՆ



1877



ՏԻՐ ԵՎ ՀՐԵՍՈՒՄՆԵՐ

ՏԻՐԱՆԵՐ ԵՎ ԳՐԱՆԻՒՆՆԵՐ

ԶՄԻՆՈՒՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵՆ

— 1874 —







57320-սհ

763-60

29 784



Ա.Ռ.

ՄԵԾԱՇՈՒՔ ՅԱԿՈՒ ԷՅԷՆՏԻ
ՍՊԱՐԹԱԼԵԱՆ

Ի ՆՇԱՆ

Խորիկ Յարգանաց

ՆՈՒՒՐԷ

Ս. Կ. Է.

ԿՐԱՑԻԷԼԼԱ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա.

Տասն և ութ տարեկան էի, երբ ընտանիքս ազգական կնոջ մը խնամոց յանձնեց զիս, որ իր գործերուն համար Թօսքանա կերթար ամուսնոյն ընկերացած: Ասիկա պատեհ առիթ մ'էր ինձ ճամբորդելով հայրենի տան և քաղաքներու վտանգաւոր դատարկութենէ ազատելու, ուր հոգւոյն առաջին կիրքերը անգործութենէ կ'խանդարին: Գացի տղու մը այն զմայլումով որ բնութեան և կենաց ամենէ շքեղ տեսարաններու վարպոյրին առաջին անգամ բացուիլը կ'տեսնէ:

Ալպեան լեռները՝ որ մանկութենէս 'ի վեր Մելիի բլրան բարձունքէն հեռուանց կ'տեսնէի հորիզոնին ծայրը յախտեալական ձիւներով կ'փայլէին. ծովը՝ զոր ճամբորդները և բանաստեղծները այնչափ պայծառ նկարագրելով յաերձական յիշատակներ թողած էին մաքիս մէջ. իտալական երկիրքը՝ որուն ջերմութիւնը և պարզութիւնը շնչած էի Կէօթէի սողերուն և Քօրիսի էջերուն մէջ:

Կ'աննչման արդեօք այն երկիրը ուր միտէնիք կ'ծաղկին:

Հռովմայեցոց հոտութեան գեռ կանդուն յիշատակարանները՝ զորս իմ թարմ ուսմունքս ամփոփած էին մտացս մէջ. վերջապէս ազատութիւնը, հեռաորտութիւնը որ ապառնոյն քօղ մը կը ձղէ. արկածք՝ որ երկար ճամբորդութեանց մէջ ստոյգ դէպքեր

են, զորս ողջամիտ երևակայութիւնը կ'նախատեսէ ուղածին պէտ
 յարդարելով վայելելու համար. լեզուի, կերպարանաց և սովո-
 բութեանց փոփոխութիւնը՝ որուն կարծես խելքը նոր աշխարհ
 մը կ'կցորդէ, այս ամէնը կ'յափշտակէին միտքս: Շարունակ արբ-
 շեռ վիճակի մէջ ապրեցայ երթէս առաջ սպասած երկար օրերու
 մէջ: Այս յափշտակուած կացութիւնս բնութեան սքանչելիքնե-
 րէն ամէն օր նորոգուած Սավուայի և Զվիցցերլայի մէջ, ճե-
 նօվայի լճին, Սէմբլօնի սառնամանեաց և Քօմա լճին վրայ,
 Միլանի և Ֆիօրէնցայի մէջ, միայն վերադարձիս ժամանակ անցաւ:

Այն գործերը՝ որ ճամբորդութեան ընկերուհիս հարկադրած
 էին Լիվուրնա երթալու անորոշապէս երկարելուն, ուղեցին զիս
 Գաղղիա վերադարձնել առանց Հոովմ և Նաբօլի տեսնելու: Ա-
 սով երազս պիտի ոչնչանար ճիշդ այն վայրկեանին որ պիտի գոր-
 ծադրուէր: Այսօրինակ խորհրդի մը դէմ յուզուեցայ խրովի և
 գրեցի հօրս հրաման խնդրելով Իտալիոյ մէջ առանձին ճամ-
 բորդութիւնս շարունակելու: Առանց պատասխանի սպասելու, զօր
 ամենեւին նպաստաւոր չէի կարծէր, որոշեցի գործով անհնազան-
 թեան առաջը երթալ: «Եթէ պատուէրը զայ, կ'ըսէի ինքնիրեն,
 շատ ուշ պիտի ըլլայ: Պիտի յանդիմանո՞ւիմ անտարակոյս, բայց
 պիտի ներուիմ. պիտի վերադառնամ բայց տեսած պիտի ըլ-
 լամ»: Ստակս քննեցի որ խիստ նուազ էր, բայց մտածեցի որ
 Նաբօլիոյ մէջ մօրս մէկ աղակաւոր ունէի որ վերադարձիս քիչ
 մը ստակ պիտի չ'զլանար ինձ անշուշտ: Գեղեցիկ գիշեր մը Լի-
 վուրնայէն մեկնեցայ Հոովմի թղթատարով:

Չմեռը հոն անցուցի, Սպանիոյ հրապարակը եզերող մութ
 փողոցին մէջ, Հոովմայեցի նկարչի մը սուներ որ թողակաւ իր
 ընտանեաց մէջ առաւ զիս: Արարանքս, երիտասարդութիւնս,
 աշխոյժս, անձանօթ քաղքի մէջ առանձնութիւնս, շարժեր էին
 ճամբորդութեանս ընկերներէ մին՝ Ֆիօրէնցայէ Հոովմի ճամբուն
 վրայ և յանկարծ բարեկամութեամբ կապուեց էր հետս: Գրեթէ
 իմ տարիքովս գեղեցիկ երիտասարդ մ'էր որ Գալիթ հռչակաւոր
 երգիչին Իտալացոց թատրոններու այն ատենուան առաջին թէ-
 նօրէն զաւակը կամ եղբորորդին կ'երևէր:

Գալիթ ալ մեղի հետ կ'ճամբորդէր: Ասիկա արդէն տարիքը
 առած մարդ մ'էր որ Նաբօլիոյ Սէն-Շարլ թատրոնին վրայ վեր-
 ջին անդամ երգելու կ'երթար: Գալիթ հօր պէս կ'վարուէր հետս,
 նոյնպէս իր երիտասարդ ընկերը պատուով և բարիքով կ'լե-
 ցընէր զիս. ևս ալ բնական անտարբերութեամբ և պարզմտու-
 թեամբ կ'պատասխանէի այս մեծարանաց: Գեռ Հոովմ չհասած
 գեղեցիկ ճամբորդը և ես արդէն անրաժանելի էինք: Այն ատեն-
 ները թղթատարը երեք օրէն առաջ Ֆիօրէնցայէ Հոովմ չէր հաս-
 ներ: Պանդօկներու մէջ նոր բարեկամս թարգմանս էր. սեղանին
 վրայ առաջ ինձի կ'ծառայէր, կառքին մէջ իր քովը ամենէ ըն-
 փիր տեղը ինձի կ'սպասէր, և երբ ննջէի վտտահ էի որ իր ուսը
 զլիսիս բարձ պիտի ըլլար: Երբ Քօսքանայի և Սապինի ըլուրնե-
 րէն անցած ժամանակինս կառքէն իջնէի, ան ալ հետս կ'իջ-
 նէր, կ'բացատրէր երկիրը, քաղաքներու անունները կ'իմացնէր,
 յիշատակարանները կ'ցուցնէր, մինչև անդամ ճամբունս վրայ գե-
 ղեցիկ ծաղիկներ կ'ժողովէր և աղէկ թուղերու խաղողներ ծախու-
 կ'առնէր: Չուրքերս և փեղոյրս այս սրտողներով կ'լեցուէին: Գա-
 ւիթ ուրախ կ'երևէր իր ճամբորդութեան ընկերին օտար երիտա-
 սարդին վրայ ունեցած սէրը տեսնելով: Երբեմն իմացութեան,
 նրբութեան և բարեմտութեան դէմքով մը զիս զխտելով կ'քմծի-
 ծաղէին:

Հոովմ գիշերը հասնելով բնականաբար անոնց հետ նոյն սյան-
 գոկին մէջ իջևանեցայ: Սենեակս առաջնորդեցին և բարեկամիս
 ձայնէն արթնցայ որ դուռս կ'դարձեր և նախաձայն կ'հրաւիրէր
 զիս: Շտտպաւ հազուելով սեղանատուն իջայ ուր բոլոր ճամ-
 բորդները ժողվուած էին: Այժմ ի ընկերիս ձեռքը սեղմել, և երբ
 'ի զօր սեղանակիցներուս մէջ կ'փնտուէի զայն, ընդհանուր ծի-
 ծաղ մը բոլոր երեսներու վրայ երեցաւ: Գալիթ որդւոյ կամ
 եղբորորդւոյ տեղ, վայելչապէս հազուած Հոովմայեցի մանկա-
 մարդ աղջկան մը հրապուրիչ երեսը տեսայ իր քով, որուն սև
 վարսերը ձակախն բոլորը հիսուելով զլիսուն ետին կցուած էին
 մարդարտազունդ երկու ոտիէ ասեղներով, ինչպէս որ մինչև
 հիմա Թիլօլիի գիւղացիները կ'ընեն: Ասիկա բարեկամս էր որ

Հոռով՝ հասնելով իր հաղուստը և սեռը առած էր: Այնք էի իր նայուածքի փափկութենէն և քիմիծաղի շնորհքէն տարակուսիլ, բայց ամենևին կասկած մը ունեցած չէի: Հաղուստը սիրտը չ'փոխէր, ըստ գեղանի Հոռովմայեցին կարմրելով, միայն թէ հիմա ալ ուսիս վրայ պիտի չ'ննջէք և փոխանակ ինձմէ ծաղիկ բնդունելու դուք պիտի տաք ինձ: Այս գիպուածը պիտի սորվեցնէ ձեզի բարեկամութեան երեոյթներու միշտ չհաւտալ, որովհետեւ կրնան երբեմն ուրիշ բան ըլլալ:

Մանկամարդ աղջիկը երգուհի մ'էր, Գաւթի աշակերտը և սիրելին: Ծերունի երգիչը ամէն տեղ իր հետ կ'տանէր զայն, և ճամբուն վրայ բացատրութիւններէ խոյս տալու համար մարդու զընտս կ'հաղցնէր: Աւելի հօր քան պաշտպանի պէս կ'վարուէր հետը, և ամենևին մեր քաղցր և անմեղ մտերմութեանց վրայ չէր նախանձէր:

Բ

Գաւթի և իր աշակերտը քանի մը շարքի Հոռովման անյուցին: Հասնելնուս հետեւեալ օրը իր այրական զգեստը վերստին հագնելով առաջնորդեց զիս նախ դէպ ՚ի Սուրբ-Պետրոս, վերջը Քօլիզէն, Քրասքաթին, Թիփօլին և Ալպանօն, այսպէս աղատեցայ ժուռածող միջնորդներու ձանձրալի խօսածքներէն, որոնք ճամբորդներու առջև Հոռովմայ գիակը կտոր կտոր կ'ընեն, և յատուկ անուններու և թուականներու միաձայն երկարութիւնները միտքը կ'սպտեն, այնպէս որ զեղեցիկն ազդեցութենէն զարտուղի կուտան:

Քամիյեան դիտուն չէր, բայց Հոռովման ծնած՝ բնազդումով կը ճանչնար այն զեղեցիկ վայրերը և մեծ տեսարանները որ մանկութեան մէջ ազդած էին իրեն:

Առանց վարանելու ամենազեղեցիկ տեղերը առաջնորդեց ինձ պատեհ ժամերու մէջ հին Հոռովմայ մնացորդները զիտելու համար,

ետտու կաղնիներու տակ, Մօնթէ-Բինչիօի լայն կամարներուն ներքև, իրիկուն Սուրբ-Պետրոսի սիւներուն մեծ ստուերին տակ, լուսնի լուսով Քօլիզէի համր շրջապատին մէջ, աշնան զեղեցիկ օրերը Ալպանօն, Քրասքաթին և Սիպիլիի տաճարը՝ որ Թիփօլիի ջրվեժներու շրջիէն պատած են: Ուրախ և ծաղրածու էր նա նման մշտնջենաւոր երիտասարդութեան արձանին ժամանակի և մահուան հետքերու մէջ: Չէչիլիա Մէթէլայի գերեզմանին վրայ կ'սպարէր, և մինչդեռ ես քարի մը վրայ նստած կ'երազէի՝ ան իր թատերական ձայնին յոչիւններով Տիօքլէսիէնի պալատին տխուր կամարները կ'հնչեցնէր:

Կառքը լեցուն ծաղիկներով և արձաններու բեկորներով իրիկունը քաղաք կ'գառնայինք ծերունի Գաւթի զտնելու որ իր դործերու համար Հոռովման կ'մնար, և օրերնիս կ'լրանար թատրոն երթալով: Երգուհին՝ քանի մը տարի իզմէ մեծ, փափուկ բարեկամութեան զգացումներէ զատ բան չէր յայտնէր: Ես ալ շատ ամօթիւսած էի ուրիշ բան յայտնելու. չէի զգար իսկ, թէ և ես երիտասարդ և ան ալ զեղեցիկ էր: Իր մարդու հագուստը, արական ընտանութիւնը թիփօլիս ձայնին հնչիւնը, և իր ձևերու ազատութիւնը այնպիսի ազդեցութիւն կ'ընէին ինձ՝ որ լոկ իբր զեղեցիկ մարդ մը, ընկեր մը և բարեկամ մը կ'նկատէի զայն:

Գ

Երբ Քամիյեան դնաց, Հոռովմայ մէջ առանձին մնացի, միայն իր ցուցած վայրերը, յիշատակարանները և աւերակները ծանօթ թողլով ինձ: Ծեր նկարիչը՝ որուն տան մէջ կ'ընակէի, միայն կիրակի օրեր պատարագ տեսնելու գործարանէն կ'ելէր իր կնոջ և աղջկան հետ որ տասն վեց տարեկան առողջ աղջիկ մ'էր հօրը պէս աշխատասէր: Տուներնին տեսակ մը վանք էր՝ ուր արհեստաւորին գործը պարկեշտ ճաշով և աղօթքով միայն կ'ընդմիջէր: Երիկունը՝ երբ արևուն վերջին ճառագայթները խեղճ նկարչին

սենեկին սպառուհաններու վրայէ կ'անհետէին, և երբ շրջակայ վանքերու զանգակները « Ավէ Մարիա » կ'հնչէին, Կոտալոյ մէջ օրուան այն դաշնակաւոր մնաս բարովը ձայն կուտար այս ընտանիքին միակ սփոփումը սկսելու որ միասեղ աղօթել և մեղմիկ մաղթանաց երգերը սաղմոսել էր, մինչև որ քունէն ճնշուած ձայները, անորոշ և միաձայն մրմունջներու մէջ մարելին, նման ծովու այն ալիքին որ կ'հանդարտի եզերքը ուր հովը գիշերուան հետ կ'մեղմի :

Երեկոյեան այս խաղաղ և բարեպաշտ տեսարանը կ'սիրէի, որ աշխատութեան օր մը երեք հոգիներու աղօթքով կ'լմնար և որոնք երկնից մէջ կ'օթեանէին ցերեկուան աշխատանքէն հանդչելու համար : Ասիկա կ'յիշեցնէր ինձ հայրենի տունս յիշատակը ուր վերջալուսին մայրս իր բոլորտիքը կ'ժողվէր մեզի աղօթելու համար, մերթ իր սենեկին և մերթ Միլլիի փոքրիկ սարսուղին աւաղուտ անցքերուն մէջ :

Անձանօթի տան մը մէջ նոյն սովորութիւնները, նոյն դործերը և նոյն կրօնըրը դանկտով, գրեթէ հայրենի յարկին տակ կը կարծէի ինքզինքս : Երբէք Հռովմայեցի նկարչին կենցաղավարութենէ աւելի անդորր, աւելի մնակեաց, աւելի գործունեաց և որբազան կենցաղավարութիւն մը տեսած չեմ :

Նկարիչը եղբայր մի ունէր որ իր հետ չէր բնակէր : Կոտալերէն կ'սորվեցնէր այն երևելի օտարականներուն որ ձմեռը Հռովմ կ'անցընէին : Ասիկա միայն լեզուաց դասատու չէր այլ առաջին կարգի Հռովմայեցի գիտնական մը : Գեռ երեսուսարդ, սքանչելի գէմբով, վաղեմի բնութեամբ, փառաւորապէս երեցած էր յեղափոխութեան այն փորձերու մէջ որ Հռովմայեցի հանրապետականները բեր էին իրենց երկրին մէջ ազատութիւնը յարուցանելու համար : Թողովրդեան դատարաններէ մին էր, գրեթէ այն ատենուան Բիանցին : Գաղղիայուց մէ գրգռուած, և Մաքէ ու Նարբոլցիներէ խեղդուած, այս կարճատև ապստամբութեան մէջ առաջին գերերէ մին խաղացած էր : Քարիթօլի մէջ ժողովուրդը համոզելով անկասութեան գրոշակը կանգնէր, և հանրապետութեան առաջին պաշտօններէ մին վարեր էր : Սակայն գիմարդու-

թեան ժամանակ հալածուած և բանտարկուած իր ազատութիւնը Գաղղիացոց հոն հասնելով գտեր էր, որոնք հանրապետականները ազատեր բայց հանրապետութիւնը դրաւեր էին :

Այս Հռովմայեցին ազատ և հայրենական Գաղղիան կ'պաշտէր : Տիրապետութիւնը կ'ատէր և ես գեռ երեսուսարդ նոյն զլացումները ունէի : Մեր մէջ գաղափարներու այս նմանութիւնը երևելու շատ չուշացաւ : Տեսնելով թէ ինչ մանկային և միանգամայն վաղեմի աշխուժով կ'եռայի ազատութեան ձայներէ երբ միատեղ կ'կարդայինք Մօնթի բանաստեղծին բոցավառ տողերը, և Ալֆիէրիի հանրապետական տեսարանները հասկցաւ որ կրնար ինձի բացուիլ, և այսպէս աւելի իր բարեկամը քան թէ աշակերտը իղայ :



Ազատութիւնը մարդուս նուիրական կարծիքը ըլլալուն ապացոյցը այն է որ երեսուսարդութեան առաջին երազն է, և մեր հողույն մէջ չ'մարիւր մինչև որ սիրտը չ'ծերանայ և միտքը չ'վհաւաի : Չկայ քսան տարեկան ոյի մը որ հանրապետական չ'ըլլայ . չ'կայ նաև մաշած սիրտ մը որ գերի չ'ըլլայ :

Քանի քանի անգամ Ալիլա Բանֆիլիի բլրան վրայ դացինք ուրկէ կ'տեսնուի Հռովմ, իր գմբէթները, աւերակները, Թիպըրը որ աղտոտ, լռիկ և ամօթով կ'սողայ Բօնթէ Բօթօի կամարներու տակէ և ուրկէ կ'լսուի աղբիւրներուն հեծող մրմունջը և ժողովրդեան գրեթէ յամր ոտնաձայնները որ այն անապատ փողոցներու մէջ լուռութեամբ կ'անհետին : Քանի քանի անգամ գառն արցունքներ թափեցինք, ամէն տեսակ բռնաւորութեանց զոհուած այս աշխարհիս վիճակին վրայ, ուր փիլիսոփայութիւնը և ազատութիւնը վայրկեան մը Գաղղիոյ և Կոտալոյ մէջ վերածներ էին միայն ապականուելու, մատնուելու և արհամարհուելու համար :

Այս կարծիքներու ազդեցութեան ներքեւ Հռովմ՝ իր պատմութիւնը և յիշատակարանները սերտեցի: Առտու կանուխ առանձին կ'ելլէի, դիտողին միտքը ցրուող քաղաքին շարժումը դեռ չ'սկսած, և թեև տալ Հռովմայ պատմադիրները, բանաստեղծները և նկարադրողները առնելով, կ'նստէի կամ կ'թափառէի քորովի, Քօլիզէի անասպատ աւերակներու վրայ: Մերթ կ'դիտէի, մերթ կ'կարդայի կամ կ'մտածէի: Այսպէս Հռովմայ վրայ սերտ ուսումներ կ'ընէի: Ասիկա պատմութեան լուսադոյն դասս եղաւ: Հնութիւնը՝ ձանձրութիւն մը ըլլալու տեղ, զդայցմունք եղաւ ինձ համար: Այս ուսման մէջ հակումէս զատ յատկապէս չէի հետեւեր: Ա'երթայի ուր որ քայլերս կ'տանէին զիս: Հին Հռովմէն նոր Հռովմ կ'անցնէի, Բանթեօնէն Աէոն Թի պալատը, Ռիլատիոսի բնակարանէ Թիպիւրի և Բաֆաէլի տունը: Բանաստեղծք, նկարիչք, պատմադիրք, երևելի մարդիկ, ամէնքը խառն առջևէս կ'անցնէին. վայրկեան մը աւելի կ'դիտէի զանոնք՝ որ այն օրը աւելի կ'հաւնէի:

Ժամը տասն մէկին, նախաձաշի համար նկարչին տան պղտիկ խցիկը կ'մտնէի: Աշխատութեան սեղանիս վրայ կարդալով կտոր մը հաց և սրանիւր կ'ուտէի. դաւաթ մը կաթ կ'լամէի և մինչև ձաշի ժամը զոր սանուտերիս կիներ և աղջիկը կ'պատրաստէին, կ'աշխատէի, կ'նշանակէի և կ'գրէի: Աերակուրէն ետքը, դարձեալ նոր տեղեր կ'երթայի և դիշերը միայն կ'դառնայի: Քանի մը ժամ նկարչին ընտանեաց հետ խօսակցութիւն և դիշերային երկար ընթերցանութիւններ վերջ կուտային այս խաշաղ օրերու: Անկերութեանց պէտքը երբէք չէի զգար, կրնամ ըսել որ առանձնութենէս կ'ախորժէի: Հռովմ և հոգիս կ'բաւէին ինձ: Այսպէս երկար ձմեռ մ'անցուցի հոկտեմբերէ մինչև հետեւեալ ապրիլ, օր մը յոգնութիւն և ձանձրոյթ չ'զղալով: Այս յիշատակներու տպագորութեան ներքեւ տաս տարի վերջը Թիպիւրի վրայ գրեցի:

Հիմա երբ մտքիս մէջ Հռովմայ բոլոր ազդեցութիւնները փընտուեմ, միայն երկու բան կ'դանեմ որ բոլոր միւսերը կ'անհետացնեն կամ անոնց կ'իշխեն: Քօլիզէն՝ Հռովմայեցի ժողովուրդին երևելի դորժը. Սուրբ-Պետրոս կաթօլիկութեան: Քօլիզէն գերմանադիպին ժողովուրդի մը հսկայական հետքն է, որ իր հպարտութեան և դազանական զբօսանաց համար, ամբողջ աղբ մը պարունակող շէնքեր կ'ընէր և որոնք իրենց մեծութեամբ և տեղութեամբ բնութեան գործերու անգամ կ'հաւասարէին: Թիպլըն իր տղմտ եղբրքին մէջ պիտի չորնայ մինչդեռ Քօլիզէն պիտի տիրէ դեռ անոր վրայ:

Սուրբ-Պետրոս մէկ ժամանակի յատուկ, մէկ մասձմունքի, մէկ կրօնքի և ամբողջ մարդկութեան գործն է աշխարհի մէջ: Ասիկա մոլի ժողովուրդ պարունակող շէնք մը չէ, այլ միայն մարդկային բոլոր փիլիսոփայութիւնը, արօթքները, մեծութիւնը և միտքը պարունակելու համար ստեղծուած տաճար մը: Աարծես թէ սրտերը կ'բարձրանան և կ'մեծանան չէ թէ ժողովուրդի մը համեմատութեամբ այլ Աստուծոյ: Պապականութիւնը միայն Միքէլ-Անժ հասկցաւ և Սուրբ-Պետրոսով անոր լամնէ վնեմ և անոնէ կատարեալ մեկնութիւնը տուտ: Սուրբ-Պետրոս ստուգիւ, Քրիստոսի կրօնեց քարերէ բաղադրուած պատուածապոթ թիւնն է: Արթական եկեղեցիներու ձարտարապետները վնեմ բարբարոսներ էին: Միքէլ-Անժ միայն իր ըմբռնումին մէջ փիլիսոփայ եղաւ: Սուրբ-Պետրոս փիլիսոփայական քրիստոնէութիւնն է ուրկէ Հնաշխարհիկ ձարտարապետը, խաւարը կ'վանէ, և ընդարձակութիւն, գեղեցկութիւն, չափակցութիւն, անասպտելի լոյս կ'մտցընէ: Հռովմայ Սուրբ-Պետրոսի անբաղդատելի գեղեցկութիւնը այն է որ միայն զԱստուած իր բոլոր սքանչելիքով ներկայացնելու համար ստեղծուած տաճար մ'է:

Եթէ քրիստոնէութիւնը կորուսի իսկ, Սուրբ-Պետրոս՝ իբր

տիեզերական, մշտնջենաւոր և խորհրդաւոր տաճար պիտի կանգնի զեռ և պիտի յարմարի որ և է կրօնքի որ Քրիստոսի դաւանումին պիտի յաջորդէ, միայն թէ այն կրօնքը մարդկութեան և Աստուծոյ արժանի ըլլայ :

Ասիկա՛ սրբազան գաղափարէ ներշնչուած մարդկային հանձարին երկրիս վրայ շինած ամենէ վերացեալ տաճարն է : Երբ մըտնես, չես դիտեր թէ հին թէ արդի տաճար մ'է ան, չ'կայ բան մը որ աչքդ խտողէ, չ'կայ նշան մը որ միտքդ յոգնեցնէ : Ամէն գաւառութեանէ մարդիկ կ'մտնեն հոն նոյն ակնածութեամբ : Կ'զգաս որ միայն Աստուծոյ գաղափարը բնակող տաճար մը կըրնայ ըլլալ և որ և իցէ ուրիշ գաղափար պիտի չ'պարունակէ :

Փոխէ՛ երէցը, հանէ՛ խորանը, իջեցնուր պատկերները, վերցնուր արձանները, ոչ ինչ փոխուած է, միշտ Աստուծոյ տունն է ան, կամ Սուրբ-Պետրոս ինքնին՝ այն յաւիտենական քրիստոնէութեան մեծ նշանակն է որ իր բարոյականին և սրբութեան մէջ ամէն զարեբու և ամէն մարդկանց կրօնական խորհուրդին շարունակելի լուծումները հիմն ունենալով, մտքին մէջ կ'մեկնուի որչափ որ Աստուած լուսաւորէ զայն, լուսոյ մէջ Աստուծոյ հետ կ'հաղորդակցի, մարդկային խելքին համեմատութեամբ կ'ընդլայնի կ'բարձրանայ, անընդհատ մեծնալով, և բոլոր ազգերը նոյն երկրպագութեան մէջ հաւաքելով, բոլոր աստուածային ձևերով մէկ Աստուած կ'ընէ, բոլոր օրինօք մէկ գաւառութիւն և բոլոր ժողովուրդներով մէկ մարդկութիւն :

Միքէլ-Անժ իրական կաթօղիկութեան Մովսէսն է ինչպէս որ ժամանակին պիտի յայտնուի : Ապագային անկորուստ ասպանը և աստուածացեալ հանձարին Բանթօնը ըրա :

է

Աերջապէս Հռովմ՝ բաւական տեսնելով ուղեցի Նաբօլի երթալ : Աւելի Աիդիլիոսի գերեզմանը և Թասօի որրանը զիւ

դիւթած էին : Միշտ իբր անձինք նկատած եմ քաղաքները, Նաբօլի, Աիդիլիոս և Թասօ է : Կ'թուէր ինձ որ երէկ ապրած էին անոնք և թէ իրենց մոխիրը զեռ գողջ էր : Գեռ հոն չ'հասած անոնց զեղեցիկ և փափուկ հանձարին մէջէն Բողիլիբին Սորանդը, Աեսուֆն ու ծովը կ'տեսնէի :

Մարտին վերջերը Հռովմէն մեկնեցայ թղթատարի կառքով Գաղղիացի վաճառականի մը հետ որ ընկեր փնտուեց ճամբորդութեան ծախքը թեթեցնելու համար : Աիլլէթրիէ քիչ մը հեռու ճամբուն վրայ Հռովմէն Նաբօլի գացող թղթատարին տապալած և զնդակներէ զարնուած կառքին հանդիպեցանք : Թղթատարը, կառապան մը և երկու ձի մեռած ըլլալով՝ մօտակայ խորձիթ մը տարած էին զանոնք : Պատուած թուղթեր և նամակի կտորներ հովտն մէջ կ'թուէին : Աւաղակները, Ապրիլզներու ճամբան փախեր էին և Թերասինի զնդէն Գաղղիացի հեծելազօրաց և հեռակայ խումբեր ժայռերու մէջէ կ'հալածէին զանոնք : Հրացաններու դուռներ կ'լսուէր. բոլոր լեբան վրայ փոքրիկ կայծեր և հրացաններ կ'տեսնուէին : Երբեմն երբեմն ճամբան պահպանող Գաղղիացի և Նաբօլիացի յուսիներու կ'հանդարէինք : Այսպէս կ'մտնէին Նաբօլիոյ թաղաւորութեան մէջ այն ատեն :

Այս աւաղակութիւնը, քաղաքական նպատակ մի ունէր : Մուրատ կ'տիրէր, բայց Քալսայրացիք զեռ կ'զիմարէին, Ֆէրտի նանտոս թաղաւորը Սիկիլիա քաշուած, լեռներու մէջի աւաղակապետներու կ'օգնէր. հռչակաւոր Փրա-Տիափօլօն անոնց զլուխը անցած կ'կուռէր. մարդասպանութիւնը յաղթութիւն կ'նշանակէր : Իսկ մենք Նաբօլիոյ շրջականները միայն հանդարտութիւն և ասպահովութիւն զտանք :

Ապրիլ մէկին հոն հասայ : Քանի մը օր ետքը իմ տարիքովս երիտասարդի մը հանդիպեցայ որու հետ դպրոցին մէջ եղբայրական մտերմութեամբ կապուած էի : Անունը Այօն տր Աիլիէօ էր, իր և իմ կեանքը ծնունդէ մինչև մահ այնչափ մի և նոյն գէպքերու ենթարկուած են որ անոր վրայ խօսեցած կ'ըլլամ՝ գրեթէ ամէն տեղ որ իմ վրայ կ'խօսիմ

է

Մ Ի Զ Ա Վ Է Պ

Ա.

Հուովմ՝ ծեր նկարչին տան մէջ վարած կեանքիս գրեթէ նոյնը
 Նաբոլիոյ մէջ կ'անցընէի, միայն թէ հնութեան աւերակներու մէջ
 թափառելու տեղ, Նաբոլիոյ նեղուցին կամ ծովեզրքին վրայ
 կ'անցընէի օրերս: Իրիկուն հին վանքը կ'ուզայի ուր՝ ՚ի Հնորհո
 մօրս աղպականին հիւրընկալութեան, տանիքին վրայ փոքրիկ սե-
 նեակ մը կ'ընակէի և որուն պատշգամբը ծաղկի ամաններով և
 մազլցիկ տունկերով զարդարուած ծովու, Աէսուֆի, Քասթէլ-
 մարի և Սօրբանթի վրայ կ'բացուէր:

Երբ առաւուսն հորիզոնը յստակ ըլլար, Թասօի ճերմակ տունը
 կ'տեսնէի որ կարասի բոյնի նման, ծովուն ալիքներէ սրաց-
 եալ դեղին ժայռի մը վրայ կախուած էր: Այս տան լոյսը հո-
 գույս խորը կ'ազդէր, և փառաց փայլակի նման հեռուէն երի-
 տասարդութեանս վրայ լոյս կ'սփռէր: Այնչէի այս երևելի մար-
 դուն այն հոմերական տեսարանը, երբ, բանտէն ելած, փոքրե-
 լու նախանձէ և մեծերու զբարտաթեան հալածուած, մինչև իր
 միակ հարստութեան, իր հանձարին մէջ այսպնուած, Սօրբանթ
 կուզայ, քիչ մը հանգստութիւն, սփոփում կամ գթութիւն զրո-
 նելու համար, և մուրացիկի պէս ծպտեալ իր քրոջ կ'ներկայա-
 նայ, փորձելու և տեսնելու համար անոր սիրտը թէ արդեօք պի-
 տի ճանչնայ իր սիրած անձը:

« Իսկոյն ճանչցաւ, կ'ըսէ պարզամիտ պատմադիրը, թէպէտև
 մահուան դեղնութեամբ այլադուեած, ճերմակ մօրօք և պատու-
 ոած վերարկուով էր: Իր բազկաց մէջ այնպիսի խաղաղատա-
 նօք և գթութեամբ նետուեցաւ որ կարծես թէ քերարայի պալա-
 տականաց ոսկհուռ հազուստով կ'տեսնէր իր եղբայրը: Իր ձայ-
 նը երկար ատեն հեծկլտանքէ կ'խեղդուի, սրտին վրայ կ'սեղմէ

իր եղբայրը: Ոտքերը կ'ըլուայ, և խնջոյքի կերակուր պատրաս-
 տել կուտայ: Բայց ոչ մին և ոչ միւսը կրցան կերակուրներու
 դպել իրենց շուրթերը, այնչափ սրտերին վշտով լի էր. բոլոր
 օրը ողբալով անցուցին, առանց բան մը ըսելու, բայց միայն ծո-
 վը դիտելով և մանկութիւնը յիշելով »:

Բ

Ամառուան սիդըն էր օր մը այն միջոցին որ Նաբոլիոյ նեղու-
 ցը՝ իր բլուրներէ, սպիտակ տուներէ, մազլցիկ որթերէ դոցուած
 ժայռերէ և իր երկնքէն աւելի կապոյտ ծովով շրջապատած, կը
 նմանի փրփուրէ ճերմկած կանաչ դառաթի. այն եղանակին որ
 Բօղիլիբի ձկնօրները՝ իրենց խրճիթը այս ժայռերու վրայ ձղե-
 լով և իրենց ուռկանները փոքրիկ անցքերուն բարակ աւաղին
 վրայ տարածելով, ցամաքէն վստահութեամբ հեռանալով դի-
 շերները երկու երեք մղոն հեռու ծովուն մէջ որսալու կ'երթան
 մինչև Քարբիի, Բրօսիտայի և Իշլայի ժայռերուն տակ և Այէթի
 նեղուցին մէջ տեղ:

Ամանք իրենց հետ ուտինէ շահեր կ'առնուն և կ'վառեն ձուկը
 խաբելու համար: Չուկը առաւօտեան լոյսը կարծելով ջրին ե-
 րեսը կ'ելէ: Տղայ մը նաւակին զլուխը նստած, լոխի շահը ա-
 լիքին վրայ կ'ծուէ, մինչդեռ ձկնորսը աչքով ջուրին մէջ թա-
 փանցելով, իր որսը կ'փնտռէ և ուռկանին մէջ կ'առնու զայն:
 Այս կրակները, փուռի կրակարաններու նման կարմիր, ծովու
 երեսին վրայ ծփուս ակօսներով կ'ցոլան, լուսնոյ դուռնին ար-
 ձակած երկար նշոյլներու պէս: Արհակներու ծփումը ճօճել կու-
 տայ զանոնք, և ալիքէ ալիք շրջումը կ'երկարի, մինչև որ առաջ
 ջին կոհակը կրնայ իրեն հետևածին ցոլացնել:

Հատ անգամ բարեկամն և ես, ամբողջ ժամեր կ'անցընէինք, ժայռի մը կամ ժան թագուհւոյն պալատին խոնառ աւերակներու վրայ նստած այս օտարոտի լոյսերը դիտելով և խեղճ ձրկնորսներու թափառական և անհող կենաց վրայ նախանձելով: Նաբօլիոյ մէջ, դիւղին և ծովու վրայ քանի մը ամիս մեր առօրեայ պտղաներու մէջ ժողովրդեան մարդերու հետ սովորական տեսութիւննիս զմեզ ընտելացուցած էին իրենց ձայնաւոր և շէշտող լեզուին որու ձեր բառէն աւելի ազդեցութիւն կուտայ: Նախազդպցումով փիլիսոփայ և կենաց սնտոի աղմուկները գեռ չ'ձանչնալով անոնցմէ յոյնած, կ'նախանձէինք շատ անգամ այն երջանիկ արարչներուն վրայ որ այն ատեն Նաբօլիոյ եղբրք կը վիստային, որոնք օրերնին աւազին վրայ իրենց փոքրիկ նաւակին շուքին տակ կ'անցընէին, իրենց դնայուն բանաստեղծներու տաղերը մտիկ ընելով, և իրիւրնը ծովու եղբրքը սարփինայի մը տակ իրենց դասի աղջիկներուն հետ Թարանթան պարելով: Անոնց սովորութիւնները, բնութիւնը և կեանքը աւելի ազէկ կը ձանչնայինք մեր ընտիր ընկերութիւններէ ուր երբէք չէինք յաճախեր: Հաճելն էր մեզ այս կեանքը որ կ'ըմբռնէր մեր հոգւոյն բուռն կիրքերը որ անօգուտ տեղ երիտասարդներու երեւելայութիւնը կ'մաշէն բազդին զիրենք դործելու և մտածելու հրաշիրելէ շատ յառաջ:

Բարեկամն քան տարեկան էր, ես ալ տանն և ութ. երկուքնիս ալ այն հասակին մէջն էինք որ ներելի է երազները իրականութեան հետ խառնել: Որոշեցինք այս ձկնորսներու ծանօթանալ և քանի մը օր անոնց կեանքը վարել միատեղ նստելով: Այս դաղջ և լուսաւոր դիշերները առաջատարն տակ, կոհակներէ տատանող նաւակին մէջ անցընելով աստղալից երկնից տակ որ բնութեան ամենէ խորհրդաւոր հաճոյքներէ մին կ'ըլտէր մեզ, և զոր պէտք էինք ձանչնալ զոնէ պատմելու համար:


Ազատ, և մեր դործերու և բացակայութեան վրայ համար տալու պէտք չունենալով, հեռեկալ օր երազածնիս իրացուցինք: Թուրքալով Մարձելինայի եղբրքը որ կ'տարածի Մինչև Ախրզլիոսի գերեզմանը, Բօլիւիք լերան ստորոտը և ուր Նաբօլիոյ ձկնորսները աւազին վրայէ նաւակին քաշելով ուղկանին կ'նորեն, հոն դեռ ուժեղ ձերունի մը սեսանք: Պայծառ դոյներով նկարուած նաւակին մէջ որսի դործիքները կ'գնէր և նաւակին խելն վրայ Սուրբ-Յրանչիսկոսի փոքրիկ պատկերը կար: Տանն երկու տարեկան տղայ մը իր միակ թիալարը այն միջոցին նաւակին մէջ կ'բերէր սլանիք որ ծովու դայրախաշներէ աւելի փայլուն և ոսկեպոյն էր, նոյնպէս քանի մը թուղ և հողէ ամանով ջուր:

Ծերունոյն և տղուն կերպարանքը մեզ գրաւեցին: Խօսք բացինք: Չկորսը ծիծաղեցաւ երբ առաջարկեցինք որ մեզի երթ թիալար ընդունի իրեն հետ ծովու վրայ ընկերանալու: Երբ ըսաւ, թիալարելու յարմար ձեռքեր չունիք: Չեր սխառնիլ ձեռքերը փետուր և ոչ թէ տախտակ բանելու համար ստեղծուած են. ծովու վրայ զանոնք կարծբայնելը մեզք է »:

« Երիտասարդ ենք, պատասխանեց բարեկամն, և արհեստ մը ընտրելէ ստաջ ամէն բան կ'ուզենք փորձել. ձերը կ'սիրենք, վասն զի ծովու վրայ և երկնից տակ է »:

« Երաւունք ունիք, պատասխանեց ձեր նաւավարը: Արհեստ մ'է որ սիրաւ դո՛հ կ'ընէ և միտքը՝ վստահ սուրբերու պաշտպանութեամբ: Չկորսը ուղղակի երկնից պահպանութեան տակ է: Մարդս չ'գիտեր թէ հովը և ալիքը ուսկից կուղան: Խարտոց և հարթիչ գործաւորին ձեռաց մէջ են, հարստութիւն և շորհք, թաղաւորին, խիկ նաւակը միայն Աստուծոյ »:

Չկորսին այս բարեպաշտ փիլիսոփայութիւնը աւելի հաստատեց մեր անոր հետ նաւելու դիտաւորութիւնը: Երկար ընդդիմութենէ վերջը յանձնառու եղաւ ձերը: Երկուքնիս ալ օրը երկու քարէն վճարել որոշեցինք մեր վարժութեան և ուսելիքին համար: Այս որոշումները ընելէ վերջը տղան Մարձելինա զրկուեցաւ հացի, զինուոյ, սլանիքի և պտուղի նոր պաշար առնելու: Երիկունը նաւակը ծով իջեցնելու օրներցինք և մեկնեցանք:



Առաջին գիշերը սքանչելի եղաւ : Ծովը Չվեցցէրից լեռ-
ներէ շրջապատած լճի մը նման հանդարտ էր : Արչափ որ եղեր-
քէն կ'հեռանայինք Նաբոլից պալատին պատահաններու և նա-
ւահանգստին կրակէ լեզուներու անհետիլը կ'տեսնէինք հորիզոնին
թանձր գծին տակ : Փարոսները միայն եղերքը կ'ցոյցէին , բայց
անոնք ալ կ'դեղնէին Վէսուփի հրաբուխէն ելած թեթև կրակէն :
Մինչդեռ ձկնորսը ուռկանը կ'թողուր և կ'բաշէր , և տղան կէս
ննջած կ'ձգէր որ շահը երեքայ իր ձեռքին մէջ , մենք ալ երբեմն
երբեմն թոյլ շարժում մը կուտայինք նաւակին և հիացումով
միտ կ'գնէինք ջուրին քաղցրաձայն կաթիլներուն որ մեր թիերէն
մղուելով դաշնակնաբար ծովու մէջ կ'ցայտէին արծաթ ամանի
մէջ խիտող մարդարիաներու նման :

Երկար ատենէ ՚ի վեր Բողիլբի ծայրը կրկներ , Բուզլի ,
Պայիայ ծոցը անցեր էինք , նոյնպէս Այյէթի ծոցին նեղուցէն որ
Միզէն հրուանդանին և Բրօսիտա կղզոյն մէջ տեղն է : Քունը
մեր արեւանայ վրայ ծանրացաւ երբ ծովուն խորը հասանք :
Տղուն քով նստարաննուս տակ պառկեցանք :

Չկնորսը նաւակին մէջի ծալումով ծանր առապատը մեր վրայ
ծածկեց : Այսպէս երկու կոհակի մէջ քնացանք անդոյսարար
տատանուելով ծովէ մը որ հազիւ թէ կ'ձուեր կայմը : Տերեկ էր
երբ արթնցանք : Պայծառ արեղակ մը , լուսոյ ժապաւէններով
ծովը կ'դուռնարէր և կ'ցալար անձանձով ծովեզեր մը սպիտակ
առններու վրայ : Մեղմ ղեփիւռ մը որ այն երկրէն կ'փչէր՝ մեր
զլիւտն վրայի առազատը կ'տատանէր և կ'մղէր մեր նաւակը ծո-
ցէ ծոց և ժայռէ ժայռ : Ասիկա Իշիա գեղեցիկ կղզոյն ատամ-
նաձև և սրածայր եզերքն էր , ուր վերջը այնչափ երկար պիտի
բնակէի և պիտի սիրէի զան : Լուսոյ մէջ լողացող այս կղզին
առաջին անգամ կ'երևէր ինձ ծովէն ելլելով և կապոյտ երկնից
մէջ կորուսելով ուր կարծես թէ ծլած է ամառ գիշեր թեթև
քնոյ մէջ րանաստեղծի մը երազով :

Իշիա կղզին՝ որ Այյէթի ծոցը Նաբոլից ծոցէն կ'զատէ , ինք
ևս անձուկ նեղուցով մը Բրօսիտա կղզիէն կ'զատուի , սրածայր
լեռ մ'է որու սպիտակ և ստեպ շանթահար դաղաթը՝ իր փըշ-
րուած ակունները դէպ ՚ի երկինք կ'բարձրացնէ : Եր կողերը հո-
վիաներէ , խոռոչներէ , վաակներու հասանքէ վերէն ՚ի վար ծած-
կուած և մութ կանաչ շաղանակենիներէ շրջապատուած են : Ծո-
վու խիտ մտտ և ալեքներու վրայ հակուլ բլուրներու վրայ խըր-
ճիթներ և գիւղակներ կան տեղ տեղ այգիներու որթերու տակ
պահուած : Ամէն մէկ կղզի իր յատուկ նաւարկութեան ունի : Այս-
պէս կ'կոչեն այն նաւահանգիստը՝ ուր կղզւոյն ձկնորսներու նա-
ւերը և քանի մը լաստերու կայմեր կ'տատանին : Առազատա-
կալները ծովեզրի ձաւերուն և որթերուն կ'դալին : Արեւն զատի-
վարէն թաղուն խոռոչներու մէջ , բրգաձև բլուրներու վրայ կան-
գուն , շաղանակենիներու յենած , ստուերաձիգ կաղնիներու բազ-
մութենէ շրջապատեալ , իբր սպիտակ կամարներէ զարդարուն ,
այս առներէն ամէն մէկը բանաստեղծի կամ սիրողի մը երազին
երևակայական բնակարանը կրնայ բլլալ : Մեր աչերը չէին յա-
ղեր այս սեսարանէն : Եղերքը ձուկերու առատութիւն կար և
ձկնորսը յաջող գիշեր մը անցուցեր էր : Աղբոյն փոքրիկ մէկ
ծոցը ելանք որպէս զի շրջակայ աղբուրէ մը ջուր առնունք և
ժայռերու տակ փոքր ինչ հանդչինք : Արևը յարեմուտս խոնար-
հելու ատեն՝ Նաբոլի վերադարձանք թիավարի նստարաններու
վրայ պառկած : Այսմէն նաւակին խելին կողմը դրուած քառ-
կուսի առազատ մը՝ որու չուանը աղան բռնած էր , կ'բաւեր
մեզ Բրօսիտայ Միզէնի հրուանդանին ժայռերէն անցնիլ և ծո-
վուն ջուրը մեր նաւակին տակ ՚ի փրփուր հանիլ :

Ծերունի ձկնորսը և աղան մեր աջակցութեամբը առաջին վը-
րայ քաշեցին նաւակը և ձուկերու զամբիւղները Մարձելիսայի
ժայռերու ներքև գտնուող փոքրիկ տան շտեմարանը տեղաւորեցին :

1877

Հեռուեալ օրերը մեր նոր դործը վերստին կ'սկսէինք ուրախ զուարթ : Նաբօլոյ բոլոր կոհակները շարունակ փրփրեցոյցինք : Այսպէս Գարրի կղզին տեսանք՝ ուր երեակոյութիւնը գեռ Տիբէրի ստուերը կ'վանէ : Տեսանք Քիւմ և իր տաճարները, խիտ դափնիներու և վայրի թղենիներու տակ ծածկուած, Պայիա և իր նսեմ վայրերը՝ որ երբեմն Հռովմայ երխտասարգութեան և հեշտութեանց սպաստանարան էին, արդ անոնց պէս ծերացած էին . Բօրթիչի և Բօմֆէիա Աէսուֆի լավային և մոխրին տակ կ'ժայտէին . Գասթէլամարն ալ տեսանք, որու զափնիները և վայրի շագանակնիներու բարձր և մթին անտառները ծովու մէջ բեկրեկելով նաւահանգստին յարադոչ ալկրները մութ կանաչի կ'դուռաւորէ : Ծեր նաւավարը ամէն տեղ ձկնորսներու քանի մը ընտանիքներ կ'ձանչնար, որոց մօտ հիւրընկալութիւն կ'դանէինք երբ ծովը անհանդարտ ըլլար և Նաբօլի վերադառնալու արդեւք մը պատահէր :

Նրկու ամիսի չափ պանդոկ չ'մտանք : Ժողովուրդին հետ օղին մէջ կ'ապրէինք, ժողովուրդին պարկեշտ կեանքով : Մենք ալ բնութեան յարմարելու համար ժողովուրդին նմանած էինք : Գրեթէ իր հագուստով, իր լեզուն կ'խօսէինք, և իր սովորութեանց պարզութեամբն իր բնիկ զգացումներու պարզութեան հաղորդ կ'ընէր մեզ :

Մակայն այս փոփոխութիւնը բարեկամու և խմ վրայ այնքան չէր ազդեր : Նրկուքնիս ալ զիւզը սնած՝ յեղափոխութեան փոթորիկներու ատեն, երբ մեր ընտանիքը կամ ընձեր կամ ցըրուեր էին, մեր սղայութեան ժամանակ զիւղական կեանք վարել էինք . ան՝ Նրէզիլոստանի լեռներու մէջ գայեակի մը քով՝ որ մօրը բանտարկութեան ատեն իր քով առած էր զինք . ես ալ Մաքոնէի բլուրներու վրայ զիւղական փոքրիկ բնակարանին մէջ ուր հայրս և մայրս իրենց վտանդի ենթակայ բոցնը հաստատեցին :

Մեր լեռերու հովիտին, երկրագործին և Նաբօլոյ նեղուցին մէջ դանուող ձկնորսին մէջ եղած սարբերութիւնը միայն վայրը, լեզուն և արհեստն էր : Ահօսը կամ ալեքը մի և նոյն խորհուրդները կ'ներշնչեն մարդոց որ կ'ձեռքեն երկիրը կամ ծովը : Բնութիւնը նոյն լեզուն կ'խօսի անոնց որ կ'բնակին իր հետ լեռան կամ ծովու վրայ :

Այս զգալով այն պարզ մարդոց մէջ օտար չէինք : Բնազդումներու նմանութիւնը մարդոց մէջ ազգականութիւն է : Անոնց այս միօրինակութիւնը անդամ զմեզ թմբեցնելով կ'հաճեցնէր : Յստով կ'տեսնէինք ամառուան վերջերու յառաջանալը և աշնան ու ձմեռուան մօտիլը որմէ վերջը պէտք էինք հայրենիք վերադառնալ : Մեր ընտանիքը կ'սկսէին զմեզ կանչել անհանդիստ կերպով : Ըստ կարի վերադարձի զաղափարը կ'վանէինք մեր մտքէ և կ'ուղէինք երեակոյցել որ այս կեանքը երբեք վերջ պիտի չունենար :

Ե

Մակայն սեսպտեմբեր իր անձրևով և որոտմամբ սկսաւ : Ծովը նուազ հանդարտ էր : Մեր արհեստը աւելի գժուար երբեմն վտանգաւոր կ'ըլլար : Զեփիւռները կ'սկսէին ցրակ, ալեքը կ'փրփար և շատ անդամ իր ցայտումներով մեզ կ'թրջէր : Նաւահանգստին վրայ դիմած երկու հասարակութիւն վերարկուներ ունէինք, զորս Նաբօլոյ նաւարարները և լաւարձիները ձմեռը ուսերնուն վրայ կ'նետեն : Այս վերարկուներուն լայն թիւերը մերկ բաղուկներու քովը կ'կախուին : Գլխամոցը, օղին յարմար, կամ ետեւը կ'երերայ կամ ճակտին վրայ ինկած, որով ս զի նաւարարին գլուխը կամ անձրևէն և ցուրտէն պատսպարէ, կամ թողու որ հովը և արևուն ճառագայթները իր թրջած մազերու մէջ խաղան :

Օր մը Մարձեւիւնայէ մեկնեցանք հանդարտ ծովով, զոր թեթև քամի մը անդամ չէր կ'նձուեր, Քիւմի եղբրքը առաջին թունոս և կարմրաթիւեր որսալու, զորս հոտանքները նոյն եղանակին կը

մղեն հոն : Առաւօտեան կարմրագոյն մէզը եզերքը կ'սլաակէր , որով երեկոյեան հով մը գուշակել կուտար : Կ'յուսայինք կանխել հոմը , և թանձր ու հանդարտ ծովը չ'զայրացած Միզէնի հրուանդանը կրկնելու ժամանակ ունենալ : Արտը առատ էր : Ազեցիկը քանի մը անդամ ևս ուռկաններ ձղել : Հովը յանկարծ հասաւ : Էքոմէօի գաղաթէն , ահապին լեռ մը որ Իշխան կ'սլատէ , ինկաւ այնպիսի աղմուկով և սաստկութեամբ որ կարծես թէ նոյն ինքն լեռը ծովուն մէջ կ'տապալէր : Նախ մեր շուրջը գտնուած ջուրին երեսը հարթ հաւասար ըրաւ , ինչպէս որ երկաթէ բահը հողին կոշտը կ'հարթէ և ահօսը կ'շաղկէ , յետոյ ալիքը իր ապշութենէ սթափած քանի մը վայրկեանի մէջ մըմաւելով ուռեցաւ , այնպիսի բարձրութեամբ՝ որ երբեմն եզերքն ու կղզիները կ'սլահէր մեղմէ : Թէ ցամաքէն և թէ Խշիպէն հեռի և արդէն Միզէն հրուանդանը ու Բրօսիտա յուսական կղզին զատող նեղուցին կէսը հասեր էինք : Մէկ միջոց ունէինք բռնելիք . սրտշեցիկը նեղուցին մէջ մտնել , և եթէ անցնելու յաջողէինք ձախ կողմը Պայիա նեղուցը անցնիլ և ապաստանիլ իր հանդարտ ջուրերու մէջ :

Ալիքի մը դաղաթէն՝ ուր նաւակին հաւասարակշուութիւնը վայրկեան մը փոփոխէ մըրկին մէջ զմեզ կախեց , ծեր ձկնորսը չ'վարանեցաւ , իր շուրջը արագ ահնարկ մը ձղեց , նման այնպիսի մարդու մը որ ծառի մը վրայ կ'ելէ կորսուած ճամբան փնտռելու . յետոյ ղեկին դիմեց . « Թիերնուդ , տղաքներ , պոռայ , պէտք է որ դէպ 'ի հրուանդան թիալարեներ հովէն աւելի շուտ : Եթէ մեզմէ արագ հասնի , կորսուած եմք » : Հնազանդեցանք ինչպէս որ մարմինը բնազդումին կ'հնազանդի :

Աչերնին անոր աչերուն յարած՝ իր ուղղութեան արագ նշանը փնտռելու համար միջին նստարաններու վրայ ձուեցանք , և մերթ բարձրացող ալեաց վրայ դժուարաւ ելլելով , մերթ անոնց փրփուրովը իջնող կոհակներու խորը գահավիժելով , կ'ընայինք մեր անկումը մեղմը ջրին թիերով դիմադրելով : Աւթ կամ տասը մէկ մէկէ աւելի ահագին ալիք նեղուցին ամենէ անձուկ տեղը նետեցին մեզ : Բայց հովը , ճիշդ նաւավարին ըսածին պէս ,

մեղմէ կանխած էր , և հրուանդանին ու կղզւոյն ծայրին մէջ մտնելով այնպիսի զօրութիւն մը ստացած էր՝ որ բուռն լավայի հնչիւնով կ'կատողեցնէր ծովը , և ալիքն ալ փախչելու բաւական տարածութիւն չ'դոտնելով զինքը մղող փոթորիկին առջև՝ կ'հաւաքուէր , կ'բացուէր , կ'հոսէր , յիմար ծովու պէս ամէն կողմ կ'սփռուէր , և չ'կրնալով նեղուցէն փախչիլ , Միզէն հրուանդանին սրածայր ժայռերու դէմ սոսկալի հարուածներով կ'բաղկէր , և հոն փրփուրէ կոթող մը կ'վերցնէր որու փոշին մինչև մեր վրայ կ'դառնար :

Ը

Անմտութիւն էր նոյն անցքէ անցնելու փորձել դիւրաբեկ նաւակով մը զոր փրփուրի պարզ հոսանք մը անգամ կրնար ընկղմել : Փրփուրէ կոթողով լուսաւորուած հրուանդանին վրայ ձկնորսը նայուածք մը շրջեց զոր երբեք պիտի չմոռնամ . վերջէն խաչակնքեց և գոչեց . « Անցնիլ անկարելի է , ծովու մէջ վերադառնալ ալ աւելի . միայն մէկ միջոց կայ . Բրօսիտա հասնիլ կամ կորսուիլ » :

Որչափ որ նորեկ էինք ծովու կրթութեան մէջ , սակայն այս տեսակ գործի մը դժուարութիւնը կ'զգայինք : Հրուանդանին դէմ ուղղեցինք մեր ընթացքը ուր հովը կ'մղէր զմեզ : Մեզն հեռ փախչող ծովուն կ'հետևէինք և ալիքները զմեզ մինչև իրենց գաղաթը կ'բարձրացնէին . այսպէս չէին յաջողեր զմեզ իրենց բացած անդունդներու մէջ գահավիժել : Բրօսիտայի երեկոյեան լոյսերու փայլելը մեր աջ կողմը կ'տեսնէինք ուր հասնելու համար պէտք էինք խոտորնակի ալիքները ճեղքելով սահիլ դէպ 'ի եզերք կոհակներու ձորերու մէջէ միշտ անոնց դարձնելով նաւակին կողմ , և ծայրերը դէպ 'ի հով : Այսու ամենայնիւ հարկը չէր թողուր մեզ վարանիլ : Ձկնորսը նշան ընելով որ թիերնիս բուռնէք , հետևող կոհակի մը միջոցին օգուտ քաղելով ղեկը դարձուց , դէպ 'ի Բրօսիտա ուղղուեցանք և նաւեցինք ծովային փո-

տի տերևի մը նման զոր ալիք մը ուրիշ ալիքի կ'մղէ, և կոհակ մը կոհակէ կ'առնու:

Թ

Ընթացքնիս մեղմ էր և գիշերը հասած: Փռչին, փրփուրը, ամպերը՝ զբոս հողմը քայքայուն բեկորներով՝ նեղուցին վրայ կը զարձնէր, մթութիւնը կ'կրկնապատկէին: Ծերունին հրամայեց սղուն որ իր ռէտինէ ջահերուն մին վառէ, ասիկա կամ ծովու խորերու մէջ իր ընթացքը լուսաւորելու համար էր, կամ Բրօսիտայի ձկնորսներու իննացնելու որ նեղուցին մէջ նաւ մը կորստեան վիճակի մէջ կ'դանուէր և թէ այն նաւակը կ'հայցէր չէ թէ անոնց օդու թիւնը հապա աղթքները: Սքանչելի և տըխուր էր այն խեղճ՝ սղուն տեսքը, մէկ ձեռքով պղտիկ կայմին փաթթուած և միւսով զլետուն վրայ վերցնելով այն կարմրափայլ ջահը, որու բոցը և շողին հողմէն կ'ոլորուէին և կ'այրէին իր մատերն ու մաղէրը: Այս երեքուն լոյսը ալիքներու գողաթը երևելով, և անոնց խորութեան մէջ անբերութեանսով, միշտ մտրելու պատրաստ և միշտ անշիջելի վիճակի մէջ նշանակ մ'էր նայ չորս անձերու կենաց որ այն գիշերուան տանջանաց մէջ ազատութեան և մահու գէմ կ'կոտէին:

Ժ

Երեք ժամ՝ որոնց վայրկեանները զերեք չափով մտածումներու տեղումները ունին, այսպէս անցան. լուսինը երեցաւ և սովորականին պէս հողմն տելի բուն եղաւ: Եթէ ամենափոքր սուազատ մ'ունենայիր, քսան անգամ զմեզ կործանած պիտի բլար: Թէև նաւուն ցած ծայրերը փոթորկին այնչափ ենթակայ չէին բայց կային վայրկեաններ՝ ուր կ'կարծէինք թէ մեր ողջ

նափայտը ալիքներէ կ'խորաակուէր և զմեզ ծառէ ինկած չոր տերևի մը պէս առկին անդին կ'զարձնէր: Նաւերնիս ջրով լեցուեցաւ և չէինք հասներ շուտ մը պարպել զայն: Այսին վայրկեաններ՝ ուր կ'զգայինք թէ նաւակը կ'ընկողմէր նման այն դադազին՝ որ փոսին մէջ կ'իջնայ: Ջրին ծանրութիւնը աւելի անհասկանազանգ կ'ընէր նաւը սրով կոհակներու մէջ վեր ելլելու կ'զանդադէր: Մանրերկրորդ մը յապաղում, և ահա ամէն բան լմնցած կ'ըլլար:

Ծերունին առանց խօսելու արտասուալի աչերով նշան բրաւ որ նաւուն բոլոր բեռերը ծովը նետենք: Ջրի ամանները, ձուկի զամբիւզները, երկու հաստ սուսպասները, երկաթէ խարխիւր, պարանները, մինչև հազուստներու ծանր ծրարները, մեր հաստ բրդէ վերարկուները, բոլորն ալ ծով նետուեցան: Խեղճ նաւավարը, վայրկեան մը իր բոլոր հարստութեան լողալը գիտեց. նաւը վերստին ելաւ, և թէ թէ՛ ալիքներու գողաթէն սրացաւ, բեռէն ազատած նծոյզի մը պէս:

Անզգայաբար նաւազ աղմկալի ծովու մը մէջ մտանք որ Բրօսիտայի արևմտեան ծայրէն քիչ մը պատապարուած էր: Հողմը թուլցաւ, ջահին բոցը մեծցաւ, լուսինը ամպերու մէջէն կապտազոյն ծակ մը բացաւ. ալիքները երկնալով հանդարտեցան և գլուխնուս վրայ դուալէ գազրեցան: Քիչ քիչ ծովը կարճ և թաքչուն եղաւ գրեթէ հանդարտ ծոցի նման, և Բրօսիտայի ժայռին սև ստուերը հօրեզոնին գիծը կտրեց մեր սուջև: Ազգայն ծոցը ձևայնող ջուրերու մէջ էինք:

ԺԱ

Գէպ 'ի եզրը ծովը խիտ աղմկալի էր: Նաւահանդիստը փրկուող համար, պէտք էինք յանձն առնուլ կղզիէն հեռանալ իր խութերու մէջ: « Հանդարտեցէք, տղաքներ, ըսաւ ձկնորսը ջահին լուսովը ճանչնալով եղերը, Աստուածածին մեզ ազատեց:

Յամարքին մօտ ենք, և այս գիշեր տանս մէջ պիտի պառկինք» :
 Կարծեցիկն որ խելքը կորուսեր էր, վասն զի Մարտիկոսայի մէջ
 իր մտքն շտեմարանէն ուրիշ բնակարան ունենալու չէինք զիտեր
 և աւտուանէ յառաջ հոն դառնալու համար պէտք էինք նեղու-
 ցը մանել, հրուանդանը կրկնել, և վերստին դէմ կենալ այն
 մահուոյ ծովուն՝ որմէ հաղիւ ազատած էինք : Բայց անկիւ մեր
 զարմացման վրայ կ'ծիծաղէր, և մեր աչաց մէջէ՛ գուշակելով
 մեր մտածումը, « Մի վախնաք, երեսասարդներ, կրկնեց, պիտի
 հասնինք առանց ալիքէ մը թրջուելու » : Աւերջէն բացատրեց թէ
 Բրօսխապցի էր ինք . թէ կղզւոյն այս եզերքը դու իր հօրը եւր-
 ճիթը և պարտէզը ունէր, և այս միջոցին իսկ, իր աչքը կինը
 աղջիկ թողան հետ Պէքիտայի քոյրը, և երկու ուրիշ փոքր աղաք-
 ներ, իր տան մէջ թուղերը կ'չորցնէին և որթերը կ'կթէին ու-
 բոնց խաղողները ինք հարօլիոյ մէջ կ'ծախէր : « Քանի մը վայր-
 կեան ևս թիալարեցէք, յաւելցուց, և աղբիւրին ջուրը պիտի
 խմենք, որ Իշխայի գիւնիէն աւելի յստակ է » :

Այս խօսքերը ոյժ տուին մեզ, միզնի մը չափ սեղ ևս թիա-
 վարեցինք, Բրօսխապցի աջ կողմն փոփոքացող ափանց երկարու-
 թեամբ : Երբեմն երբեմն տղան իր ջահը կ'բարձրացնէր և կ'որո-
 բէր, որ իր սխտը լոյսը ժայռերու վրայ կ'զարնէր, և ամէն սեղ
 անմատչելի պատ մը կ'տեսնէինք : Աւերջուպէս կրանիթեայ ժայ-
 ուի մ'եսեւը՝ որ պատնէշն պէս ծովու մէջ կ'յառաջանար, դիտե-
 ցինք որ ժայռը կ'իջնէր և կ'փորուէր բակի պատի ձեղքուածքի
 պէս . զեկը դէպ 'ի եզերք զարձուց զմեզ . երեք վերջեն կահակ
 մեր յոգնած նաւը երկու խուժի մէջ նետեցին ուր փրփուրը կը
 բզզար ցած ծովու վրայ :

ԺԲ

Նաուան զլուխը ժայռին դպելով, չոր և հնչող ձայն մը հա-
 նեց պարսպ սեղ իխելով կորուող տախտակին ձայնիւնին նման :

Ծովուն մէջ ցատկեցինք, պարանի մը մնացորդով նաւակը խա-
 բրօսեցինք, և հետևեցանք ձերուանոյն ու տղան որ մեզ կ'ա-
 ուջնորդէին :

Ժայռին վրայէ ելանք տեսակ մը անձուկ սանդուղէ մը՝ զոր
 սողոցը ժայռին մէջ անհարթ կերպիւ փորած էր ծովու ջուրե-
 րէ բոլորովին սահուն աստիճաններ : Այս կարծր ժայռէ սանդու-
 ղը՝ որ երբեմն անկոխելի էր, լմնցած էր քանի մը կեղծ աստի-
 ճաններէ որոնք շինուած էին երկայն ձողերու ծայրեր պատին ծա-
 կերուն մէջ մեկելով և անոնց վրայ հին նաւերու ձիւթով ծած-
 կուած տախտակներ կամ չոր տերեւներով ծածկուած շաղանակե-
 նիի ձիւղեր սփռած էին : Այսպէս յամբարայլ չորս կամ հինգ
 հարիւր աստիճան ելելէ վերջը՝ փոքրիկ բակի մը մէջ դանուե-
 ցանք՝ զոր մոխրագոյն քարերէ պատ մը կ'ըջապատէր : Բակին
 խորը երկու մութ կամարներ կ'բացուէին որոնք շտեմարանի ուղին
 կերակէին : Այս միասպաղաղ կամարներու վրայ երկու ցած և բո-
 լորածև կամարներ տանիքով յարկ մը կ'կրէին՝ որուն շուրջը
 խնկեցիկ և շահասպարամի ամաններով զարդարուած էին : Ամարնե-
 րուն տակը կ'տեսնուէր դեղջիական ձեմեղիք մը՝ ուր լուսնի նշոյլ-
 ներով կախուած կ'փայլէին ոսկի կանթեղներու նման եզիպտա-
 ցորեններ :

Ազէկ չմիացած տախտակներէ դուռ մը այս ձեմեղիքին վրայ
 կ'բացուէր : Աջ կողմն դետինը՝ որու վրայ տուճը անհաւաստ-
 րապէս շենուած էր՝ մինչև ձեմեղիքին բարձրութեամբ կ'ելէր :
 Մեծ թղնի մը և որթերու քանի մը ոլորուն արմեր անկէ տան
 ծայրին վրայ կ'հակէին իրենց տերեւները և պտուղները ձեմեղի-
 քին մուտքին վրայ տարածելով և ձգելով երկու կամ երեք ձիւ-
 ղեր մինչև կամարներու յետմ պատին վրայ : Իրենց ձիւղերը
 կետով կ'վանդակէին երկու ցած պատուհաններ՝ որոնք այս տե-
 սակ մը պարտէզին վրայ կ'բացուէին, և եթէ այս պատուհան-
 ները չըլլային, այս միասպաղաղ, քառակուսի և ցած տունը, այն
 եզերքին մոխրագոյն ժայռերէ մէկը, և կամ կարծրացած լավայի
 կտորներէ մին պիտի կարծուէր զոր շաղանակեանին, բաղեղը և
 որթը իրենց ձիւղերով կ'սեղմն և կ'պատեն և ուր քասթէլմա-

քի և Սօրանթի այդեպանը, դուռով մը դոցուած այր մը կ'փորէ
իր զինին սրահելու համար այն որթին քով որ իրեն բերած էր:

Երկար և արագ ելքէն, և ուսերնուս վրայ սառած թիւրուն
ծանրութենէ շնչասպառ՝ վայրկեան մը ծերունին և ես փակին
մէջ կանկ առինք, շո նչ առնելու համար: Բայց սղան իր թին
կոյտ մը մացառներու վրայ նետեց, և թեթև մը սանդուղէն ել-
լելով իր վստած ջահը ձեռքը սկսաւ պատուհաններէն մէկուն
զարնել և ուրախ ձայնով մեծ մայրը և քոյրը կանչելով. «Մայր
իմ, քոյր իմ, կ'դռէր. կայէ՛մանօ, Արացիէ՛լաւ, արթնցէ՛ք, բա-
ցէ՛ք. մեր հայրն է, էս եմ. մեզի հետ օտարականներ ալ կան»:

Այս արթնցած, բայց յստակ և քաղցր ձայն մը լսեցինք, որ
տան խորէն զարմացման քանի մը շփոթ աղաղակներ կ'ձղէր:
Յետոյ պատուհանի մը փեղկը կէս բացուելով, մերկ և սպիտակ
թմէէ մը հրուեցաւ և ջահին լոյսէն՝ զոր տղան ոտից մասններուն
վրայ կայնելով դէպ 'ի պատուհանը կ'տանէր, մանկամարդ օրի-
որդի մը զմայլելի կերպարանքը տեսանք:

Արացիէլա իր քուսին մէջ եղբորը ձայնէն սուշած՝ ոչ միտքը
եկած և ոչ ատեն ունեցած էր զիշերային հաղուստ մը հազ-
նելու: Պատուհան ցտակած էր ոտքերը բոլիկ ինչպէս կ'ննջէր
անկողնին մէջ: Իր երկայն խարտեաշ վարսերուն կէսը մէկ այ-
տին վրայ կ'իյնար, և միւս կէսը վզին շուրջը կ'պատէր, բայց
սաստիկ հողմը ուսին միւս կողմը տանելով զայն կիսաբաց փեղկին
կ'զարնէր և վերստին կ'բերէր իր երեսը շոյելու ազուտի մը
հողմավար թմէին պէս: Երկու ձեռքերով մանկամարդ աղջկը ա-
չերը կ'շփէր, արմուկները վերցնելով և ուսերը տարածելով
քունը վանել ուզող տղու մը առաջին շարժումին պէս: Շապիկը
վզին շուրջը պատած, բարձր և նուրբ հասակ մը կ'երեցնէր,
կտառին տակ երիտասարդութեան նշանները հաղու ձևացնելով:
Աչերը՝ ձուռած և խոշոր, մոյզ սեխն և ծովու կապոյտին մէջն
անորոշ գոյնը ունէին, այն գոյնը՝ որ նայուածքին խոնաւութենէ
ճառագայթը կ'քաղցրացնէ և կնոջ մը աչաց մէջ նոյն չափով
կ'խառնէ հողոյն փափկութիւնը՝ կրից զօրութեան հետ: Գոյն
երկնային զոր Ասիոյ և Իտալիոյ կանանց աչերը կ'առնուն, իրենց

բոցավառ օրուան կիզող կրակէն և երկնից յստակ կապոյտէն,
իրենց ծովէն և զիշերէն: Այտերը լեցուն և բոլորակ էին հաս-
տատ զիծով, բայց քիչ մը դեղնած, և կլիմայէն սակաւ ինչ
թուխ գոյնով, չէ թէ հարաւային այն անարատ սպիտակութեամբ
սր զարեթէ 'ի վեր օդին և ալեաց առջև դբուած մարմարիտին մը
գոյնին կ'նմանի: Բերանը՝ որուն շուրթերը բաց և մեր երկրին
կիներէն աւելի լայն էին, անկեղծութեան և բարութեան ծաւ-
քերը ունէր: Ակունները, կարճ բայց սպիտակ, ջահին երեքուն
լոյսով կ'փայլէին, ծովուն եղբւրը արևէն զարնուած ջուրին բեկ-
բեկումին տակ գանուող սատափի կտորներու պէս:

Իր կենդանի բայց քիչ մը գծուարին և շեշտալի խօսքերը,
զորս իր եղբոր կ'ուղղէր և որոնց կէսը հողմէ կ'ցրուէին, մեր ա-
կանջին երզի պէս կ'հնչէին: Աերպարանքը, ջահին լոյսին չափ
շարժուն, վայրկեանի մը մէջ զարմանքէ ստկումի, ստկումէ ու-
րախութեան, և փափկութենէ ծիծաղի փոխուեցաւ. յետոյ մեծ
թղենիին ետև մեզի նշմարելով պատուհանէն քաշուեցաւ շփոթ-
ձեռքը փեղկը թողուց, որ ազատ պատին զարկաւ. և մեծ մայրը
արթնցնելու և կէս մը հաղուելու համար ատեն անյրնելէ յե-
տոյ, կամարած և յարկին տակ գուռը բացաւ և իր հաւը և եղ-
բայրը համբուրեց բոլորովին յուզեալ:

ԺԳ

Պառու մայրը խիղջ երեցաւ, ձեռքը կարմիր հողէ ճրագ մը
բռնած որ իր նիհար և դեղնած երեսը և սեղանին վրայի աղե-
կատին բոլորտիքը փաթթած բուրդին պէս ձերմակ մազերը կ'լու-
սաւորէր: Ամուսնոյն ձեռքը և տղուն ձակատը համբուրեց: Բու-
լոր պատմութիւնը՝ զոր այս տողերը կ'պարունակին, քանի մը
խօսքով և քանի մը նշաններով հասկուեցաւ այս ազքատ ըն-
տանիքին անլամոց մէջ: Ամէն բան չէինք լսեր, բայց քիչ մը
հեռու կ'կենայինք որպէս զի մեր հիւրընկալներուն սրտին զեղումը

չ'ներկնք : Աղքատ էին , մենք ալ օտարական ըլլալով պարտաւոր էինք յարդեղ զիբենք , ասոր բաւականապէս կ'վկայէր իրենց դրան քով մեր ակնածական կեցուածքը :

Կրացիէլլա երբեմն երբեմն զարմացման նայուածք մը՝ իբր երազի մէջէ կ'արձակէր մեր վրայ : Երբ հայրը պատմութիւնը լըմընցուց , պառաւ կիներ վառարանին քով ծնկան վրայ եկաւ . Կրացիէլլա տանիքը երթալով խնկենի տեղե մը և նարնջենիէ քանի մը ծաղիկներ բերաւ , աթու մը առաւ և իր մազերէ քաշած երկայն գնդասեղներով փունջ մը կախեց Աստուածածնայ փոքրիկ պատկերին առջև որ դրան վրայ դրուած էր և որու առջև կանթեղ մը կ'վառէր : Իմացանք թէ փառաբանութեան ցոյցն էր այս իր սուրբ Պահպանուհւոյն որ իր հաւը և եղբայրը ազատած էր : Այս երախտագիտութենէ մենք ալ մեր բաժինը առինք :

ԺԴ.

Տան ներսի կողմը դուրսի ժայռին նման մերկ էր : Անծեփ պատեր , քիչ մը կիրով միայն ճերմկած : Մողեսները լոյսէն արթնցած կ'փախչէին և կ'ճչէին քարերու խորշերու մէջէ ձարխտի տերևներու տակ որ տղոց իբր անկողին կ'ծառայէր : Առաստաղ կաղմոզ մամուկատ գերաններէ կախուած էին ծիծառներու բոյները՝ ուրկէ կ'տեսնուէր պղտիկ սեաւ գլուխներ և երկչոտ աչերուն փայլելը : Կրացիէլլա և իր մեծ մայրը երկրորդ սենեակը կ'պառկէին կտոր մը կտաւով ծածկուած անկողնի մը վրայ : Պտուղներու զամբիւղներ , և ջորիի մը համետը յատակը կ'ծածկէին :

Չկտորը , տեսակ մը ամօթով մեր կողմը դարձաւ , ձեռքով իր բնակարանին աղքատութիւնը ցուցնելով . ետքը տանիքը առաջնորդեց մեզ . պառույ տեղ մը կ'սեպուի այն թէ Արևելքի և թէ Իտալիոյ հարաւային կողմը :

Տղուն և Կրացիէլլայի օղնութեամբը , տեսակ մը կայան ձևաւ

ցուց որուն մէկ ծայրը տանիքին պատին կ'յիւնոր և միւսը յատակը : Այս ապաստանորանը լեռէն կտրուած շագանակենիներու տասն երկու հասի չափ ճիւղերով ծածկեց և տակը ձարխտի կոյտեր սփռեց , երկու կտոր հայ , թարմ ջուր և թուղեր բերելով ննջելու հրախրեց մեզ :

Օրուան յոգնութիւնները և այլայլութիւնները մեր քունը ծանրացուցին : Երբ արթնցանք՝ արդէն ծիծառները տանիքին վրայ մեր անկողնոյն շուրջը կ'երդէին՝ թռչելով , և երեկոյեան ընթրիքին փշուռներ կ'դողնային . արեղակը՝ արդէն երկնից վրայ բարձրացած , փռուի պէս մեր առաստաղը կաղմոզ ճիւղերուն տերևները կ'այրէր :

Երկար տեսն պառկեցանք ձարխտի վրայ , այն կէս քունով որ մարդուս բարոյականը կ'թողու որ զղայ և մտածէ , զգայութեանց ելելու և գործելու ոյժ ունենալէ առաջ : Քանի մը կէս մը հնչուած խօսքեր կ'փոխանակէինք զոր կ'ընդմիջէին երկար լուծիւններ և երազներով կ'լմնային : Առջև օրուան որսը , մեր ոտից տակ երերուն նաւակը , կատաղի ծովը , անմաաչելի ժայռերը , երկու փեղկերու մէջ տեղ Կրացիէլլայի երեսը . բոլոր այս կերպարանները մեր երեւակայութենէն կ'սահէին կ'անցնէին և մեր միտքը կ'շփոթէին :

Պառաւ մեծ մօր հեծկլաւանքը և յանդիմանութիւնները լսելով այս թմբոթութենէ սթափեցանք , որ տան մէջ ամուսնոյն կը խօսէր : Վառարանը , որ տանիքին վրայ կ'ճեղքուէր , անոր ձայնը և քանի մը խօսքերը կ'բերէր մինչև մեզ : Իսեղճ կիներ կ'ողբար կարասիներուն , խարսխին , զրեթէ նոր պարաններուն կորստեանը վրայ , և մանաւանդ իրմէ գործուած ու իր կանեփէն հիւսուած այն գեղեցիկ առաջասաներու վրայ , զորս մենք մեր կեանքը ազատելու համար ծովը նետելու բարբարոսութիւնն ունեցեր էինք :

« Ինչո՞ւ , կ'ըսէր մունջ և նկուն ձերունոյն , այն երկու օտարականները , այն երկու Պաղղիացիները հետդ առի : Ձեռ գիտեր թէ հեթանոսներ են անոնք , և իրենց հետ դժբաղդութիւն և հեթանոսութիւն կ'տանին : Մուրբերը պատժեցին քեզ : Մեր հարատւութիւնը առին , փակք տուր որ հողիդ ալ չ'գրաւեցին » :

Խեղճ մարդը ինչ պատասխանել չէր դիտեր . բայց Արաքիւ-
 էլլա տղու մը յանդգնութեամբ և անհամբերութեամբ , որու մեծ
 մայրը ամէն ինչ կ'ներէ , այս յանդիմանութեան անիրաւութեան
 վրայ յուզեցաւ և ծերունայն կողմը բռնելով , « Ո՛վ կ'ըսէ թէ՛
 այն օտարականները կուսպաշտներ են , պատասխանեց մեծ մօրը :
 Կուսպաշտները աղքատներու վրայ անանկ զթոս կերպարանք
 կ'ունենան : Կուսպաշտները մեզի պէս Սուրբերու պատկերաց առ-
 ջև խաչ կ'հանեն : Ձեզի կ'ըսեմ , որ երէկ , երբ դուք ծնկան
 վրայ եկաք Աստուծոյ փառք տալու համար , և ես երբ Աստուա-
 ծածնայ պատկերին առջև փունջը կախեցի , տեսայ որ զլուխին
 աղօթելու պէս ծռեցին , կուրծքերնուն վրայ խաչակնքեցին , և
 մինչև անդամ երիտասարդացիներն աչաց մէջ արցունքի մը փայ-
 լելը և ձեռքին վրայ իյնալը տեսայ » :

« Ծովուն ջուրին մէկ կաթիլն էր այն որ մազերէն կ'իյնար ,
 կրկնեց խաախ պառաւ կինը » :

« Եւ ես կ'ըսեմ որ արցունք մ'էր , յաւելցուց Արաքիւլլա
 բարկանալով : Ծովեզրէ մինչև հոս հասնելին , հոյը բաւական
 աստն ունեցած էր անոնց մազերը չորցնելու : Բայց հոյը սիրտը
 չ'չորցներ . ուրեմն կ'կրկնեմ որ իրենց աչաց մէջ արցունք կար » :

Բմացանք որ տան մէջ ամենազօրաւոր պաշտպանուհի մ'ունե-
 ինք , վասն զի մեծ մայրը պատասխան չ'տուաւ , և իր մումալը
 դադրեցուց :

ԺԵ

Աճապարեցինք իջնել , որպէս զի մեր ընդունած հիւրընկալու-
 թեան համար խեղճ ընտանիքին շնորհակալ բլանք : Զոն դտանք
 ձկնորսը , պառաւ մայրը , Պէրբօն , Արաքիւլլան և փոքրիկ մա-
 նուկները , որ ծովեզրը իջնելու կ'պատրաստուէին առջի օրը ձրզ-
 ուած նաւակը տեսնելու համար թէ անվտանգ մնացած էր , վասն
 զի ալէկոծութիւնը դեռ կ'շարունակէր : Անոնց հետ մենք ալ ի-
 ջանք , երկչոտ և զլուխնիս կախած այն հիւրերու նման որ ըն-

տանիքի մը դժբաղդութեան պատճառն են և անոր իրենց վրայ
 ունեցած զպայմանցը վրայ վստահ չեն :

Ձկնորսը և իր կինը քանի մը քայլ մեղմէ յառաջ կ'քայլէին .
 Արաքիւլլա , իր փոքրիկ եղբայրներէ մէկուն ձեռքէն բռնած և
 մուսը թևին վրայ առած , անոնց ետէն կ'երթար : Մենք ալ
 լուիկ անոնց կ'հետեւէինք : Սանդուղին վերջի աստիճանին վրայ ,
 ուր ժայռի մը ծայրը դեռ կ'արդիլէր մեզ խութերը տեսնել ,
 վշտի աղաղակ մը լսեցինք , որ միաձայն ձկնորսին և ամուսնոյն
 բերնէն կ'ելէր : Մերի թևեր դէպ 'ի երկինք կ'վերցնէին , ձեռ-
 քերը կ'զարկէին յուսահատութեան ցնցիւններու պէս , բուռով
 ճակատնին և աչերնին կ'կոփէին , և կ'փետէին իրենց սպիտակ
 վարսերը , զորս հողմը ժայռերուն վրայ կ'անհետէր :

Արաքիւլլա և պղտիկ տղաքները իսկոյն իրենց ձայնը այս ա-
 ղաղակներու խառնեցին : Ամենքնին ալ խելագարներու պէս սան-
 դուղին վերջին աստիճաններէն անցնելով , դէպ 'ի խութերը վա-
 զեցին . յառաջացան մինչև փոփուրէ ծոպերու մէջ զորս ահա-
 զին ալքները դէպ 'ի յամաք կ'մղէին , և ինկան եղերքը ոմանք
 ծնկան վրայ , միւսերը զլորած , պառաւ կինը երեսը ձեռաց մէջ
 և զլուխը խոնաւ աւաղին վրայ :

Մենք , վերջին փոքրիկ ժայռին զլուխէն այս յուսահատական
 տեսարանը կ'զիտէինք , առանց յառաջանալու կամ ետ քաշուե-
 լու ոյժն ունենալու : Կառակը՝ ժայռին կապուած , բայց ետևի
 կողմը խարխիս չունենալուն՝ գիշերը ալքներէ տատանելով , ղեն-
 քը պաշտպանող խութերէն կտոր կտոր եղած էր : Խեղճ նաւա-
 կին կէսը դեռ պարանէն ժայռին կապուած էր , ուր առջի օրը
 գետեղած էինք : Տխուր ձայնով մը կ'տատանէր կորսուող մար-
 դերու մունչունին պէս , որ կերկերեալ և յուսահատ հառաչով
 մը կ'մարի :

Կառակին միւս մասերը , խելը , կայմը , շրջանակը , նկարուած
 փայտերը , աւաղին վրայ ասդիս անդին տիրուած էին , կուխէ
 մը ետքը գայլերէ սրտատուած զխակներու անդամներու նման :
 Երբ եղերքը հասանք , ծեր ձկնորսը մէկ կտորէն միւսին վաղե-
 լու զըսողած էր : Կ'վերցնէր , ախուր աչով կ'նայէր , ետքը ոտ-

քերուն վրայ կ'իծարք որ ինան աւելի հեռու երթալու համար։
 Կրացիէլէս գետինը նստած կուլար զլուխը զենջակին մէջ։ Տղաք-
 ները, մինչև սրունքը մերկ ծովուն մէջ, պրտալով փայտեղուն
 բեկորներուն ետևէն կ'վազէին և կ'աշխատէին գէպ 'ի եղերք
 բերել զանոնք։ Իսկ պատա կինը հառաչելէ, և հառաչելով
 խօսելէ չէր գաղբեր։ Մենք միայն խառն ձայներն և արտունջ-
 ները մատամբ կ'լսէինք, որոնք օդը կ'ձեղքէին և սիրտ կ'ձմէին։
 «Ո՛ր գաժան ծով, խո՛ւլ ծով, գծոխքի սատանաներէ աւելի չար
 ծով, ծով առանց սրտի և պատոյ, կ'գոչէր հայհոյանաց բա-
 ուերով և սեղմած բուռը գէպ 'ի ալիքներու ցուցունելով. ին-
 չո՛ւ մեզի ամենքնիս ալ չտար, քանի որ մեր պարէնը կ'առնես։
 Ահա, գոնէ կտոր կտոր առ քանի որ ամբողջ չտար»։ Այս
 խօսքերը ըսելով՝ նստած տեղէն ոտքի վրայ կ'ելէր և էր հա-
 զուտաին կտորներուն հետ մագերու վարսեր ծովուն մէջ կ'նե-
 աէր։ Ձեռքով կոհակը կ'ծեծէր և ոտքերով փրփուրին մէջ կ'ոս-
 տոստէր։ Յետոյ փոփոխակի բարկո թենէ արտունջի, ցնցիւննե-
 րէ քաղցրութեան փոխուելով, վերստին աւազին վրայ կ'նստէր,
 ձակատը ձեռքերուն կռթնած և ողբալով քայքայուն փայտե-
 ղուն խոթերու զարնուելը կ'ղիտէր։ «Խեղճ նաւակ, կ'սրտար,
 իբր թէ այն մնացորդները սիրելի անձի մը դեռ նոր զգացումէ
 զրկուած անշամներն եղած ըլլային, այս էր քեզի պարտաւորած
 վիճակնիս։ Պէտք չէր որ մենք ալ քեզի հետ կորսուէինք, միա-
 տեղ կորսուէինք ինչպէս որ միատեղ ապրած էինք։ Հոս կտոր
 կտոր, փոշի եղած, զրեթէ մուած, գոչելով այն խոթին վրայ
 ուր բոլոր գեղերը մեզ կանչեցիր, և ուր պէտք էինք քեզ օգ-
 նել, ինչ կ'մտածես մեր վրայ. դուն այնչափ աղէկ ծառայեցիր
 մեզի, և մենք քեզի մատնեցինք, թողուցինք և կորսնցուցինք։
 Կորսնցուցինք, հոս, տան այնչափ մօտ, և սիրովդ ականջին
 տակ, նետեցինք եզերքը հաւատարիմ շունի մը դիակին նման,
 զոր կոհակը կ'նետէ անոր խեղդող սիրով ոտքին տակ»։

Վերջը, ձայնը արցունքներէ կ'խնդրուէր։ Այնչէր մի առ մի
 նստակին յատկութիւնները և այն ստակը զոր վատներ էին անոր
 համար և այն բոլոր յիշատակները որ այս երեւեալ խեղճ նշխա-

րին կ'վերարկէր։ «Ասոր համար էր որ, կ'ըսէր, այնչափ ա-
 ղէկ նորոգել և ներկել տունք թունոս ձուկին վերջին որսէն
 ետքը։ Ասոր համար էր որ իմ խեղճ աղաս չ'մտած և էր ե-
 րեք զաւակները որը չ'ձգած, այնչափ սիրով և խնամօք շինած
 էր զրեթէ ամբողջ իր ձեռքով։ Երբ նաւակին խորշէն զամ-
 բիւղները առնելու կողայի, փայտերու վրայ իր կայքիներն հար-
 ուածները ձանշալով, կ'համբուրէի զանոնք անոր յիշատակին
 համար. հիմա, ծովուն շանաձուկերը և խեցգետնները պիտի
 համբուրեն զանոնք։ Չմեռ գիշերները ինքնին զանակով քան-
 դակած էր Սուրբ-Քրտնչիսկոսի պատկերը տախտակի մը վը-
 րայ, և նաւուն խեղին վրայ դրած էր դէշ օրէն սրահպանուելու
 համար։ Ո՛ր անողորմ Սուրբ, ինչ կերպով երախտագէտ երե-
 ցար։ Ի՞նչ բլբլ որդիս, կինը և այն նաւակը զոր թողած էր
 իր խեղճ զուսկաց պարէնը հայթայթելու համար։ Ի՞նչպէս ինք-
 դեմք չ'պաշտպանեցիր, և ո՞ր է ալիքներու խաղալիկ եղած
 պատկերդ»։

«— Մայր, մայր, գոչեց տղոյ մին, աւազին վրայ երկու ժայ-
 ուի մէջէ նաւակին մէկ կտորը ժողվելով, ահաւասիկ Սուրբը»։
 Խեղճ կինը իր բոլոր զայրոյթը և անէծքը մտնալով, ոտ-
 քերը ջուրին մէջ գէպ 'ի աշուն վազեց, առաւ իր զաւակէն
 քանդակուած փայտի կտորը և շարթերուն դպեցուց արցունքնե-
 րով թրջելով զայն։ Գնաց վերստին նստաւ և ալ չ'տեսցաւ։

ԺԶ

Նաւակին բոլոր բեկորները մի առ մի ժողվելու օրներինք Պէր-
 բոյին և ձերուսոյն։ Ծայրաստած ողնափայտը աւելի ներս քա-
 շեցինք։ Բոլոր կտորներէ կոյս մ'ըրինք, որմէ քանի մը փայտեր
 և երկաթներ այս խեղճ մարդերուն կրնային թերևս ծառայել,
 վրանին մեծ քարեր դրինք, որպէս զի ալիքները եթէ բարձրա-
 նային, նաւակին այս սիրելի հաստածները չտարածէին։ Յետոյ

տխուր մեր հիւրընկալներուն ետեւն տուն վերադարձանք : Նաւու մը չզոյու թիւնը և ծովուն վիճակը չէին ներեր մեզ մեկնիլ :

Աչերնիս 'ի կախ և աւանց բաւ մը արտատանելու կտոր մը հաց և այծի կաթ խմելէ ետքը , զորս Կրացիէլա թղենիին տակի աղբիւրին քով բերաւ , տունը սոց մէջ ձգելով՝ ժուռ դալու գացինք կղզոյն բարձր լեռան այգիներու և ձիթենիներու մէջ :

ԺԵ

Բարեկամս և ես հազու կ'սօսէինք , բայց երկուքնիս ալ նոյն մտածումը ունէինք , և բնազդումով այն բոլոր փողոցները կը մտնէինք , որ կղզոյն արևելեան կողմը կ'եզերէին , և որոնք Բրոսիտա մտակայ քաղաքը պիտի տանէին մեզ : Քանի մը այծաբաժներու և գլուխնուն վրայ խղի ամաններ դրած յունական հագուստով աղջիկներու հանդպեցանք , որ շատ անգամ ձիշղ ճամբան ցուցուցին մեզ : Թամ մը ետքը վերջապէս քաղաք հասանք :

— Ահաասիկ տխուր դէպք մը , ըստ ինձ բարեկամս :

— Զոր պէտք է ուրախութեան փոխել այս խեղճ մարդերուն , պատասխանեցի անոր :

— Այդ կ'մտածէի , կրկնեց պատիւն մէջ շատ մը ոսկի դահեկաններու ձայնը հանելով :

— Ես ալ նոյնպէս , բայց միայն հինգ կամ վեց ոսկի ունիմ քսակիս մէջ : Սակայն քանի որ դժբաղդութեան կէսին մէջ ես ալ կ'զմտուիմ՝ պէտք է որ դարմանին մէջ ալ կ'իտով մասնակցիմ :

— Երկուքնէս աւելի հարուստ ես եմ , ըստ բարեկամս , Նաբոլի սեղանաւորի մը քով վարկ ունիմ : Ամէն ինչ առաջուրնէ ես կ'վճարեմ , Գաղղիա հաշիւնիս կ'կարգադրենք :

ԺԸ

Այսպէս խօսակցելով Բրոսիտայի զառիվայր փողոցներէ յամ-

բաքայլ կ'իջնէինք : Իսկոյն նաւարկութեան հասանք : (այսպէս կը կոչեն Արշիպեղայոսի և Իտալիոյ եղբրքը նաւահանգստին կամ ծովեղբր մօտ եղած տեղը) Նաւահանգիստը խոնամ էր , Իշիայի , Բրոսիտայի և Նաբոլիոյ նաւերէ , որոնք առջի օրուան փոթորկէն ստիպուած էին այն ջուրերուն մէջ ապաստանարան վնասել : Նաւարարներէ և ձկնորսներէ ոմանք արևուն մէջ կ'ննջէին , ոմանք ալ ծովեղբր ամբարտակին վրայ խումբ խումբ նստած կը խօսակցէին : Մեր հագուստէն և կարմիր բուրդէ գտակներէ՝ որ մալերնիս գոյած էր , Թօսքանայի կամ Ճէնովայի երիտասարդ նաւաստիներ կարծեցին մեզ , որոնք Իշիայի խող կամ պիւնիս Բրոսիտա բերող նաւերը կ'երեւէին :

Բոլոր նաւահանգիստէն անցանք հաստատուն և ամրաշէն նաւակ մը փնտռելով , որ կարենայ երկու մարդէ զիրար կտաւ վարուիլ և որու մեծութիւնը և ձևը կարելիին չափ կորուսածնուս նմանի : Գտնելու համար գծու արու թիւն չ'կրեցինք , հատ մը զըտանք որ կղզոյն հարուստ ձկնորսի մը կ'վերաբերէր և որ ուրիշ շատեր ալ ունէր , բայց ասիկայ քանի մ'ամսէ 'ի վեր էր որ կ'ծառայէր իրեն : Տիրոջը պայիւք , որուն տունը նաւահանգիստը գտնուող տղայք ցուցուցին մեզ : Այս մարդը ուրախ , զգայուն և բարի էր : Շատ շարժեցաւ երբ զիշերուան ձախորդութիւնը և իր Բրոսիտայի աղքատ քաղաքակիցին վիշտը պատմեցինք : Բայց և այնպէս իր նաւակին պիւնիս զահեկան մը չ'կորսընցուց , միայն թէ արժէքը չբարձրացուց և սակարկութիւնը երեսուն երկու ոսկիի որոշուելով բարեկամս կանխիկ վճարեց անոր : Այս դումարով նաւակը և բոլորովին նոր հանդերձանք , առադաստք , թաղոյկ , սպարաններ , երկաթէ խարխիս , ամէն ինչ մերը եղաւ : Նոյնպէս նաւահանգստին մէկ խանութէն երկու բրդէ վերարկուներ գնեցինք մէկը ծերունոյն , միւսն ալ տղուն համար , քանի մը տեսակ ուսկաններ , ձուկի սակաւներ , և կնոջ մը առանին քանի մը սպառչ գործիքներ աւելցուցինք անոնց վրայ : Որոշեցինք նաև նաւերու վաճառականին հետ որ երեք զահեկան աւելի կ'վճարենք եթէ նոյն ժամուն նաւակը մեր ցուցած եղբրքը զրկէ : Տեսնելով որ մրրիկը կ'ակարէր , և կղզոյն բարձր

ցամաքը այն եղբայրին ծովը հավէն քիչ մը կ'սպասարեւր, խոստացաւ, և մենք ալ ցամաքէն Անարեայի տունը վերադարձանք :

ԺԹ

Ճամբան յամրաքայլ կ'երթայինք, ամէն ծառերու և այգիներու շուքին տակ նստելով, խօսակցելով, երազելով, բոլոր գեռահաս Բրօսիտացու հիներէն թուղ, զղևար և խաղող դներով, և ժամերուն սահելու ատեն թողլով : Երբ հրումեղանի մը վերէն մեր նաւակը նշմարեցինք՝ որ ծովեզեր շուքին տակէ յուշիկ կ'սահէր, քայլերնիս շտապեցինք որպէս զի թիափարներուն հետ հոն հասնինք :

Ոչ տան և ոչ զայն շրջապատող այգիին մէջ քայլ մը, կամ ձայն մը կ'լսուէր : Միայն փետրալի լայն ոտքերով և սևախառն սպիտակ թևերով երկու սղառնիներ սեսանք որ տանիքին պատին վրայ ցորեններ կ'ոտէին. ասոնք էին այս տան մէջ կենաց և կենդանութեան նշանները : Առանց ձայն մը հանելու վեր ելանք, ընտանիքը խորունկ քունի մէջ էր : Ամենքնին ալ, տղոցմէ զատ, որոնց աղւոր գլուխները մէկ մէկու քով կրացիէլլայի բազուկին վրայ կ'հանդէկին, վշտէ ճնշուած դիրքի մէջ կ'ննջէին : Պառաւ մայրը, գլուխը ծունկերուն վրայ, իր մարած շունչով կարծես դեռ կ'հեծկէլար : Հայրը, արևուն մէջ կռնակի վրայ երկընցած էր ձեռքերը խաչաձև : Ծիծառները՝ թռչելով իր մոխրագոյն մազերու վրայէ կ'անցնէին : Ճանձերը քրտնած ձակատը կ'ծածկէին : Երկու խորունկ դիժեր մինչև բերանը վերջացած, կ'վկայէին թէ մարդկային ոյժը սպառած էր, և արցունքներու մէջ քնացած էր :

Այս տեսարանը մեր սիրտը փղձկեց. բայց անոնց երջանկութիւն տալու մտածումնիս զմեզ միտթարեց : Ուր ուրեմն արթընցուցինք : Տանիքին յասակը, կրացիէլլայի և իր փոքրիկ եղբարց ոտքերու վրայ թարմ հաց, պանիր, աղածք, խաղողներ, նա-

րինջներ, թուզեր նետեցինք, որոնցմով բեռնատարուած էինք ճամբուն վրայ : Գեռահաս աղջիկը և սղայք ելլելու չէին համարձակեր այս առատութեան յորձանքին մէջ, որ կարծես թէ երկնքէն իրենց չորս դին կ'անդար : Հայրը ընտանեաց կողմէ մեզ շնորհակալ կ'ըլլար : Մեծ մայրը աննշոյլ աչով կ'դիտէր այս ամէնը : Իր դիմաց մեկու թիւնը, աւելի բարկու թիւն կ'յայտնէր քան թէ անտարբերութիւն : « Ելիք, Անարեան, ըստ քարեկամս ծերունոյն, մարդս երկու անգամ լող պէտք չէ այն բանին վերայ՝ զոր աշխատութեամբ և ոյժով կրոնայ վերստին ձեռք բերել : Անտաներու մէջ փայտեր կան և բուսնող կանեփին մէջ սոսոքասաներ : Միայն մարդուս կեանքը, զոր տրամութիւնը կ'մաշէ, վերստին չ'ստացուի : Օրոտան մը արցունքը, տարուան մը աշխատութեան աւելի ոյժ կ'վատնէ : Չար իջիք, մեր, ամուսնոյդ և տղոցդ հետ : Մենք նաւապետները ենք. նաւաբեկութեանդ բեկորները այս իրիւն բակին մէջ բերելու օգնենք քեզ : Անոնցմով փակարաններ, անկողիներ, սեղաններ և կարասիներ կ'շինես ընտանեացը համար : Օր մը, ծերութեանդ մէջ, պիտի ուրախանաս հանդարտ ննջելով այն տախտակներու վրայ որոնք այնչափ երկար ատեն ալեաց վրայ օրօրեր էին քեզ » :

— Թող միայն դադարներ ըլլան անոնք, մրմնաց մեծ մայրք անձայն :

Ի

Սակայն ելան ամենքնին ալ, և եղբայրին աստիճաններէն մեր ետեւէն կ'իջնէին, բայց յայտնի էր թէ ծովուն տեսքը և կոհակներու ձայնը աղէկ ազդեցութիւն չէր ընէր իրենց : Պիտի չ'փորձեմ նկարագրել այս խեղճ մարդերու զմայլումը և ուրախութիւնը, երբ սանդուղին վերջին աստիճանէն նոր նաւակը նշմարեցին որ արևուն տալև կ'փայլէր աւազին վրայ քաշուած հինին հատուածներուն քով, և երբ քարեկամս ըստ անոնց, « Չերն է այն » : Ամենքնին ալ նոյն ուրախութեան կայծակնահասար, ծրն-

կան վրայ եկան նոյն աստիճանին վրայ ուր կ'դառնուէին, մեզի շնորհակալ ըլլալու խօսքեր գտնելէ առաջ Աստուծոյ փառք տալու համար: Բայց անոնց երջանկութիւնը շնորհակալ ըլլալու կ'բաւէր մեզ: Միայն բարեկամիս ձայնէն ոտքի ելան որ կ'կանչէր զերեսք: Անոր քայլերու հետեւելով վաղեցին դէպ 'ի նաւակը: Նախ հետուէն և ապա կարծես պաշտելով շուրջը գործան, վախնալով թէ խորեական գաւ մը չըլլայ կամ հրաշքի պէս չ'անհետի: Ետքը աւելի մօտեցան, քիչ քիչ ձեռքերնին դայցընելով իրենց ձակաին և շուրթերուն տարին: Աերջապէս զմայլումի և ուրախութեան աղաղակներ ձգեցին, և ձեռք ձեռքի բոլորակ կազմելով, պատու կիներն մինչև փոքրիկ սղաքները պարեցին:

ԻԱ.

Պէրբո ամենէ առաջ վրան ելաւ: Յետտողովին փոքրիկ տախտակամածին վրայ կայնած, մի առ մի բոլոր հանգերձանքը մէջէն կ'հանէր. խարխիւր, պարանները, քառանկիւն ամանները, նոր զեղեցիկ առադաստները, սակաւները, լայն թեւերով վերարկուները. խարխիսին ձայնը կ'հանէր, թիւերը լինին վրայ կը վերցնէր, առադաստը կ'բանար, մասերուն մէջ վերարկուներուն սերտ աղուամազը կ'շփէր, բոլոր այս հարստութիւնները հաւին, մեծ մօրը, քոջը կ'ցուցնէր երջանկութեան աղաղակներով և ուստումներով: Հայրը, մայրը, Արայիէլան կուլային նաւակը և զմեզ գիտելով: Նաւակը բերող նաւարարները, ժայռերու ետեւ պահուրտած կուլային անոնց հետ: Ամենքը մեզ կ'օրհնէին: Արայիէլա զլուխը կախած և երախտադիտութեան մէջ աւելի ծանրաբարոյ, մեծ մօրը մօտեցաւ, և մեզի մատով ցուցնելով լսեցի որ մրմուռաց. « Կ'ըսէիք թէ հեթանոսներ են, և ես երբ կ'ըսէի թէ աւելի հրեշտակներ կրնան ըլլալ, ո՞վ իրաւունք ունէր »:

Պատու կիներ ոտքերնիս ինկաւ և իր կասկածանայ համար ներողութիւն խնդրեց մեզմէ: Այս ժամէն 'ի վեր թերևս իր փոքրիկ աղջկան և Պէրբոյի չափ սիրեց զմեզ:

ԻԲ.

Բրօսիտացի նաւարարները ետ զըկեցինք խոստացած երեք դահեկաննիս վճարելով: Ամենքնիս ալ նաւուն բեկորներու տեղ նոր հանդերձանքներէն մէյմէկ կտոր աւանելով տուն բերինք այս երջանիկ ընտանեաց բոլոր հարստութիւնը: Իրկուսն՝ ընթրիքէն ետքը, Պէրբո ճրագին լուսով իր մեծ մօրը անկողնոյն բարձին տակէ հանեց այն կտրուած տախտակին կտորը՝ որու վրայ իր հայրը քանդակած էր Սուրբ Ֆրանչիսկոսի պատկերը. սղոցով քառակուսի ըրաւ զան, զանակով մաքրեց և իբր նոր յղկեց ու ներկեց: Հետևեալ օրը կ'խորհէր նաւուն ծայրին ներսի դին փակցընել, որպէս զի նոր նաւակին մէջ հինէն յիշատակ մը զըտնուի: Ասոր նման հին ազգերը երբ ուրիշ տաճարի մը տեղ նոր տաճար մը կառուցանէին, միշտ հոգ կ'տանէին որ նոր շէնքին մէջ հինէն գոնէ կոթող մը գտնուի, որպէս զի վերջինին մէջ նուիրական բան մը գտնուի և անոր անարուեստ ու զրկեալ յիշատակը սրտի վրայ իր դաւանումը և ազդեցութիւնն ունենայ նոր խորանին ընտիր շէնքին մէջ: Մարդս ամէն սեղ նոյն մարզն է: Իր զգայուն բնութիւնը միշտ նոյն բնագոյմներն ունի թէ Բարթէնոնի, թէ Հուովմայ Սուրբ-Պետրոսի և թէ Բրօսիտայի խութիւն վրայ ձկնորսի մը խեղճ նաւակին մէջ ըլլայ:

ԻԳ.

Նոյն զիշերը ամենէ երջանիկ զիշերն էր այս տան համար թերևս Նախախնամութեան սահմանած իր ժայռէ ելելով մինչև փոշի դառնալը: Քնացանք տանիքին վրայ լուսնին մօտակայ ճառագայթներու լուսով և ձիթենեաց մէջ հողմին բաղխումներուն և ձուկեղեր կոհակնիւնրու ձայնը լսելով: Երբ արթնցանք՝ երկինք

փայլուն բիւրեղի նման մաքուր էր. ծովը՝ մոյզ գոյն և երբեմն փրփուրէ ծոպեր կ'ցուցնէր, կարծես սաստիկութեամբ յայնամ կը քրանէր. բայց հողը՝ աւելի կատաղի, միշտ կ'մռնէր: Առջի օրուքնէ աւելի բարձր կ'ելլէր այն ձերմակ փոշին զոր ալիքները Միզէն հրուանդանին ծայրը կ'դիզէին: Քի մի բոլոր փեր կ'խնդրէր լուսեղէն մեզի մը մակընթացութեան մէջ որ միշտ կ'ելլէր և կ'իջնէր: Այսէթի և Պայտայի նեղուցին վրայ նա մը չէր նըշմարուեր: Ծովը ծիծառները իրենց ձերմակ թևերով փրփուրը կ'ծծէին. այս այն միակ թռչունն է որ ալէկոծութեան մէջ իր տարրը կ'զանէ և նա աբեկութեանց մէջ ուրախութեամբ կ'ձուռուղէ Գրեքասէներու հրուանդանին անիծեալ բնակիչներու պէս, որոնք կորսուած նաւերու կողոպուտին կ'սպասեն:

Առանց իրարու ըսելու զազունի հաճոյք մը կ'զրայինք, այսպէս դէշ օդէն ստիպուած նաւարարին տան և այդին մէջ բանտաբերուած մնալնուս վրայ: Ասիկայ տան կուտար մեզ մեր վիճակը շաշակելու և վայելելու այն խնդճ ընտանեաց երջանկութիւնը՝ որու կապուած էինք բնական զուակայ պէս:

Հողմը և գէշ ծովը ինն օր ամբողջ մեզ հոն արգիլեցին: Արբաղձայինք, մանաւանդ էս, որ ալէկոծութիւնը յարատև բլլար և ահամայ ու անհրաժեշտ պէտք մը տարիներ մեզ հոն անցընել տար, ուր որ գերի միանգամայն այնչափ երջանիկ եղած էինք, թէ և մեր օրերը խիտ անդգայ և միօրինակ կ'սահէին: Երբ սիրտը երիտասարդ է և ամէն բան կ'վայելի, ոչ ինչ կրնայ ցուցընել թէ սրչափ փոքրիկ բան իր երջանկութեան կ'բաւէ: Ասոր նման ամեն պարզ կերակուրները մարմնոյն կեանքը կ'կազդուրեն և կ'նորոգեն, երբ ախորժակը կ'համարձակուի զանոնք և երբ նոր և սուղ ին . . . :

ԻԳ

Ծիծառներու ձայնէն արթննալ, սրտք մեր տանիքին վրայ

տերևներէ շինուած սուստաղին վրայէ կ'անցնէին. Արացիէ լայն տղայական ձայնը մտիկ ընել, որ այդին մէջ կէս ձայնով կերպէր օտարականներու քունը չ'վերլուծելու համար. եզերքը առաւարանօք իջնել ծովուն մէջ նետուելու և լողալու քանի մը փայրիեան պզտիկ ծոցի մէջ, որուն բարակ աւազը խորունկ ջուրի մը թափանցութեան մէջ: կ'փայլէր, և ուր բարձր ծովուն շարժումը և փրփուրը չէին կրնար մտիկ. տուն վերադառնալ յուշիկ, արևուն չորցնելով և տարցնելով ջուրէն թրջուած մաղերնիս և ուսերնիս. այդին մէջ նախաձայնել հացի մը և պանիրի կտորով, զոր մանկամարդ աղջիկը մեզ կ'բերէր և մեր հետ կ'կտրէր. խմել յստակ և քաղցրահամ ջուր մը զոր խնք կ'քաշէր աղբիւրէ մը երկայնաձև հողէ փոքրիկ ամանով և զոր կարմրելով բազուկին վրայէ կ'իջնէր, մինչդեռ իր շարժերը անկէ կ'ըմպէին. յետոյ օդնէլ ընտանիքին, տան և պարտեզին հազարուակի գեղջկային դորձերու մէջ. նորոգել բակին պատին մասերը, որ այդին կ'ըջապատէր և տանիքը կ'վերցնէր. հանել այն խոշոր քարերը, որ ձմեռը սրտերու վրայէ այդին որթերուն մէջ կ'զլորէին և որ կ'սպառնային անոնց մէջի քիչ մը հերկուած տեղը բրտայնել. լեցնել շտեմարանին մէջ մեծ գեղին դռմնիքը, որոնց մէկը մարդու մը բեռ էր, ետքը անոնց թելերը կտրել, որ լայն տերևներով դետինը կ'բացէին և ցանցերու մէջ քայլերը կ'նեղէին: որթերու ամէն մէկ կարգին մէջ փոքր փոքրիկ ջրանցք մը չոր հողին մէջ, որպէս զի անձրեան ջուրը ինքնին հաքուի և երկար ատեն ջրէ դանոնք. փոքր նոյն գործին համար խողովակով փոսեր թվենիներու և նարնջենիներու տակ. ստոնք էին մեր սուստաղեան դազուսները մինչև որ արևը տանիքին, պարտեզին և բակին վրայ ուղեղ գիծ մ'արձակելով սարփինաներու արաստանարանը փնտելու ստիպուէինք: Այդին տերևներու թափանցութիւնը և ցուլացումը, երբուն նշոյնները տաք և քիչ մը ոսկեգոյն դունով կ'ներկէին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Արացիելլա այն աստե՛ն տուն կ'իլաւնար, իր մեծ մօրը քով մանեւ լու կամ կէսօրուան ճաշը պատրաստելու համար: Իսկ ձեր ձկնորսը և Պէրբօ ամբողջ օրեր ծովուն քով կ'անցընէին զետեղելու նոր նաւակին բեռերը և կարգադրելու այն բոլոր կատարելագործութիւնները՝ զորս իրենց նոր ստացուածքը կ'պահանջէր, նոյնպէս ուսկանները կ'փորձէին խտթելու մէջ: Միշտ կէսօրուան ճաշին համար քանի մը խեցղետիւններ և օձաձուկեր կ'բերէին նոր հալած կասպրէն աւելի փայլուն խեցիներով: Մայրը ձէթի իւղի մէջ կ'տապկէր զանոնք: Այս ընտանիքն ալ, քաղաքին սովորութեան համեմատ, իւրը տան մօտ ժայռին մէջ փորուած փոքրիկ ջրհորի մը խորը կ'պահէր, որ խոշոր քարով մը զոցուած էր և որու վրայ քանդակած էին երկաթեայ օղ մը: Քանի մը խորոված վարունդներ փոկի պէս կտրուած թոնիւրին մէջ, քանի մը թարմ խեցեմորթ, խեցիի նման, զոր պարզ շով կ'կոչեն, կ'կազմէին մեր կէսօրուան զեղջիկական ճաշը, որ օրուան ամենէ զխաւորը և աննդարարն էր: Իսկ անուշեղէնները, առտու Արացիելլայէ ժողովուած մշկահոտ խաղողներ էին, որոնք իրենց արմին վրայ երկայն զեղին ուղկոյզներով, ուռիէ հիւսուած տափակ կողովներու մէջ տերեւներու տակ պահուած էին: Մէկ կամ երկու կանաչ սամիթի արմեր, հում և պղպեղի մէջ թաթխած և որոնց անխօսի հոտը, շուրթերու վրայ կ'բուրէ և սիրաբ կ'զուարթացնէ, խմելքի և սուրճի տեղ կ'բռնէին Նաբօլիոյ նաւարարներու և զեղացիներու սովորութեան համեմատ: Ճաշէն ետքը, բարեկամս և ես կ'երթայինք սպառածի մը դադաթը, Պայիայի եղբւր և ծովու զիմաց ստուերալի և զով տեղ մը փնտռելու և օրուան տաք

ժամերը, կէսօրէն վերջ մինչև ժամը չորս կամ հինգ հին տեղ զիտելով, խորհելով և կարգալով կ'անցընէինք:

Բ

Միայն երեք քայքայուն բեկորներ ազատած էինք ալիքներէ, վասն զի անոնք մեր նաւարարի պայուսակը ծովը նետած աստեւնիս մէջը չէին դառուեր. մին՝ Հիւկօ Քօսթօլօյի խալիւրէն փոքրիկ հատոր մ'էր «Ժուզօ Օբիէի Նաւիէրը» վերոգրուած, տեսակ մը կէս քաղաքական և կէս վիպային Վէրթէր, որու մէջ իտալացի երիտասարդ սրտի մը մէջ, երկրին ազատութեան փափաքը, զեղեցիկ Վենետիկցուհայ մը արիփին հետ կ'խառնուի: Երկու արիփը, սիրողին և քաղաքացւոյն կրկին հորէն սնած, Օրթիսի հողոյն մէջ ջերմը կ'վառեն, և որուն խիստ զօրաւոր ըմբռումը զգայուն և հիւանդ մարդուն անձնաստիճան թիւն կ'արտադրէ: Այս գիրքը՝ զբաւոր բայց աւելի փայլուն նկարեալ Աթթէի Վէրթէրին օրինակը, բոլոր մեծ բաներ խորհելու արժանի այն երիտասարդներու ձեռքն էր՝ որոնք մեղի պէս հողոյն մէջ կ'տածէին ազատութեան և սիրոյ կրկին երազը:

Գ

Պոնաբարթի և Մուրասայ օրէնքը հեղինակը և գիրքը կ'հաւածէր. բայց հեղինակը բոլոր Իտալացիներու և Երոպոյի ազատամիտներու սիրտը ապաստանարան ունէր, և գիրքը մեղի պէս երիտասարդներու կուրծքին խորանն էր: Հոն կ'պահէինք զայն մէջի սկզբունքները շնչելու համար: Միւս ազատած երկու հատորներու մին՝ Պէրնարտէն տը Սէն-Բիէրի Պօլ և Վիլյոնէն էր. անարատ սիրոյ այն ձեւակերտը, զիւր մը՝ որ կ'անմտի աշ-

խարհիս մանկութեան վրայ մարդկային սրտի պատմութեան կորզուած, և տասն և վեց տարեկան աչերու համար փոխադրական արցունքներով թրջուած և մաքուր պահուած երեսն մը :

Միւսը՝ Թասիթի մէկ հատորն էր, անառակութեամբ, ամօթով և արեամբ պղծեալ երեսներ, բայց որու մէջ հաստատուն առաքինութիւնը զրիչը ձեռք կ'առնու և պատմութեան առ երկուայն տեղով թիւն կուտայ, որպէս զի հասկցողներու ներշնչէ բրուտութեան ասելու թիւնը, մեծ անձնութեանց զօրութիւնը և վսեմ մահերու տենչը : Այս երեք գիրքերը պատահմամբ կը յարմարէին այն երեք զգացումներու որ կարծես թէ նախազգացումով այն ատենէ ՚ի վեր մեր առոյց հոգիները թրթուել կուտային . սէրը, Նտալիոյ և Գաղղիոյ աղատութեան փափաքը, և վերջապէս քաղաքական գործունէութեան և երեւելի գործերու շարժման տրիփը որու պատկերը կ'ընծայէր մեզ Թասիթ և այդուն մեր հոգիները անոր կ'կցորդէր իր արեւնալի վրձինով և վաղեմի առաքինութեան իղձով : Վարչաւ և բարձր կ'կարդայինք, երբեմն զմայելով, երբեմն լալով և երբեմն խորհելով : Երբեմն կ'ընդմիջէինք այս ընթերցումները երկար լուսութեամբ և քանի մը զօշխններով, որոնք մեզի համար զգացումներու անխորհուրդ բացատրութիւններ էին և զորս հօլմ մեր երազներու հետ կ'ցրուէր :

Դ

Մենք ալ մտքով այն երեակայական կամ իրական վիճակներու մէկուն մէջ կ'գնէինք ինքզինքնիս, զորս բանաստեղծը կամ պատմադիրը կ'պատմէր : Միրողն կամ քաղաքացւոյ, սոսկական կամ հասարակային կենաց, երանութեան կամ առաքինութեան գաղափարներ կ'ստեղծէինք : Ասիրէինք այս մեծ գէպքերը հրաշալի պատահարներով խառնել խոռովութեան այն ժամանակներու հետ՝ որ ամենէ անձանօթ մարդերը միայն հանձարով կ'յայտանուն ժողովրդեան և կ'կոչուին բռնատրութեան դեմ կուտելու :

և ազգերը ազատելու համար . ետքը ժողովուրդներու յեղամտութեան և ապերախտութեան զոհ եղած, կառավարութիւն վրայ մեռնելու կ'պատրաստուին ներկային առջև՝ որ զերեսք կ'մտնայ, և ապագային՝ որ իրենց վրէժը կ'լուծէ :

Չկար նշանաւոր պաշտօն մը որու մեր հոգիները հաւասարել չուզէին : Ամէն բանի ալ կ'պատրաստուէինք, և եթէ օր մը բազմը չ'կատարէր այն բոլոր մեծ փորձերը՝ որոնց մէջ մտքով կ'դահաւիժէինք, առաջուրնէ վրէժ առած էինք անարդելով զանոնք : Ունէինք այն հաստատ հոգիներու միութեամբ թիւնը, որ եթէ մեր կեանքը անօգուտ, հատարակ և նսեմ մնար՝ դիպումը մեզի սիրտի պակօտի և ոչ թէ մենք անոր :

Ե

Երբ արեւ խոնարհէր՝ կղզւոյն մէջ երկար պտոյտներ կ'ընէինք : Ամէն փողոցներէ անցնելով քաղաք կ'երթայինք, Անտրեայի պարտէզին պակասած բանջարները և հաց գնելու համար : Երբեմն քիչ մը ծխախոտ կ'ընէինք, այն ափսոսքով՝ որ ծովու վրայ կ'կենդանային նաւաւարը և ցամաքի վրայ կ'միթթարէ : Երեկունը պարկեշտ պարգևներէ մեր զրոյանը և ձեռքերը լեցուն տուն կ'դառնայինք : Ընտանիքը՝ տանիքին վրայ (զոր Նաբօլիոյ մէջ սօթիքի կ'կոչեն) զիշերը կ'ժողվուէր քունի ժամերը սպասելու համար : Չկայ աւելի նկարչական բան մը այս կլիմային դեղեցիկ զիշերներու մէջ, լուսնի լուսով ասթրիքօյին տեսարանին չափ :

Գիւղի ցած և քառակուսի տունը կ'նմանի նախնի պատուանդանի մը, որ կենդանի խումբեր և արձաններ կ'կրէ :

Տան բոլոր բնակիչները հոն կ'եւլեն, կ'շարժին և կ'նստին տեսակ տեսակ զիրքով . լուսնի լոյսը կամ ճրագի նշոյլները այս կիսանկարները կ'ստուերագրեն կամ կ'գծագրեն կապոյտ երկնից տակ : Պատաւ մայրը կ'մանէ, հայրը իր հողէ և եղէգնեայ ծխաձիղը կ'քաշէ, փոքրիկ տղաքները տանիքին ծայրը արմուկի վրայ յե-

նած կ'երգեն ծանր եղանակներով նաւաստիներու այն դիզական տաղերը՝ որոնց երկար և հնչող ձայնը կ'նմանի ալիքներէ տանջուած փայտին ողբին, կամ արևու մէջ ճպտուի կծու ձայնին : Աւերջապէս աղջիկները կ'երեկին իրենց կարճ պատմաճանով, մերկ ոտքերով, ոսկիէ և մետաքսէ զարդարուած կանաչ հանդերձներով, և որոնց երկայն ուսերուն վրայ երեքած խարտեաշ վարսերը մեծ հանդուցներով կապուած թաշկինակով մը ծածկուած են գլխին ետը փոշիէն պատնարուելու համար :

Հատ անդամ առանձին կամ իրենց քրոջը հետ կ'պարեն. մին կիթառ մը կ'բռնէ, միւսը իր գլխին վրայ պղնձէ բոժոժներով դափ մը կ'վերցնէ : Այս երկու նուազարանները, մին ողբալի և թեթև, միւսը միօրինակ և անձայն, սքանչելի կերպով կ'յարմարին, դրեթէ առանց արուեստի ցուցնելու մարդկային սրտի երկու փոփոխակի եղանակները. տրամութիւնը և ուրախութիւնը : Ամառ գիշերները թէ կղզիներու և թէ հարօլիոյ գիւղին գրեթէ ամէն տանիքի վրայ կ'լստին այս ձայները մինչև անդամ նաւակներու մէջ : Սոյն օդային ներդաշնակութիւնը՝ որ վայրէ 'ի վայր ծովն մինչև լեւները ականջի կ'հետեի, կ'նմանի միջատի մը բզբզմին զոր ջերմութիւնը կ'նմանի և մրմնջել կուտայ գեղեցիկ երկնից տակ : Այն խեղճ միջատը մարդս է, որ Աստուծոյ առջև քանի մ'որ իր երեստասարդութիւնը և սէրը կ'երգէ և յետոյ կ'լուէ յախտեանս : Տանիքներու բարձունքէ ցրուած այս եղանակները չը կրցայ երբէք մտիկ ընել առանց կանկ առնելու և առանց սրտիս ճնկելը զգալու, միշտ պայթելու պատրաստ ներքին ուրախութենէ կամ իզմէ առելի դօրստ որ սեամաղձութենէ :

9

Այսպէս էին նաև Անտրէայի տանիքին ձիւրքերը, երածշտուութիւնը և ձայները : Արացիէլա կիթառ կ'զարնէր և Պէբբօ իր քրոջը կ'ընկերանար մանկական մասերը ոստոստել տալով այն

փոքրիկ դափին վրայ՝ որ առաջ իր օրորոցին մէջ զինք քնացնելու ծառայած էր : Թէև նուագարանները ուրախ և ձևերը զուարթ սակայն ընթացքը ախար էր, եղանակները՝ յամբ և յուշիկ, սըրտի մէջի թմրած թելերը կ'կտրէին : Այսպէս է միշտ երածշտութիւնը երբ ականջի պարսպ խաղալիկ մը չէ, այլ զղացումներու գաշնակաւոր հառաչ մը որ ձայնին միջոցաւ հոգիէն կ'ելլէ : Բոլոր իր ձայները հառաչներ են, բոլոր իր եղանակները իրենց ձայնին հետ արցունքներ կ'զլորեն : Երբէք մարդու մը սրտին վրայ խիստ չ'զարնուիր առանց արտասուքներ գուրս հանելու. այնչափ բնութեան խորը արամութեամբ լի է. և այնչափ զինք շարժողը շուրթերու վրայ զուարթութիւն և աչերու վրայ ամպեր շրջել կուտայ . . . :

Ե

Երբ մանկամարդ աղջիկը մեզմէ ստիպուած համեստաբար կ'ելլէր Բարանիէլա պարելու եղբորմէն զարնուած դափին ձայնէն, և այս ազգային պարին դարձող շարժումէ յափշտակուած ոտքերուն վրայ կ'զառնար թեւերը վայելչապէս բարձրացուցած իր մատերով փայտեայ բամբիւին ծափերու նմանցնելով, իր մերկ ոտքերու քայլերը տանիքին վրայ անձրևի կաթիլներու պէս շտապել կուտար : Այո, այն աստն իսկ օգին մէջ, ձևերուն մէջ, այս գործնական մոլեղնութեան չափազանցութեան մէջ անգամ ծանրաբարոյ և տխուր բան մի կար, իբր թէ ամէն ուրախութիւն անցաւ խելագարութիւն մը, և երջանկութեան կայծ մը տեսնուելու համար ըլլար, և թէ երեստասարդութիւնը և գեղեցկութիւնը անգամ պէտք ունէին մոռնալ մինչև մոլորութիւն և թմբիկ մինչև յիմարութիւն :

Ը

Շատ անգամ ծանր կերպով մեր հիւրընկալներու հետ կ'իս-
տակցէինք, իրենց կեանքը, ընտանեկան աւանդութիւնները և
յիշատակները պատմել աւելով: Ամէն մէկ ընտանիք կրնայ պատ-
մութիւն կամ գիւցարներդութիւն մ'ըլլալ այնպիսի անձի մը՝ որ
զիսէ լաւ հասկնալ: Այս ձկնորսին ընտանիքն ալ իր անցեալ
աղնուութիւնը, հարստութիւնը և փառքը ունէր:

Անտրէայի հօւր Էմիլ կղզիէն Յոյն վաճառական մ'էր: Իր
կրօնքին համար Աթէնքի բաշայէն հալածուելով՝ զիշեր մը իր
ամուսնոյն, աղջկանց, տղոց և հարստութեան հետ վաճառական
նաւ մը մէջ մտնելով Բրօսիտա փախեր էր. ուր թղթակիցներ
ունէր և որու բնակիչները իրեն պէս Յոյն էին: Ընդարձակ տե-
ղեր սուած էր որոնցմէ հիմն մնացած էր միայն նստած կալուած-
նին և քաղքին գերեզմանատան քանի մը գերեզմաններու վրայ
քանդակուած իրենց նախնեաց անունները: Աղջիկները կղզւոյն
վանքին մէջ կուսութեամբ մտած էին: Տղաքները իրենց բոլոր
հարստութիւնը կորսնցուցիւր էին այլէկոծութեանց մէջ ընկղմող
նաւերու հետ: Ընտանիքը կործանման մէջ ինկած էր: Մինչև
անգամ իր գեղեցիկ Յոյն անուր Բրօսիտայի ձկնորսի փոխած
էր: « Երբ տուն մը կործանի, կ'ըսէր մեզ Անտրէա, մինչև ան-
գամ վերջին քարը կ'անհետացնեն: Հախս բոլոր ստացուածքէ
մնացած է միայն երկու թիւրս, ձեր շնորհած նաւակը, այս խոր-
ձիթը՝ որ իր տերերը չ'կրնար մտոցանել և Աստուծոյ շնորհքը »:

Թ

Մայրը և աղջիկը մեզի ալ կ'հարցնէին թէ մեք ո՞վ էինք,
ո՞ր էր մեր երկիրը, ի՞նչ կ'ընէին մեր ծնողքները. թէ հայր,

մայր, եղբայրներ, քոյրեր, տուն մը, թղենիներ և այդիներ չու-
նէինք. ինչու այսչափ երիտասարդ ամէն ինչ թողած և եկած
էինք Նաբոլոյ ծոցին մէջ թխալարելու, կարգալու, զրելու,
արեւին մէջ խորհելու և հողի վրայ պտակելու համար: Արչափ
ըսէինք՝ չէինք կրնար երբէք հասկցնել թէ երկինք և ծով զի-
տելու համար էր, թէ մեր հողին արեւին մէջ շնչելու, մեր ե-
րիտասարդութիւնը խմորելու և աղղեցութիւններ, զգացումներ և
զաղափարներ ժողվելու համար էր, որով գուցէ ետքը ոտանաւոր
պիտի զրէինք, ինչպէս որ զրբերու մէջ գրուած կ'տեսնէին կամ
այն Նաբոլոյ բանաստեղծներու պէս՝ որ կիրակի իրիկունները
նաւարարներու կ'խօսին ծովեզերքը կամ Փարձելինան: « Այն-
ղէք զմեզ ծաղրել, կ'ըսէր Արացիէլա խնդալէն մարելով. գուք
բանաստեղծներ. բայց գուք անոնց դիզուած մազերը և մոլեգին
աչերը չունիք, գուք բանաստեղծներ, բայց կիթափ վրայ ե-
ղանակ մ'անգամ զարնել չէք զիտեր: Ի՞նչ բանով ուրեմն պի-
տի նուազէք ձեր տաղերը »:

Ետքը շուրթերը խեղաթիւրելով զլուխը կ'որորէր և կ'նեղա-
նար որ չէինք ուղեր ըսել ճշմարտութիւնը:

Ժ

Երբեմն ահա՞ կ'ասկած մը հողոյն մէջէ կ'անցնէր և իր նայ-
ուածքի մէջ տարակոյս և վախի շուք մը կ'ձգէր: Բայց չէր տե-
ւեր ասիկա: Ալտէինք կամայ մը իր մեծ մօրը ըսելը. « Ա՛յ,
կարելի չէ. չար գործի մը համար իրենց երկրէ վնասուած փա-
խտականներ չեն կրնար ըլլալ: Շատ երիտասարդ և խիստ բա-
րի են չարիքը ճանչնալու համար »: Այն ատեն ստկալի յան-
ցանքի մը պատմութիւնը ընելով կ'զբօսունինք որոնց հեղինակը
ըլլալնիս կ'յայտնէինք: Մեր հանդարտ և յստակ ճակատները,
մաքուր աչերը, ծիծաղկոտ շուրթերը և բաց սիրտերը, երևա-
կայական ոճիրնուս ներհակը կ'հաստատէին, և ասով խնդալէ
կ'մարէին ինք և իր եղբայրը: Այսպէս շուտ մը կ'ասկածի ամէն
հաւանականութիւն կ'փարատէր:

ԺԱ.

Արացիէլլա շատ անգամ կ'հարցնէր մեզ թէ ի՞նչ կ'կարգա-
յինք ամէն օր զբքերու մէջ: Ա'կարծէր թէ աղօթքներ են, վասն
զի միայն եկեղեցւոյ մէջ զբքեր տեսած էր այն բարեսպաշաներու
ձեռքը՝ որոնք կարդալ զիտէին և եկեղեցւոյ մէջ երէցին սուրբ
խօսքերու կ'հետեւէին: Չմեզ շատ բարեսպաշտ կ'կարծէր, վասն
զի ամբողջ օրեր խորհրդաւոր խօսքեր մըմուտով կ'անցընէինք:
Սակայն կ'զարմանար թէ ինչո՞ւ երէց կամ ճգնաւոր չէինք ըլլար
Նարբոլիայ ուսումնարանին կամ կղզեաց քանի մը վանքերու մէջ:
Հաւտացնելու համար մէկ երկու անգամ կարդալ փորձեցինք ի-
րենց սովոր լեզուով թարգմանելով ֆօսթօլոյէ հատուածներ և
մեր Թասիթին քանի մը զեղեցիկ մասերը: Ա'խորհէինք թէ Ի-
տալացի արտորեալին այս հայրենասիրական հառաչները և կայ-
սերական Հառվմայ վսեմ ողբերգութիւնները մեր պարզամիտ
ունկնդրաց վրայ խիստ պիտի ազդէին. վասն զի ժողովուրդը իր
բնագլուխին մէջ հայրենասիրութիւն, զղացման մէջ զիւցազնու-
թիւն և նայտածքին մէջ թատերգութիւն ունի: Մանաւանդ մեծ
անկումները և վսեմ մահերը անոր մասց մէջ լաւ կ'զրոշմունին:
Իայց շուտ մը զիտեցինք թէ այն ասենաբանութիւնները և տե-
սարանները՝ որ մեր վրայ այնչափ իշխանութիւն ունէին, այս սրբզ
հոգիներու վրայ չէին ազդեր: Քաղաքական պատմութեան զգա-
ցումը՝ որ հանդարտ մարդերու փափաքն է, ժողովուրդին մէջ
այնչափ զօրաւոր չէ:

Այս խեղճ ձկնորսները չէին հասկնար թէ ինչո՞ւ համար Օր-
թիա կ'յուսահատէր և ինքզինք կ'սպաննէր քանի որ կենաց ամէն
հեշտութիւնները կրնար վայելել, ժուռ գալ սուանց աշխատե-
լու, յարեզն նայել, սիրողն սիրել, և զԱստուած պաշտել Պրան-
թայի կանաչ և պարարտ եզերքներու վրայ:

« Ինչո՞ւ այսպէս ինքզինք չարչարել, կ'ըսէին, այնպիսի կար-
ծեաց համար որ մինչև սիրտը չեն թափանցեր: Իր ինչ փոյթը

որ Միլանի մէջ Աւստրիացիք կամ Գաղղիացիք կ'իշխեն: Յիմա-
րութիւն է ասանկ բաներու համար սրտովը »: Եւ այսպէս մը-
տիկ չէին ընէր:

ԺԲ

Իսկ Թասիթը նուազ կ'հասկնային: Այսպրութեան կամ հան-
րաստութեան այն մարդիկ՝ որ մէկզմէկ կ'սպաննէին ոմանք տի-
րելու, ոմանք զերութեան մէջ չապրելու համար, զահու համար
ոճիքներ, փառքի համար առաքինութիւններ, ապագային համար
զոհեր չէին ազդեր իրենց վրայ: Պատմութեան փոթորիկները ի-
րենց զլլտէն շատ բարձր կ'սրայթէին զիրենք շարժելու համար:
Անմանէին անոնք լեռներու վրայի որոտումներու զոր առանց նե-
ղուելու կ'թողուս որ զլորին, վասն զի զազաթներու վրայ միայն
կ'իյնան և ձկնորսի առագաստը ու կալուածատէրի տունը չեն
ցնցեր:

Թասիթ քաղաքագէտներու և փիլիսոփաներու միայն սիրելի է.
պատմութեան Պղատոնն է այն: Իր զգացողութիւնը սովորի հա-
մար շատ նուրբ է: Պէտք է զան հասկնալու համար հրապա-
րական աղմուկին կամ պալատան գաղտնի դարաններու մէջ ապ-
բած ըլլալ: Հանեցէք այս տեսարաններէ ազատութիւնը, փառա-
սիրութիւնը և փառքը, ի՞նչ կ'մնայ: Այն թատերգութեանց ե-
րեք երևելի դերասանները ասոնք են: Սակայն ժողովուրդը այս
երեք տրիփը չճանչնար. վասն զի մտքի տրիփներ են մինչդեռ
ինք միայն սրտինը ունի: Իմացանք այս յօգուածներու մեր շուրջն
եղողներուն ազգած ցրտութիւնը և զարմանքը:

Իրիկուն մը Պօլ և Ալիքինէ կարգալ փորձեցինք: Ես թարգ-
մանեցի կարդալով, վասն զի այնչափ զան կարդալու սովորու-
թիւն ըրած էի որ զրեթէ գոց գիտէի: Իտալիոյ մէջ երկար
ճամբորդութիւնս զիս երկրին լեզուին հետ ընտելացուցած ըլ-
լալով բացատրութիւնները խիստ զիւրիւն էին ինծի համար և
շուրթերէս մայրենի լեզուի պէս կ'սահէին: Հազիւ թէ այս ըն-

Թերցանութիւնը սկսուած էր որ մեր ունկնդրաց կերպարանը փոխուեցաւ, և մտադիր ամփոփ մտքի երևոյթ մ'առին. սրտի յուզման ճշմարիտ ասպոցոյց :

Գտեր էինք այն թեւը որ հաւասարապէս ամէն մարդկանց ամէն տարիքներու և ամէն աստիճաններու հողոյն մէջ կ'շարժի, զգացման թեւը, տիեզերական թեւը, անոր մէկ հնչման մէջ արուեստին յաւիտենական ճշմարտութիւնը կ'սպարուհակէ, բնութիւնը և Աստուծոյ սէրը :

ԺԳ

Գեռ քանի մը երես կարդացած էի և արդէն ծերք, աղջիկ, աղայ, ամենքը իրենց զիրքը փոխեր էին : Ձկնորսը՝ արմուկը ծընկան վրայ և ականջը առ իս ծուած կ'մոռնար ծխածիզը քաշելու : Պատու մեծ մայրը զիմացս նստած երկու ձեռքերը կցած էր ծնօտին, տաճարներու սալայատակին վրայ նստած Աստուծոյ խօսքը մտիկ ընող աղքատ կիներու ձեկն պէս : Պէրբօ տանիքին պատին վրայէ իջնելով ուր քիչ մ'առաջ նստած էր, առանց ձայն մը հանելու իր կիթառը վար թողուց և իր ձեռքը կոթին վրայ դրաւ վախճալով որ հովը անոր թեւերը չհնչեցնէ : Արացիէլա՝ որ ընդհանրապէս քիչ մը հեռի կ'կենար, անզգայաբար խնձի կը մօտէր, իբր թէ զբքին մէջ պահուած հրապուրանաց զօրութենէ զիթուած ըլլար :

Տանիքին պատին յենած՝ որուն ծայրը ես երկնցած էի, քիչ քիչ իմ կողմն կ'մօտէր իր ձախ ձեռքին վրայ յենելով որ գետին կ'կախուէր Հուովմայեցի սուսերամարտիկ վերաւորելոյն ձեկն պէս : Խոշոր և բացուած աչերով երբեմն զիրքը կ'նայէր երբեմն շուրթերս ուսկից կ'սահէր պատմութիւնը. երբեմն շուրթերուս և զբքին մէջի պարապ միջոցը իբր թէ նայուծքով կ'փնտէր այն աներևոյթ խելքը որ կ'թարգմանէր : Թատրոնի բաբախիւններու համաձայն՝ կ'լսէի իր անհաւասար շունչին երբեմն դողբիլը և երբեմն նորոյիլը, լեռը ելլող մէկու մը շնչառութեան նման որ

երբեմն երբեմն կանկ կ'առնէ ողի առնելու համար : Դեռ պատմութեան կէսը չհասած խեղճ աղջիկը մոռցած էր ինձի հետ ունեցած քիչ մը վայրենի զգուշութիւնը : Չեռքերուս վրայ իր շնչառութեան ջերմութիւնը կ'զգայի : Ճակտիս վրայ իր մազերը կը սարսուային, և թերթերը մատերուս քով իր այտերէ հոսած երկու երեք տոչորոզ արտասուք կ'բծէին :

ԺԴ

Իմ յամր և միօրինակ ձայնէ զատ, որ այս ձկնորսներու ընտանեաց բառ առ բառ կ'թարգմանէր սրտի մը դիւցազներգութիւնը, միայն ծովուն հեռաւոր բաղխումներու աղմուկը կ'լսուէր որ մեր ռաից տակ եղերքը կ'զարնէր : Այս աղմուկն իսկ ընթերցանութեան հետ ներդաշնակ էր : Արածես թէ պատմութեան նախազուշակուած վախճանն էր որ առջևէն օդին մէջ կ'որոտար վէպին սկիզբին և շարունակութեան մէջ : Արցափ պատմութիւնը յառաջանար՝ այնչափ մեր պարզամիտ ունկնդիրները կ'համակէր : Երբ զաղղարէն բառին ճիշդ բացատրութիւնը գտնելու համար երբեմն կ'վարանէի, Արացիէլա՝ որ քիչ մը ատեն 'ի վեր իր զենջակով հովին դէմ ճրագը կ'պատասպարէր, թերթերուն կ'մօտեցնէր զան կարծելով թէ բոցին լոյսով աւելի շուտ պիտի ցայտէր իմ աչերէ իմանալէ միտքը, և իմ շուրթերէ աւելի շուտ պիտի ելլէին խօսքերը : Քմծիծաղով ձեռքով ճրագը կ'հրէի առանց նայուածքս երեսէն դարձնելու և իր արցունքներէ մատերս արքցած կ'զգայի :

ԺԵ

Երբ հասայ այն մասը՝ ուր Աիրդինէ հօրաքոյրէն Գաղղիա կանչուելով իր անձին երկուքի բաժնուիլը կ'զգայ և կ'աշխատի Պզօղ միսթարիւ թղենիններու տակ վերադարձի վրայ խօսելով

և զինք տանող ծովը ցուցնելով, հասորը զոցեցի և ընթերցա-
 նութիւնը հետևեալ օրուան թողուցի : Ասիկա խեղճ մարդոց հա-
 մար հարուած մ'եղաւ : Արացիւն լա նախ իմ, յետոյ բարեկամիս
 առջև ծնկան վրայ եկաւ աղաչելու որ սրատմութիւնը լմնցնենք :
 Բայց 'ի զուր : Ա՛ռգէինք աւելի զրգուել զինքը, և մեզի համար
 ալ փորձին հաճոյքը : Այն ատեն քաշեց իմ ձեռքերէ զիրքը,
 բացաւ իբր թէ շատ փափաքելով տառերը պիտի կրնար հասկը-
 նալ : Խօսեցաւ անոր հետ և համբուրեց զան. յարգանօք իմ
 ծնկերու վրայ վերստին գրաւ և ձեռքերը իրար կցած սրազատե-
 լով կ'նայէր ինձ :

Հանդարտութեան մէջ իր անարատ և ծիծաղկոտ բայց քիչ
 մը խիստ կերպարանքը յանկարծ այս սրատմութեան տրիփով և
 համակրական զորովով զբաւուած քիչ մը սրատմութեան կենդա-
 նութենէ, խռովութենէ և ազդուութենէ զզայցուած էր : Պիտի
 ըսուէր թէ անակնկալ խռովութիւն մը մարմնոյ և արցունքի փո-
 խած էր այս զեղեցիկ մարմարիոնը : Գեռահաս աղջիկը իր մին-
 չև հիմա թմբեալ ողւոյն Ալիբիւնէի ողւոյն մէջ յայտնուիլը
 կ'զգար : Այս կէս ժամուան մէջ վեց տարի աւելի մեծցած էր :
 Իր ճակատը, աչերուն և այտերուն կապտադոյն սպիտակը տրիփին
 մրրկալի զոյները կ'նկարէին : Հանդարտ և սրատարած ջուրի
 մը պէս էր ան որու վրայ առաջին անգամ արևը, հովը և շու-
 քը կուտելու եկած էին յանկարծ : Այս զիբքին մէջ զինք գի-
 տելէ չէինք յադեր : Այն որ մինչև հիմա միայն զուարճութիւն
 զգացուցած էր մեզ զրեթէ յարգանք արտայայտեց : Պաղատեցաւ
 մեզ որ զիրքը շարունակենք, բայց 'ի զուր. շուգեցինք մեր իշ-
 խանութիւնը մէկ անգամուան մէջ նուազեցնել և իր զեղեցիկ ար-
 տասուայ հոսիլը շատ կ'սիրէինք մէկ օրուան մէջ անոնց ազդիւ-
 րը սպառելու համար : Քրթմնջելով քաշուեցաւ, և բարկու-
 թեամբ իր ճրագը մարեց :

ԺԳ

Հետևեալ օրը սարփինաներու տակ երբ տեսայ զինքն ուղեցի
 հետը խօսիլ բայց իր արցունքները պահել ուղղի մը պէս դար-
 ձաւ ինձմէ և մերժեց պատասխանել : Իր թեթև և զծով մը պա-
 տած աչերէ, այտերուն աւելի տծոյն գեղնութենէն և բերանին
 ծայրերուն ամիտի ու վայելուչ ճնշումն յայտնի էր թէ քնա-
 ցած չէր, և թէ սիրար փղձկած էր նախընթաց զիշերուան ե-
 րեակայական վշտերէն : Ինչ հրաշալի իշխանութիւն գրքի մը
 որ աղէտ աղջկան մը և անուս ընտանիքի սրտին վրայ բուն ի-
 րականութեան զօրութեամբ կ'ազդէ և որուն ընթերցանութիւնը
 սրտի մը կենաց մէջ զէպք մ'է :

Ասան զի մինչդեռ ես զիւցազներգութիւնը կ'թարգմանէի, ան
 ալ բնութիւնը թարգմանած էր, և այն ամենասարգ զէպքերը,
 երկու խեղճ մօր ռաից տակ երկու տղոց օրօրոցը, անոնց անմեղ
 սէրը, վշտալի բաժանումը, մահուանէ խաբուած վերադարձը,
 նուարեկութիւնը, և այն թղենիներու տակ մէկ սիրտ պարունա-
 կող երկու զերեզմանները այնպիսի բաներ են՝ զորս բոլոր աշ-
 խարհ սրազատէն մինչև ձկնորսի մը խրճիթը կ'զգայ և կ'հասկնայ :
 Քանաստեղծք հանձարը շատ հեռի կ'փնտռեն մինչդեռ սրտի մէջն
 է և եթէ քանի մը խիստ սարգ եղանակներ բարեպաշտօրէն և
 պատահմամբ գալին այն նուազարանին՝ զոր Աստուած լարած է,
 կ'բաւեն ամբողջ դար մը լացնել, և ըլլալ սիրոյ պէս ժողովըր-
 դային և զգայման պէս համակրական : Արուեստից մէջ վսեմու-
 թիւնը կ'յոգնեցնէ, զեղեցիկութիւնը կ'խաբէ, միայն ազդուն ան-
 սխալ է : Այն որ շարժեցնել գիտէ՝ ամէն ինչ գիտէ : Աւելի
 հանձար կայ արտասուքի մը քան թէ տիեզերքիս բոլոր վարժա-
 րաններու և թանգարաններու մէջ : Մարդս կ'նմանի ծառի մը որ
 կ'թոթուես սրտուղները թափել տալու համար. երբէք առանց ար-
 տօսը թափելու չշարժիր մարդս :

ԺԷ

Տունը բոլոր օրը տխուր էր իբր թէ խոնարհ ընտանիքին մէջ վշտակի դէպք մը պատահած ըլլար : Գրեթէ առանց բառ մը խօսելու ճաշէ համար ժողովուրդեան , զատուեցան և վերստին միասնեղ զանուեցան առանց քովի ծաղելու : Յայտնի էր որ Կրայի էլլա պարտեղին կամ տան մէջ զբաղած ատեն սրտով չէր աշխատէր : Յաճախ արևուն ընթացքը կ'դիտէր և կ'երեւէր թէ այս օրէն միայն երեկոյեան կ'սպասէր :

Եբբ իրիկուն եղաւ և ասթրիքօյի վրայ մեր սովորական տեղերը բռնեցինք , զիբքը բացի և ըմպուցի պատմութիւնը հեծկլամանաց մէջ : Հայր , մայր , տղայք , բարեկամս , ես իսկ ընդհանուր յուզման կ'մասնակցէինք : Ակամայ ձայնիս տխուր և ծանր հնչիւնը կ'իջնէր դէպքերու տխրութենէն և խօսքերուն ազդուութենէ , այս խօսքերէ վերջը հեռաւորութենէ կարծես թէ անանկ կ'ներդործէին հողոյն որ սիրտը ալ չէր տրոփեր և միայն տրբամութեամբ , կրօնքով և յիշատակով այս աշխարհի բաներու կը մասնակցէր :

ԺԸ

Անկարելի եղաւ մեզ այս պատմութենէ ետքը սնտի խօսքեր արտասանել : Կրայի էլլա անշարժ և առանց ձեռն մտայ մտիկ ընելու զիբքի մէջ , որպէս թէ գեռ մտիկ կ'ընէր : Լուռութիւնը , ճշմարիտ և տեղգական ազդեցութիւններու ծափահարութիւնը , մէկէ մը չ'վտարուեցաւ , ամէն ոք կ'յարդէր ուրիշին այն մտածումները՝ զորս ինք կ'զգար : Ճրագը գրեթէ անցած անզոյարար մարեցաւ և մէկը իր ձեռքը չ'երկնցուց որ զայն վերստին վառէ : Ընտանիքն ելաւ , գաղտնասէս քաշուեցաւ : Քարեկամս և ես առանձին մնացած՝ զարմացանք ճշմարտութեան պարզութեան և զգացման

բոլոր մարդոց , բոլոր հասակի և բոլոր քաղաքացի վրայ ունեցած ամենակարողութեան վրայ :

Թերևս ուրիշ զրացում մը մեր սրտին խորը կ'ընթեր : Կրայի էլլայի զրաւիչ կերպարանքը , իր արցունքներէ սլլայլած , սիրով , սրտմութեամբ յափշտակուած , մեր երազներու մէջ կ'երեւար Ախրիլինիա երկնային ստեղծուածին հետ : Այս երկու աշունները , երկու մանուկները , թափառող երեկոյթներու մէջ խառնուած մեր խռովեալ քունը մինչև առաւօտ հմայեցին և տխրեցին : Այն օրուան իրիկունը և հետեւեալ երկու օրերը պէտք եղաւ նոյն պատմութիւնը երկու անգամ վերստին կարգալ մասնկամարդ աղջկան : Հարիւր անգամ իսկ շարունակ կարգալու ըլլայինք պիտի չ'յաղեր գեռ խնդրելէ : Ասիկա հարաւային երեակայութիւններու մտախոհ և խորին բնաւորութեան յասուկ է որ բանաստեղծութեան և երաժշտութեան մէջ փոփոխութիւն չեն փնտուեր : Երաժշտութիւնը և բանաստեղծութիւնը տեսակ մը նիւթեր են որոնց վրայ ամէն մէկը իր անձնական զրացումները կը գործէ : Ժողովրդեան պէս դարերով նոյն պատմութեան և նոյն եղանակին վրայ առանց յաղուրդի կ'սնանին : Բնութիւնն իսկ , այն բարձրագոյն բանաստեղծութիւնը և երաժշտութիւնը , երկու երեք խօսքերէ և երկու երեք եղանակներէ զատ ինչ ունի որոնցմով մարդուս մանկութեան սկիզբէն մինչև ծերութեան վերջերը հառաչը կ'ախրեցնէ կամ կ'զուարթացնէ :

ԺԹ

Իններորդ օրը արևուն ծագման ատեն զիշերահատասարէն հողմը վերջապէս թուլցաւ , և քանի մը ժամուան մէջ ծովը ամառուան պէս հանդարտ եղաւ : Նաբօլոյ կղերքին լեռներն անպամ ինչպէս որ ջուրերը և երկինքը սաստիկ տաքերու ամիսներէն աւելի յատակ և աւելի կապոյտ հեղուկի մէջ կ'լողային , իբր թէ ծովը , երկինքն ու լեռները կ'զգային արդէն ձմեռուան առաջին սարսուռը որ օրը կ'ըրկրեղացնէ և սառնամանեաց սառած ջուրին

պէս կ'իայլեցնէ : Այդիներու զեղնած և թզենեայ թուխ տերևները կ'սկսէին իյնալ և բաւր սրտել : Խաղողները ժողովուած էին : Թուզերը ասթըրիքօյի վրայ սրևուն չորցած պատատուած էին կիներէ հիւսուած ծովային խոտերէ հասա զամբիւղներո՞ մէջ : Նաւակը կ'աճասարէր ծովուն մէջ փորձուելու և ծերունի ձկնորսը՝ իր ընտանիքը Մարձելինա տանելու : Տունը և տանիքը մաքրեցին . սղըիւրը խոշոր քարով մը զոյեցին , որպէս զի թարշամած տերևներն ու ձմեռուան ջուրերը աւազանը չ'աղտեղեն : Իւրը ժայռին մէջ փորած սղտիկ փոսէն հանեցին և ամաններու մէջ դրին : Տղայք ծով իջեցուցին զանոնք : Անկողններէ և ծածկոյներէ պատաա մ'ըրին չուաններով փաթթուած : Աերջին անգամ մը վառարանին վրայ թողուցած պատկերին առջև կանթեղը վառեցին : Աստուածածնայ առջև վերջին աղօթք մ'ըրին տունը , թզենին և սյդին պահպանելու համար , զորս անբնակ սկաի ձգէին քանի մ'ամսուան համար , և դուռը զոյեցին : Բանալին քաղեղով ծածկուած ժայռի մը ճեղքին խորշին մէջ պահեցին որպէս զի ձկնորսը եթէ ձմեռը դար և սունը տեսնել ուղէր՝ կարենար գտնել : Յետոյ ծով իջանք , իւրը , հացերը և պտուղները նաւակը փոխադրելու համար ընտանիքին օգնելով :

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Դ

Ա.

Պայիա ծոցին մէջէ և Բօզիլիբի խոտորնակի գառիվայրներէ անցնելով մեր Նաբօլի վերադարձը ճշմարիտ հանդէս մ'եղաւ դեռա հասա աղջկան , տղոց և մեզի համար , և յաղթանակ մը՝ Անարէայի : Գիշերուան դէմ՝ Մարձելինա մտանք երգելով : Չխորսին հին բարեկամները և զբայցիները իր նոր նաւակին վրայ ըզմայլելէ չէին դադրեր : Պարսելու և ցամաք քաշելու օգնեցին անոր : Եւ որովհետև Անարէայի պատուիրած էինք նաւակը որու պարտաւորիլը չ'այտնելու՝ մեզի քիչ ուշադրութիւն ըրին :

Մենք ալ նաւակը աւաղին վրայ քաշելով թուզերու և խաղողներու սակառները Անարէայի շտեմարանը տանելէ ետքը , որու քով երեք ցած սենեակներ կային ուր կ'ընակէին պառաւ մայրը , կրացիլէլան և սղտիկ տղաքը , մեկնեցանք անտես : Արտերնիս բաւական շարժած Նաբօլիոյ բազմամարդ փողոցներու աղմկալի շփոթին մէջէ անցնելով մեր բնակարանը մտանք վերստին :

Բ

Կ'խորհէինք Նաբօլիոյ մէջ քանի մը օր հանդստանալէ վերջը եթէ ծովը ներէր՝ նոյն կեանքը վարել ձկնորսին հետ : Երեք ամսէ 'ի վեր այնչափ սովորած էինք մեր հագուստին պարզութեան և նաւակին մերկութեան՝ որ անկողինը , սենեակներու կահը և քաղաքի հաղուստը նեղիչ և ձանձրալի շոտլաթիւն մը կ'թուէին մեզ : Կ'ուսայինք քիչ օրէ վերջ դարձեալ մեր նախկին կենաց ընթացքին գառնալ : Բայց հետևեալ օրը մեր ետ մնացած նամակները նամակատունը փնտռելու երթալով բարեկամս

մօրմէն գրուած նամակ մը գտաւ : Առանց յապաղելու իր որդին Գաղղիա կ'իւնչէր քրոջը ամուսնութեան ներկայ ըլլալու : Փեռան մինչև Հռովմ' իրեն զիմաւորելու սխիտի դար : Թուականներուն նայելով պէտք էր արդէն հասած ըլլալ : Երկարաձգել անհար էր , հարկ էր մեկնիլ :

Պէտք էի հետը երթալ : Առանձնութեան և սրտահարի չեմ զիտեր ինչ հրապոյր մը կ'կատեցներ զիս : Նաւարարի կեանքը , ձկնորսին տունը , Կրայիէլայի կերպարանքը թերևս մաս մը ունէին բայց շփոթ կերպով : Ազատութեան մոլորութիւնը , երկրէս երեք հարիւր մղոն հեռի ինքզինքիս բաւելու հպարտութիւնը , անորոշին և անձանթիւն արիփը , սուղոյ երևակայութեանց այս օգային տեսիլները աւելի ազդեցութիւն ունէին մտացս :

Այրական ցաւակցութեամբ բաժնուեցանք : Խոստացաւ ինձ իսկոյն վերստին զալ զանել որդիական և եղբայրական սրտաքը կատարել յետոյ : Յիսուն լուի փոխ սուաւ ինձ քսակիս վեցամսեայ սրտաքը լեցնելու համար և մեկնեցաւ :

Գ

Այս երթը , բարեկամիս այս բացակայութիւնը , որ իմ վրայ այն ազդեցութիւնը ունէր՝ ինչ որ մանկան մը վրայ կ'ըլլայ մեծ եղբօր մը խնամակալութիւնը , այնպիսի միայնութեան մէջ թողուցին զիս որ բոլոր ժամերը աւելի երկար և տաղակալի կ'ընէին և որու մէջ կ'զգայի լէյալ անդունդի մը պէս : Բոլոր մտածումներս , զգացումներս , խօսքերս որ առաջ անոր հետ փոխարինելով կ'ցնդէին , հողոյս մէջ կ'մնային , հոն կ'ապականէին , կը տխրէին և կ'մնային սրտիս վրայ այնպիսի բեռի մը նման՝ որու ծանրութիւնը սիրտս չէր կրնար վերցնել : Այն աղմուկը՝ որ բնութիւն չէր վերաբերեր , այն բաղմութիւնը՝ ուր ոչ մէկը անուն գիտէր , այն սենեակը՝ ուր նայուածք մը ինձ չէր պատասխաներ , այն պանդոկի կեանքը՝ ուր անդադար անձանթներու կ'հանդակիս և ուր լուին սեղան մը կ'նստիս միշտ նոր և միշտ անտարբեր մար-

դերու քով . այն զիրքերը՝ զորս հարիւր անգամ կարդացած ես և որոնց անշարժ տարրերը միշտ նոյն խօսքերը կ'ըսեն նոյն պարսպերութեան մէջ և նոյն տեղը . այս ամէնը՝ որ Հռովմայ և Նաբօլոյ մէջ այնչափ քաղցր կ'թուէր ինձ մեր ամառուան արշաւանքէն և գատարի ու թափառական կեանքէն առաջ , հիմա ձանձրալի և տաժանելի դարձած էին ինձ : Սիրտս սեւամաղձութեան մէջ կ'ընկղմէր :

Քանի մը օր այս տխրութիւնը փողոցէ փողոց , թատրոնէ թատրոն և զբէ գիրք քարշեցի առանց զայն վրայէս թոթովու կարողութիւնը ունենալու : Պառկեցայ հիւանդ այն ախտով զոր երկրի հիւանդութիւն կ'իւղչեն : Գլուխս ծանր էր , և սրունդս չէին կրնար զիս վերցնել : Գունասա և ուժաթափ էի : Ա՛լ չէի ուտեր : Առութիւնը կ'տխրեցնէր զիս , աղմուկէ չէի ախորժեր . զիշերները անքուն կ'անցընէի և օրերը անկողնիս վրայ պառկած , ելլելու ոչ փափաքը և ոչ ոյժը ունենալով : Մօրս ծեր ազգականը միայն կրնար ինձի հոգ տանիլ , բայց ան ալ Նաբօլիէ երսուն մղոն հեռի Ապրիւզներու մէջ քանի մ'ամիս անցընելու գացած էր ուր զործատուներ հաստատել կ'ուզէր : Բըժիշկ մը խնդրեցի , եկաւ , նայեցաւ , երակս զննեց և բան մը չունիմ ըսաւ : Ճշմարիտը այն է որ հիւանդութիւն ունէի որու զեղ մը օգուտ չէր ըներ , հոգւոյ և երևակայութեան հիւանդութիւն մը : Գնաց և ալ չտեսայ զայն :

Դ

Սակայն հետեւեալ օրը այնչափ անհանդիստ էի , որ յուշարութեանս մէջ փնտրեցի թէ որմէ՛ կրնայի քիչ մը օգնութիւն և գութ սպասել եթէ չկրնայի ելլել : Մարձելենայի խեղճ բնատանեայ կերպարանքը որու յիշատակով կ'ապրէի , բնականաբար միտքս եկաւ : Ինձ ծառայող տղայ մը Անտրէան փնտրելու զըկեցի ըսելու անոր թէ երկու օտարականներէ կրասերը հիւանդ ըլլալով կ'խնդրէր զինք տեսնել :

Երբ տղան այս լուրը տարաւ, Անտրէա Պէրբինոյի հետ ծո-
ւլու վրայ էր. մեծ մայրը Շիայիայի եղբրքը ձուկերը ծախելու
կ'ըրաղէր, միայն Արացիէլլա առնն էր իր սղաթիկ եղարց հետ:
Հաղելու ուրեմն դանոնք զբացիի մը յանձնելու, և իր Բրօսիտա-
ցու-հիի ամենէ նոր հաղուտը հաղնելու համար ժամանակ ան-
ցընելով հետեւեցաւ տղուն որ փողոցը ցուցուց, առնը և մինչև
սանդուղը առաջնորդեց անոր:

Մեղմիկ սենեակիս դրան զարնուիլը լսեցի: Գուռը աներևոյթ
ձեռքէ մը հրուած բացուեցաւ. Արացիէլլան տեսայ: Չիս տես-
նելով զթոյ աղաղակ մը ձգեց: Քանի մը քայլ առաւ դէպ 'ի
անկողինս, յետոյ ինքզինք զսպելով և ոտքի վրայ կայնած, ձեռ-
քերը կցած և զենջակին վրայ կախած, զլուխը ձախ ուսին վրայ
ծռած կարեկցութեան զիբքի մէջ. « Ո՛րչափ դունաս է, ըսաւ
իւրովի կամաց մը, և ի՛նչպէս այսչափ քիչ օրեր կարող եղան
այն աստիճան իր երեսը տեղունել. և ո՞ր է միւսը, ըսաւ ետին
դառնալով և աչերով սենեակին մէջ սովորական ընկերս փըն-
տուելով:

— Գնաց, ըսի իրեն, և ես առանձին և անձանօթ եմ՝ Կարօ-
լիոյ մէջ:

— Գնաց, ըսաւ, այսպէս առանձին և հիւանդ թողով զձեզ:
Ուրեմն չէ՞ր սիրեր զձեզ: Ա՛հ, եթէ ես իր տեղը ըլլայի, պիտի
չ'մեկնէի, և սակայն ձեր եղբայրը չեմ ես և միայն ալէկոճու-
թեան օրէն կ'ճանչնամ ձեզ.»:

Ե

Բացատրեցի իրեն թէ բարեկամս մեկնած ատենը հիւանդ չէի:
« Բայց ի՛նչպէս, կրկնեց ուժգին կէս փափուկ և կէս հանդարտ
յանդիմանութեան ձայնով մը, չմտածեցիք թէ Մարձելինայի մէջ
ուրիշ բարեկամներ ունիք: Ա՛հ, կ'իմանամ, յաւելցուց տխրա-
զին թեւոցները և պատմութեան ծայրը դիտելով, թէ աղքատ
ենք, և պիտի ամչննէինք ձեզի այս գեղեցիկ տան մէջ մտնելով:

Հող չէ, շարունակեց սրբելով աչերը, որոնք ճակատիս և թոյլ
բազուկներուս նայելէ չէին զաղբած, եթէ գնեղ անարդէին իսկ
զարձեալ պիտի գայինք:

— Խեղճ Արացիէլլա, պատասխանեցի քմծիծաղով, Աստուած
պահէ զիս այն օրէն որ զիս սիրողներէ ամչնամ »:

Զ

Աթուի մը վրայ նստաւ անկողնիս քով և քիչ մը խօսակցե-
ցանք:

Իր ձայնի հնչիւնը, աչերուն յստակութիւնը, զիբքին վստահ
և հանդարտ արտայայտութիւնը, կերպարանքին պարզմտութիւնը,
կողմնակալ կանանց այն կրճատուած և տխրագին ձայնը որ Ա-
րևելքի պէս սիրոյ բարբաթիւններու մէջ իսկ զերթին հնազանդու-
թիւնը կ'յիշեցնէ, վերջապէս խրճիթին մէջ որու առջև իրեն
հետ անցուցած գեղեցիկ օրերուս յիշատակը, Բրօսիտայի այն ա-
րեղակը որ կ'կարծէի թէ գեռ Արացիէլլայի ճակատէն, մարմնէն
և ոտքերէն իմ տխուր սենեակիս մէջ լոյս կ'սփռէր, այս ամէնը
երբ կ'դիտէի և միտ կ'գնէի իրեն, թմրութենէս և ցաւէս այնպէս
ազատեցին զիս որ յանկարծ առողջացած կարծեցի ինքզինքս: Ար
թուէր ինձ թէ դուրս ելլելուս պէս կազդուրելով պիտի քայլէի:
Միանգամայն իր ներկայութեամբ այնչափ հաճոյք կ'զգայի որ
կրցած իս չափ խօսակցութիւնը կ'երկարէի և հազարումէկ պատ-
ճառանքով կ'կատեցնէի զինք վախճալով որ շուտ չերթար և
զրացած առողջութիւնս իր հետ չտանէր:

Օրուան մէկ մասը ծառայեց ինձ առանց երկչոտութեան, սու
երեսս զգուշութեան և կեղծ ամօթխածութեան, իբր թէ քոյր մը
իւր եղբորը ծառայած ըլլար առանց մտածելու թէ օտար մարդ
մ'էր զիմացինը: Գնաց նարինջներ ծախու. առաւ: Անղը իր գե-
ղեցիկ ակուաներով կ'խածնէր և միջուկէն զատելով պաւաթին
մէջ կ'կթէր ջուրը մատերով զայն ճմլելով: Ազէն արծաթեայ
սղաթիկ միտալ մը հանց զոր սեաւ ժայպէնէ մը կախած կուրծ-

քին մէջ կ'սլաճէր : Գնդասեղով մը անկողնոյս ձերմակ վարաս-
 զոյրէն կախեց ղայն : Աստահացուց զիս թէ սուրբ պատկերին զօ-
 րութեամբ իսկոյն պիտի առողջանայի : Ետքը երեկոյեան մօտ ,
 քսան անգամ գուռէն գէպ 'ի անկողինս գառնալով կ'հարցնէր թէ
 ուրիշ խնդրելք մը ես ունիմ , նոյնպէս կրկին և կրկին պատուի-
 րելով որ բարեպաշտարար պատկերին աղօթեմ , ննջելէս առաջ
 մեկնեցաւ :

Ե

Կամ պատկերին և իր ըրած աղօթքներէ , կամ Արացիէլայի
 դէմքով ունեցած խնամոց և խանդաղատանաց երեւոյթին ամոքա-
 րար ազդեցութենէ , կամ իր ներկայութեան և խօսակցութեան
 հրապուրիչ զօրաբազմութենէ բոլոր անձին հիւանդատ գրգռութիւնը
 մեղմացած էր , հաղիւ թէ դուրս ելաւ և ահա հանդարտ և խո-
 րունկ քուն մը քաշեցի :

Հետեւեալ օրը արթնցած ատենս , երբ տեսայ սենեակիս յա-
 տակը պատող նարինջներու կեղևները , Արացիէլայի աթոռը գէպ
 անկողինս գետ դարձած իբր թէ թողած էր հոն վերստին նստե-
 լու համար , նոյնպէս վարապոյրէս կախուած սղտիկ պատկերը
 սև մետաքսէ մանեակով և կնոջ մը ներկայութեան բոլոր այն հեռ-
 քերը որ այնչափ ատենէ 'ի վեր ինձ կ'սրակսէին , կարծեցի թէ
 ազէկ չարթնցեր եմ , թէ մնայր կամ քոյրերէս մին իրիկունը սե-
 նեակս մտած էր : Աչերս լաւ մը բանալով և մի առ մի մտա-
 ծումներս յիշելով միայն Արացիէլայի երեսը երևցաւ ինձ ինչ-
 պէս որ նախընթաց օրը տեսած էի :

Արեւը այնչափ սպիտակ էր , հանդստութիւնը այնպէս անդամ-
 ներս կազդուրած էր , սենեակիս առանձնութիւնը այն աստիճան
 սրախ վրայ կ'ձանրանար , այնչափ կ'զղայի վերստին ծանօթ ձայն
 մը լսելու պէտքը որ ելայ թէև տկար և երերուն , նարինջներուն
 մնացորդը կերայ , ⁴⁰բէ⁴⁰է⁴⁰ մը մէջ նստայ և բնազդօրէն Մար-
 ձեկնայի կտորը ուղղել սուի ղայն :

Ը

Անտրէայի փոքրիկ և ցած տան քով հասնելով սանդուղէն
 ելայ , որ շտեմարանին վրայի ասնիքը կ'տանէր և որու վրայ սե-
 նեակները կ'բացուէին : Հոն դտայ Արացիէլան , մեծ մայրը , ծեր
 ձկնորսը , Պէրբինօն և տղայքը : Նոյն միջոցին կ'պատրաստուէին
 իրենց ամենէ գեղեցիկ հաղուստներով ինձ այցի ղալ : Ամէն մէկը
 կամ սակառի , կամ թաշկինակի և կամ ձեռքի մէջ ընծայ մը
 կ'բերէր ինձ , ինչ որ այս խեղճ մարդերը ինծի աւելի հաճելի
 կամ հիւանդի մը աւելի առողջարար կ'մտածէին : Մին՝ Իշխայի
 սակեղոյն ձերմակ զինիէ շէշ մը , սունկի տեղ խնկեռիկի և ա-
 նուշահոտ խոտերու խեցիով , միւսը չոր թուզեր , ուրիշ մը զզը-
 եարներ , պղտիկ տղայքը նարինջներ : Ընտանեաց ամէն մէկ ան-
 դամին վրայ Արացիէլայի սիրար կ'նշմարուէր :

Թ

Չարմայման աղազակ մը ձգեցին իմ դունստ և տկար հոն ե-
 րևելուս վրայ , բայց ես ոտքի վրայ էի և ժպտուն երեսով : Արա-
 ցիէլա ուրախութենէն իր զենջակի մէջի նարինջները զեռինը
 գլորեց , և ձեռքերն իրարու զարնելով առ իս վազեց . « Չեզի
 ըսի , պոռայ , թէ պատկերը եթէ մէկ զիշլըր միայն անկողնիդ
 վրայ մնայ պիտի առողջացնէ ձեզի : Խաբած եմ » : Ուզեցի պատ-
 կերը ետ տալ և կուրծքէս հանեցի ղայն ուր դուրս ելած ատենս
 դրած էի : « Նախ համբուրեցէք » , ըսաւ ինձ : Համբուրեցի ,
 նոյնպէս քիչ մ'իւր մատերու ծայրը զոր առնելու համար երկըն-
 ցուցած էր : « Գարձեալ պիտի տամ ղայն եթէ հիւանդանաք ,
 յաւելցուց վիզն անցընելով և կուրծքը կախելով , այսպէս եր-
 կուքի պիտի ծառայէ » :

Տանիքը նստանք առաօտեան արևին դիմաց : Ամենքնին ալ ղուարթ դէմք մ'ունէին , իբր թէ եղբայր մը դտած ըլլային , կամ երկար ճամբորդութենէ մը վերջը զառակի մը վերադարձը եղած ըլլար իմ հոն երթալս : Թամանակը՝ որ բարձր գասերու մէջ հարկաւոր է մտերիմ բարեկամութիւններ կազմելու համար , ստորին գասերու մէջ պէտք չէ : Սրտերը առանց կասկածի կը բացուին , իսկոյն կ'միանան , վասն զի զգացումներու տակ շահ մը չփնտուռի : Բնութեան մարդերու մէջ ութ օրուան մէջ աւելի միութիւն և հոգւոյ ազդականութիւն կ'հաստատուի քան թէ տասը տարուան մէջ ընկերային մարդոց մէջ : Այս ընտանիքը և ես արդէն ազդական էինք :

Հարցուցինք զերար թէ ինչ բարի կամ չար պատահած էր մեր բաժանումէն 'ի վեր : Աղքատ տունը երջանկութեան մէջ էր : Նաակը օրհնուած էր : Ուրկանները յաջող էին : Որսը երբէք այսչափ առատ եղած չէր : Մեծ մայրը չէր բուեր դրան առջև ժողովուրդին ձուկ ծախելէ . Պէրբինօ մեծ և ուժեղ քսան տարեկան նաւատի մը կ'արժէր թէև հազիւ տասն երկու տարեկան կար : Աերջասկէս Արայիէլլա իր ընտանեաց խոնարհ վիճակէ շատ բարձր արհեստ կ'սորվէր : Իր ընդունած ուձիկը բարձր էր համեմատելով իրեն պէս դեռահաս աղջկան մը աշխատութեան , իր տաղանդով դեռ պիտի յառաջանար և կարող պիտի ըլլար պըզտիկ եղբարքը հազուեցնելու , սնուցանելու և իրեն համար աշօժիտ մը պատրաստելու , եթէ օերելու փարէք և կամք հասնէր :

Ասոնք իր ծնողաց խօսքերն էին : Բուստող էր , այսինքն բուստ աշխատել կ'սորվէր : Բուստին զործատունը և վաճառակախութիւնը այն աստի Խտալիոյ քաղաքաց ծովեղբերայց արհեստին զլիսաւոր հարստութիւնը կ'կազմէին : Արայիէլլայի կորուսած մօր մէկ եղբայրը Նարօլիոյ ամենէ զլիսաւոր բուստի զործատան զործաւորներու վերակացուն էր : Հարուստ իր վիճակին համար երկու սեռէ բազմաթիւ զործաւորներ վարելով որոնք չէին բուեր բուրբ Եւրոպիոյ մատակարարել զարդի այս առարկան : Մտածած էր իր քեռորդին , և քանի մ'օր առաջ եկած էր իր զործաւորաց կարգը գասել զան : Բուստը և զործիւնները բերելով իր խիստ

պարզ արհեստին առաջին գասերը տուած էր : Միւս զործաւորները միատեղ զործատունը կ'աշխատէին :

Արայիէլլա իր մեծ մօրը և ձկնորսին շարունակ բացակայութեան պատճառաւ տղոց միայն պահապան ըլլալով իր արհեստը տունը կ'զործածէր : Վօր եղբայրը որ չէր կրնար շատ անդամ գալ , քանի մ'ատենէ 'ի վեր իր սնդրանիկ տղան կ'ըրկէր : Արայիէլլայի մօրեղբորդին քսան տարեկան երիտասարդ մը , խոհեմ , խոնարհ , օրինաւոր , ընտիր զործաւոր մը , բայց պարզ մտքով , հաշմտ և աղեղ ձեով մէկն էր : Երկիւնը կու գար զործատան զոյուելէ ետքը , հօրաքրոջ աղջկան աշխատութիւնը քննելու , զործիւնբու զործածութիւնը կատարելագործելու և ընթերցանութեան , զրի և թուաբանութեան առաջին գասերը աւանդելու :

« Յուսանք , ըստ ինձ կամաց մը մեծ մայրը , մինչդեռ Արայիէլլա աչէրը զարձուցած էր , թէ ասիկա երկուքին ալ շահաւոր պիտի ըլլայ և թէ վարպետը նշանածին ծառան պիտի ըլլայ » :

Նայեցայ թէ պառաւ կնոջ մտքին մէջ իր թոռին համար հպարտութեան և փառասիրութեան դաղափար մը կար : Բայց Արայիէլլա ամենեկին ծանօթ չէր ասոնց :

Ժ

Մանկամարդ աղջիկը ձեռքէս բռնելով սենեակը տարաւ զիս իր արդէն զործած և յղկած բուստի փոքրիկ զործերը ցուցընելու համար : Ասոնք մաքուր կերպով անկողնայն ոտքին տակ ստուար թղթերու վրայ բամբակի երեսը շարուած էին : Ուզեց կտոր մ'իմ առջև ձևակերպել : Ես ոտքիս ծայրով պզտիկ ճախարակին անիւը կ'զարձնէի , մինչդեռ ինք բոլորակ սղոցին կ'ներկայացնէր կարմիր բուստին կտորը որ կրճատելով կ'կարէր : Ետքը այս կտորները մատերուն ծայրով բռնելով կ'բոլորցնէր յետանաքարին գէմ մաշեցնելով : Վարդազոյն փոշին իր ձեռքերը կը պատէր , և երբեմն մինչև երեսը թուշելով այտերը և շուրթերը

կ'քաղցրացնէր թեթև սնդոյրով մը՝ որ իր աչերը աւելի կ'ապոյտ
և աւելի փայլուն կ'երևցնէր : Աւերջը խնդալով սրբուեցաւ , և իր
խարտեաշ մագերը թոթուեց որու փոշին զես ալ պատեց :

« Այսպէս չէ՛ , ըսաւ , աղէկ վիճակ մը չէ՛ խնձի պէս ծովու
աղջկան մը համար : Ամէն բան ծովու կ'պարտաւորինք մեծ հօրս
նաւակէն սկսելով մինչև կերած հացերնիս , այս մանեակներս և
օղերս որոնցմով թերևս օր մը պիտի դարդարուիմ՝ երբ որ շատ
մը յղկեմ և ձեացնեմ ինձմէ աւելի հարուստ և աւելի գեղե-
ցիկներու համար » :

Առաւօտը այսպէս անցաւ խօսակցելով , խեղկատակելով և աշ-
խատելով առանց երթալու դադարն ունենալու : Այսօր ատեն
ընտանեաց ճաշին մասնակից եղայ : Արևը , բայց օդը , մութի դո-
հունակութիւնը , սեղանին պարկեշտութիւնը որ միայն հացէ ,
խորոված ձուկէ և շտեմարանին մէջ պահուած պտուղներէ կը
բաղկանար , ախորժակ և ոյժ տուին ինձ : Այսօրէն ետքը հօր
օղնեցի տանիքին վրայ տարածուած հին ուղկանի մը ծակերը նո-
րոզելու :

Արացիէլայի ոտքին ձայնը կ'լսէինք յետանաքարը դարձու-
ցած ատեն նոյնպէս պառաւ մօր ճակարակին աղմուկը և աղոց
ձայները որ տան սեմին վրայ նարինջներով կ'խաղային , քաղ-
ցրապէս մեր աշխատութեան կ'ներդաշնակէին : Արացիէլայ եր-
բեմնակի դուրս կ'ելէր պատշգամբին վրայ մագերը թոթուելու հա-
մար . նայուածք մը , բարեկամական բառ մը , քմծիծաղ մը նոյն
միջոցին կ'փոխանակէինք : Հոգւոյս մինչև խորը երջանկութիւն
կ'զգայի չեմ՝ զիտեր ինչ բանի համար : Ա՛ռգէի հալուէի տուն-
կերուն մէկին տեղը ըլլալ որ պարտեղեն մէջ արմատացած էին ,
կամ մողէսներէ մին , որ տանիքին վրայմեր քովը արևուն առջև
կ'տաքնային և որոնք այս խեղճ ընտանեաց տան պատին ծակե-
րուն մէջ կ'բնակէին :

ԺԱ.

Բայց քանի օրը տարածամէր՝ ոգիս և դէմքս կ'մթաղնէին : Ար

տիւրէի մտածելով որ ճամբորդի սենեակս պիտի վերադառնամ :
Արացիէլայ իսկոյն իմացաւ ասիկա : Գնաց մեծ մօրը ականջին
քանի մը խօսք փափոց :

« Ինչո՞ւ այսպէս մեղի թողուլ , ըսաւ պառաւ կինը , իբր թէ
իր դաւակներէ մէկուն կ'խօսէր : Բրօսիտա միատեղ աղէկ չէինք :
Նաբօլիոյ մէջ նոյնը չէ՛ք կրնար ըլլալ : Ա՛նմանիք մայրը կո-
րուսող թուշուռի մը որ բոլոր բոյներու բոլորտիքը շրջելով կը
դառնայ : Եկէ՛ք մերը բնակելու , եթէ ձեզն պէս պարտի մը հա-
մար յարմար կ'գատէք : Տունը երեք սենեակ ունի միայն , բայց
Պէբբինօ նաւակին մէջ կ'պառկի : Արացիէլայի համար աղոց սե-
նեակը կրնայ բաւել միայն թէ ցորեկները ձեր պառկածին մէջ
աշխատի : Առէ՛ք անորը , և մեր քով սպասեցէք ձեր բարեկամին
վերադարձին , վասն զի ձեզն պէս բարի և տրտում երիտասար-
դի մը Նաբօլիոյ փողոցներու մէջ առանձին մնալը ցաւ կ'պատ-
ճառէ մտածողին » :

Չկնորսը , Պէբբինօն , պղտիկ տղաք անգամ , որոնք արդէն օ-
տարականը կ'սիրէին , բարի կնոջ առաջարկութեան վրայ ուրա-
խացան : Ամենքնին ալ սաստիկ սնդեցին որ անոր խնդիրն ըն-
դունիմ : Արացիէլայ բան մը չըսաւ , բայց կ'սպասէր յայտնի անձ-
կութեամբ մը համակուած և կեղծ անմտադրութեամբ թէ ինչ
պիտի պատասխանէի ծնողացը թախանձանքին : Գողգոջուն և ա-
կամայ շարժումով ոտքը կ'զարնէր այն ամէն պատճառներու հա-
մար՝ զորս չընդունելու համար կ'յայտնէի :

Աւերջը աչերս իր վրայ յարեցի : Տեսայ թէ աչերուն սպիտակը
սովորականէ աւելի խոնաւ և փայլուն էր և որ մատերով կ'ձմլէր
և մի առ մի կ'փետտէր շահաստրամի մը տերևները որ պատշա-
մին վրայ հողէ ամանի մը մէջ կ'ծաղկէր : Այս նշանը երկար
ճառերէ աւելի աղէկ հասկցայ : Ընդունեցի ինձ նուիրուած ըն-
կերական կեանքը : Արացիէլայ ձեռքերը զարկաւ և ուրախութեամբ
վազելով առանց ետին դառնալու իր սենեակը ցատկեց իբր թէ
խօսքս իսկոյն կատարելով ես աննելու ժամանակ չէր թողուր
ինձ :

ԺԲ

Արացիելը Պէբբինոն կանչեց : Այրիկենի մը մէջ ինք և եղբայրը տղոց սենեկին մէջ տարին իր անկողինը, խեղճ կահ կարասին, ներկուած տախտակէ շրջապատած իր սլոտիկ հայելին, սրնձէ կանթեղը, Աստուածածնայ երկու երեք պատկերները որ զնդասեղներով փակած պատէն կ'կախուէին, սեղանը և սլոտիկ ճախարակը որով բուստը կ'բանէր : Զրհորէն ջուր քաշեցին և ձեռքով յատակին վրայ սրկելով, աղէկ մը պատերուն և քարին վրայի բուստի փոշին աւելցին . տանիքին վրայէ ընտրելով պատուհանի մէջ զրին բալասանի և անանուխի երկու ամենեկանաչ և ամենէ անուշահոտ թաղարները : Պէբբինոն եթէ նոյն զիշերը իր նշանածը հօրը տունը բերէր աւելի խնամքով չէին կրնար պատրաստել և մաքրել հարսանեկան սենեակը : Ես ալ խնդալով այս խաղին կ'օգնէի իրենց :

Երբ ամէն ինչ պատրաստ եղաւ, Պէբբօ և ձկնորսը հետ տարի, զնելու և բերելու համար այլ և այլ կահ կարասին ուրոնց սէսք ունէի : Երկաթէ փոքրիկ կատարեալ անկողին մը, ճերմակ տախտակէ սեղան մը, եղէղէ երկու աթոռ, սրնձէ սլոտիկ կրակարան մը ուր տաքնալու համար ձմուր զիշերներ ձէթի կորեզները կ'այրեն . միւս ամէնը կ'պարունակէր պայտասկս զոր խցիկէս բերելու մարդ զրկեցի : Չէի ուզեր այս երջանիկ կեանքէ զիշեր մը կորուսել զոր ընտանիք մը կ'շնորհէր ինձ : Նոյն իրիկունը իմ նոր բնակարանս պառկեցայ : Արթնցայ ծիծառներու զուարթ ձայննորոնք պատուհանին կտարուած ապակիէն սենեակս կ'մտնէին, նոյնպէս Արացիելայի ձայնէն որ քովի սենեակը կ'երգէր, իր երգը ճախարակին ներդաշնակ շարժումին հետ միացնելով :

ԺԳ

Պատուհանը բացի, որ ձկնորսներու և լուսայարարներու փոք-

րիկ սրարտեղներու վրայ կ'նայէր, որոնք Բօղելիքի լեռան ժայռին և Մարձելինայի հրապարակին մէջ տարածուած են :

Քանի մը սև քարերու կտորներ մինչև այս պարտեղներու մէջ տան մօտ գլորած էին : Խոշոր թղենիներ, որ կխտով ծուռած կը բուսնէին այս ժայռերու տակ, իրենց խոտորնակ և ճերմակ ճիւղերով կ'բանէին, և լայն ու անշարժ տերեւներով կ'ծածկէին զանոնք : Տան այս կողմէ միայն կ'տեսնուէր աղքատ ժողովրդեան պարտեղները, քանի մը լայն անխով ջրհորները՝ զորս էշ մը կը դարձնէ սամիթի փոսերը սլոտիկ կաղամբները և շողգամները ջրելու համար . կիներ կ'տեսնուին հոն որ լաթ կ'չորցնեն նարնջենիներու կապուած շուաններու վրայ : Առկ շապիկով սլոտիկ տղաքներ խուսն լցուած են որ կ'խաղան կամ կու լան պարտեղին մէջ սիւռուած երկու կամ երեք սպիտակ տունբուռն տանիքներու վրայ :

Մեծ քաղաքի մը արուարձաններու այս սահմանաւոր, հասարակ և մթին տեսարանը սքանչելի երեցաւ ինձ, բաղդատելով զայն բարձր շէնքերու, փողոցներու խորութեան և աղմկալի բազմութեան հետ ուրիշ մեկնած էի : Մաքուր օդ կ'շնչէի մարդկային օդին փոշին, կրակին և շողիին տեղ : Ալեւէի էշերուն զուռը, աքաղաղին երգը, տերեւներուն շնչիւնը և ծովուն փոփոխակի հեծեծելը, կառքերու թաւալման, ժողովրդեան սուր ձայներու, և այն կծու աղմուկին անդադար որոտման տեղ որ մեծ քաղաքայ փողոցներու մէջ ականջին միջոց մը և մտածումին հանդարտութիւն մը չեն թողուր :

Չէի կարող անհիշուէս ելել ուր քաղցրասկս կ'վայելէի այս արևը, զեղջլական ձայները, թուռներուն թուշիլը, մտածումն զրեթէ անշփոթ հանդիսար : Ետքը պատերուն մերկութիւնը, սենեակին պարասը, կարասեաց հեռաւորութիւնը գիտելով կ'ուրախանայի մտածելով թէ զոնէ այս աղքատ տունը զիս կ'սիրէր, վասն զի չկայ զորդ մը, ոչ զարդարանք մը կամ ոչ մետաքսեայ վարագոյր մը որ քիչ մը բարեկամութիւն արժէ : Աշխարհիս բոլոր ոսկին չ'զօրէր անտարբերներէ սրտի արօքում մը և նայուածքի մէջ սիրոյ կայծ մ'իսկ զնել :

Այն 'ի քուն վիճակիս մէջ կ'որորէին զիս մեղմիկ այս մտա-

ճումները • կ'զգայի առողջութեան և խաղաղութեան մէջ վերածնելիս : Պէրբինօ ստեպ սենեակս կ'մտնէր հարցնելու համար թէ բանի մը պէտք ունէի : Անկողնիս վրայ հայ և խաղող բերաւ զոր կ'ուտէի կտորները և փշրանքները ծիծառներու նետելով : Գրեթէ կէսօր էր երբ անկողնէս ելայ : Արևուն ճառագայթները սենեակս կ'ըմպանցէին աշնան քաղցր դաղջութեամբ : Չկնորսին և ամուսնոյն հետ որոշեցի որ ամէն ամիս փոքրիկ թողակ մը տամ , խցիկիս վարձուն և տան ծախքին նպաստելու համար : Խիստ քիչ էր , բայց այս ազնիւ անձերը շատ խել կ'սեպէին զայն : Յայտնի էր թէ ինձմէ վատակելու բազմանքին տեղ կ'արտօմէին որ իրենց աղքատութիւնը և կենցաղավարութեան սաստիկ պարկէշտութիւնը չէին ներեր իրենց ձրի հիւրընկալութիւն մը նուիրել որով աւելի հարարտանալու կարող պիտի ըլլային :

Իրենց տան համար ամէն առաւօտ գնածնուն վրայ աւելցուցին երկու հաց , քիչ մը խորոված ձուկ կէսօրուան , կաթեղէն կամ չոր պտուղներ երեկոյեան և իւր կանթեղիս համար , նոյնպէս ածուխ ցորա օրերու համար , այս էր ամէնը : Քանի մը պղնձէ դրամ , Նաբօլիոյ մէջ ժողովողեան մանր ստակը , օրուան ծախքիս կ'բաւէր : Երբեք աւելի լաւ զպայած չեմ թէ երջանակութիւնը որչափ հեռի է շուայլութենէ , և թէ որչափ աւելի գիւրաւ կրնանք ստանալ զայն պղնձէ դրամով մը քան թէ քսակ մը ոսկիով , երբ գիտնանք Աստուծոյ զայն պահած տեղը :

ԺԴ

Այսպէս ասրեցայ աշնան վերջին օրերը և ձմեռուան սկիզբը : Նաբօլիոյ մէջ այս ամիսներու պայծառութիւնը և յատկութիւնը նախընթացներու հետ տարբերութիւն չունին : Ոչ ինչ մեր կենաց միօրինակ անդորրութիւնը կ'վրդովէր : Եղանակին հովերու յաճախութենէն ծերունին և տղան ալ ծովու վրայ չէին արշաւէր : Եղբքին երկայնութեանը վրայ կ'որայնին , և իրենց ձուկերը մայրէն ծախուելով իրենց սակաւապէտ կենանքին լիութիւն կ'բաւէին :

Արայիւլէլա իր արհեստին մէջ կ'յառաջանար • բուստ բանելէն ի վեր վարած նստողական և խաղաղ կենանքով աւելի զարգանալով գեղեցիկութիւն կ'ստանար : Իր վարձը , զոր կիրակի օրեր մօրեղայրը կ'բերէր , չէ թէ միայն իր պղտիկ եղբարքը աւելի մաքուր հալուեցնելու և դպրոց դրկելու կ'ներէր , այլ և իր մեծ մօրը և իրեն աւելի հարուստ և աւելի վայելուչ զլեւսներ շինելու որ այս կողմոյն կանանց յատուկ է : Արմիր մետաքսէ թաշկինակներ գլխին ետեւը ուսերուն վրայ երկայն եռանկիւնով կախելու համար , առանց ներբանի արծաթեայ շուղերով բանուած կօշիկներ՝ որ միայն ոտքին մատերը կ'ծածկեն , սև և կանաչ դիծերով մետաքսեայ պատմուճաններ , ասոնք կարերուն վրայ ժապաւնուած են և երկու քովերը կ'երբեքն , առջևը ձեւին նրբութիւնը և մանեակներէ զարգարուած վզին գիծերը կ'երևան , վերջապէս ոսկիէ թելերով մարդարիտներով խառնուած լայն օղեր , ասոնք էին իրենց յատուկ զարդերը : Յունական կողմներու աղքատ կիները այս պաճուճանքը և զարդերը կ'զնեն : Չքաւորութիւնը չստիպէր զիրենք երբեք անոնցմէ զրկուելու : Այն կիւմաներու մէջ ուր գեղեցիկութեան զպայումը մեր երկրէն աւելի սաստիկ է և ուր կենանքը միայն սէր է , զարդը շուայլութիւն չէ կնոջ աչերուն , դրեթէ իր առաջին կամ միակ պիտոյքն է :

ԺԵ

Արայիւլէլա այսպէս հաղուած երբ կիրակի և տօն օրեր իր սենեակէ տանիքին վրայ կ'եկէր , խարտեալ մաղերուն մէջ քանի մը նուռի կարմիր ծաղիկներ կամ վարդապտն դափնիներ դրած , երբ մօտակայ մատուռին զանգակներու հնչիւնը մտիկ ընելով կ'անցնէր , կ'գառնար պատուհանիս առջևէն , սիրամարդին արևուտ ջև ինքզինք հայելիի մէջ տեսնելուն պէս , երբ թուլութեամբ կ'քսէր նայելով բանուած կօշիկներուն մէջ դոյրուած իր ոտները , և յետոյ գլուխը կ'վերցնէր վզին սովորական այնպիսի շարժումով մը՝ որ մետաքսէ թաշկինակը և մաղերը ուսերուն վրայ տա :

տաննը կու տար, երբ կ'նշմարէր թէ կ'գիտէի զինքը, կ'շտա-
զնէր սակաւ ինչ իբր թէ դեղեցիկ ըլլալու կ'ամէնար, վայրկեան-
ներ կային ուր իր դեղեցիութեան նոր պայծառութիւնը այնպէս
կ'ազդէր ինձ որ կ'կարծէի թէ առաջին անգամ կ'տեսնէի զինք
և իմ իր հետ սովորական ընտանութիւնս անսակ մը երկչոտու-
թեան և շագուտի կ'փոխուէր :

Բայց ինք այնչափ չէր ջանար շլացնել զիս և իր զարդի բնա-
կան զվացումը հպարտութենէ և սլշրանքէ այնչափ աղատ էր՝ որ
սուրբ արարողութիւններէ ետք իսկոյն կ'աճապարէր իր ծանր
զարդերը հանելով վերստին հագնել իր հաստ կանաչ չուխայե-
պարզ հագուստը, կարմիր և սեռա գիծերով շրջազգեստը և
ձերմակ տախտակէ ներբաններով մուճակները, որոնք բոլոր օրը
տանիքին վրայ կ'հնչէին Արեւելքի գերիներուն հնչող կօշիկնե-
րուն պէս :

Երբ իր բարեկամ հիները չ'գային զինք փնտուելու կամ իր
մօրեղծօրորդին եկեղեցի իրեն չ'ընկերանար՝ շատ անգամ ես կ'ա-
ռաջնորդէի իրեն և պատշգամբին աստիճաններու վրայ նստած
կ'սպասէի իրեն : Գուրս ելած ատենը տեսակ մը անձնական հպար-
տութեամբ, իբր թէ իմ քոյրս կամ նշանածս ըլլար, կ'լսէի
հիացման փափառքները զոր իր շնորհալի կերպարանքը ընկերնե-
րուն և Մարձելինայի եզերքին երիտասարդ նաւաստիներու մէջ
կ'զբոյժէր : Բայց ինք բան մը չէր լսեր, և բազմութեան մէջ
միայն զիս տեսնելով, սանդուղին վերի առաջին աստիճանէն կը
ծիծաղէր, օրհնեալ ջուրին մէջ թաթխած մատերով երեսը կը
խաչակնքէր, և համեստաբար աչերը դէպ 'ի վար կ'իջնէր այն
աստիճաններէ՝ որոնց վարը իրեն կ'սպասէի :

Այսպէս ասն օրերը առատ և իրիկուն եկեղեցի կ'տանէի զինք,
իր միակ և բարեպաշտ զբօսանքն էր այս զոր կ'անշնար և կ'սի-
րէր : Ա'ջանայի այն օրերը ըստ կարի հագուստս կը զուոյն երիտա-
սարդ նաւաստիներուն նմանեցնէր, որպէս զի ներկայութիւնս մէկը
չ'զարմացնէր և ընկերակցած աղջկանս կամ եղբայրը և կամ ազ-
գականը կարծուէի :

Միւս օրերը գուրս չէր ելեր : Իսկ ես կամայ կամայ ուսման

կեանքս և մենակեաց սովորութիւններս առած էի, բայ 'ի Կրա-
ցիէլայի քաղցր բարեկամութենէ և իր ընտանեաց հետ յարա-
բերութեամբս :

Ամէն լեզուայ պատմադիրները և բանաստեղծները կ'կարդայի-
նք բրեմն կ'զրէի. կ'փորձէի կամ Բաալերէն կամ Գաղղիարէն ու-
տանաւոր կամ արձակ հոսել հոգւոյն այն առաջին խանդը որ
կարծես սբտի վրայ կ'ծանրանայ եթէ խօսքը բացատրելով չ'փո-
թարէ զայն :

Ա'երեկ թէ խօսքը մարդու միակ ճակատագիրն է և ստեղծ-
ուած է իր ստուգե տալու համար : Մարդ կ'տանջուի մինչև որ
ներսը զգացածը գուրս հանն : Իր գրուած խօսքը հայելիի մը
պէս է, որու պէտք ունի ինքզինք ճանչնալու և իր ապրելուն ա-
պահով ըլլալու համար : Քանի որ իր գրուածներու մէջ չ'տես-
նէր զինք՝ չ'զգար որ ստուգիւ կ'ապրի : Միտքը մարմնոյ պէս իր
չափահասութիւնը ունի :

Այն տարիքին մէջն էի՝ ուր հողին խօսքով սնանելու և ա-
ճելու պէտք ունի : Բայց ինչպէս կ'պատահի միշտ, կարողութե-
նէս առաջ բնազգումս կ'ծնէր : Հազիւ թէ գրելու կ'սկսէի և ա-
հա զործէս դժուհ կ'ըլլայի և ձանձրոյթով մէկ կողմ կ'նետէի
Նաբօլիոյ հովը և ծովուն ալիքները քանի՛ քանի՛ անգամ տա-
րած և կ'լլած են առաւօտեան, զիշերային զգացմանցս և մտած-
մանցս կտորները որ ցորեկը ինձմէ պատուելով՝ առանց զըզ-
ջումի հետի կ'նետուէին :

ԺԶ

Երբեմն Կրացիէլայ սովորականէ աւելի զիս գոցուած և լռիկ
տեսնելով, ծածուկ սենեակս կ'մտնէր զիս ընթերցանութենէս և
զըզողմներէս կորզելու համար : Անձայն աթուիս ետեէն կ'յա-
ռաջանար, ուսերուս վրայէն կ'բարձրանար ոտքին մատերուն վրայ
կանդուն զխտելու համար, առանց հասկնալու ինչ որ կ'կարդայի
և կ'զրէի, ետքը արաղ շարժումով մը զիբքս կ'վերցնէր և զրէջս

ձատերէս կ'յափշտակէր փախչելով: Տանկքին վրայ կ'հալածէի զինք, կ'սրբողէի քիչ քիչ. կ'խնդար: Անորէի քայքայ մը մը նման խիստ կ'յանդիմանէր զիս:

«Այսօր ինչ կ'խօսի ձեր աչերուն այդ երկար դիրքը, կ'մըրմուար կէս ճշմարիտ և կէս կատակ անհամբերութեամբ: Միթէ այդ սեաւ աողերը հին սղեղ թղթին վրայ ձեզ խօսելէ երբեք պիտի չդադրի՞ն: Միթէ բոլոր կիրակիները և տարւոյն բոլոր դիշերները պատմելու համար բառական պատմութիւն չէք զիտեր ինչպէս որ Բրօսիտայի մէջ պատմուելով զիս լացուցին: Եւ որո՞ւ կ'զբէք բոլոր զիշերը այն երկար նամակները՝ զորս առաւօտուն ծովու հովին կ'նետէք: Չէք զիտեր թէ զէշ կ'ընէք, և բոլորովին զունատ ու որ և է բանի անմտադիր կ'ըլլաք երբ այնչափ երկար ատեն զրէք կամ կարդաք: Միթէ աւելի քաղցր չէ ինձ հետ խօսիլը որ կ'լսեմ ձեզի, քան թէ ամբողջ օրեր այն մեռեալներու կամ այն ստուերներու հետ որ ձեզի միտ չեն զներ: Աստուած իմ, ինչո՞ւ այն թուղթի թերթերուն չափ խելք չունենայի: Բոլոր օրը պիտի խօսէի ձեր հետ, ինչ որ հարցնէիք պիտի պատասխանէի, և պէտք պիտի չունենայիք ձեր աչերը յողնեցնել և կանթեղին բոլոր իւզը սպառել»:

Այն ատեն զիրքս և զրիչներս կ'պահէր: Նաւարարի հաղուստս և զլիարիս կ'բերէր: Աստիպէր զիս դուրս ելլել զըօսնելու համար: Ահնազանդէի իրեն մրմուռով՝ բայց նաև սիրելով զինք:

Գ Լ Ո Ւ Խ Ս Զ Ո Ր Ր Ո Ր Գ

Ա.

Քաղքին մէջէ դէպ 'ի ծովեզրն ու զիւզը երկար պտոյտները ընելու կ'երթայի. բայց այս առանձին պտոյտները նարօլի վերադարձած ժամանակիս առջև օրերուն պէս տխուր չէին: Քաղցրապէս կ'վայելէի քաղաքին, եղբքին, երկնից և ջուրերու տեսարանները: Առանձնութեան վայրկենական զգացումը չէր ընկճեր զիս, այլ սրտիս և մտածմանցս զօրութիւնները կ'կեդրոնացնէր: Գիտէի թէ բարեկամաց աչեր և մտածումներ այն ամբօխին կամ անապատներուն մէջ ինձ կ'հետեւէին և թէ վերադարձիս զիս սիրող սրտերէ կ'սպասուէի:

Պատաւ կնոջ մեկնութեան համեմատ, օտար բոյներու շուրջը պողոտայով թուշուր չէի, այլ կ'նմանէի այն թուշուրին որ զինք պահող բոյնէն հեռանալ կ'փորձէ բայց ետ դառնալու ճամբան ալ զիտէ: Բացակայ բարեկամիս վրայ ունեցած սէրս նրացիէլ լայի վրայ դարձած էր: Այս զգացումը ինձ անոր կատողէն աւելի սաստիկ, աւելի զօրաւոր և աւելի քաղցր բան մ'ունէր: Նր թուէր ինձ թէ մին կ'պարտաւորէի սովորութեան և զէպքերու, իսկ միւսը կ'նկատէի իբր ինձմէ ծնած մը զոր իմ անձնական ընտրութեամբս վաստկած էի:

Ասիկա սէր չէր, վասն զի անոր ոչ խոռվութիւնը, ոչ նախանձը և ոչ սուփալի զգացումը ունէի, այլ սրտի քաղցր հանդարտութիւն մ'էր այն, հստոյն և զգայութեանց թեթև տենդին տեղ: Չէի մտածեր ոչ ուրիշ կերպով սիրել, և ոչ աւելի սիրուիլ: Չէի զիտեր թէ ընկեր մը, բարեկամ մը, քոյր մը, կամ ուրիշ բան մ'էր նա ինձի համար. կ'զգայի միայն թէ ես երջանիկ էի իր հետ և ինք երջանիկ ինձ հետ:

Ուրիշ կերպ որ և է բանի մը չէի բաղձար: Չէի այն տարիքին մէջ ուր զգացածնին կ'ընեն որպէս զի երջանկութեան անոր

տի բայտարութիւն մը տան : Ա՛րտէր ինձ խողաղ, խանդակաթ
և երջանիկ ըլլալ առանց դիտնալու թէ ինչո՞վ և ինչո՞ւ համար :
Ընկերական կեանքը, երկուքի մտածումը, ամէն օր մեր անմեղ
և քաղցր ընտանութիւնը կ'աւելցնէին մեր մէջ : Ինք իր թոյլ-
տուութեան մէջ այնչափ անարատ էր որչափ ես հանդարտ ան-
հոգութեանս մէջ էի :

Բ

Երեք ամսէ 'ի վեր էր որ նոյն ընտանիքին մէջն էի, նոյն
տունը կ'բնակէի, իր մտածումին կ'մասնակցէի, Կրացիէլլա այն-
չափ սովորած էր իր սրտէ անբաժանելի կարծելու զիս որ ինք
ալ չէր զգար թէ ինչ ազդեցութիւն ունէի ես իր վրայ : Ինձի
հետ չունէր այն երկչոտութիւնը, զգուշութիւնները և ամօթ-
խածութիւնը՝ որ աղջկան մը և երիտասարդ մարդու մը տեսու-
թեանց մէջ կ'մտնեն և որոնք շատ անգամ սիրոյ ծնունդ կու
տան այն զգուշութիւններով զորս անորմէ պահպանուելու համար
կ'ընեն : Չէր երկմտեր և ես հազիւ կ'տարակուսէի թէ նոր արև-
ներու առջև հիմա բացուած և կանխահաս հասունութեան բոլոր
սրայծառութեան մէջ այս մանկային մաքուր շնորհքը, իր պարզ
զեղեցիկութեամբ իշխանութիւն մը իրեն, զմայլում մը ամենու և
վտանգ մը ինձի համար կ'ըլլար : Երբէք հոգ չէր ըներ իմ ա-
չացս առջև պահուելու կամ զարդարուելու : չէր մտածեր այն
աստիճան որչափ քոյր մը չմտածէր թէ զեղեցիկ կամ աղեղ
պիտի երևի իր եղբօր : Շատ անգամ չէր զգուշանար դոցելու իր
մերկ ոտքերը երբ առտու իր պղտիկ եղբարքը տանիքին վրայ ա-
րևու առջև կ'հաղուեցնէր կամ իր մեծ մօրը կ'օգնէր ինկած չոր
տերևները աւելելու : Ամէն ժամ միշտ բաց սենեակս կ'մտնէր և
Պէրբինոյի չափ անմեղութեամբ անկողնոյս ոտքի աթոռին վրայ
կ'նստէր :

Ես անգամ անձրևոտ օրերը ամբողջ ժամեր անոր հետ առան-
ձին կ'անցընէի քովի սենեկին մէջ ուր պղտիկ տղոց հետ կ'պառ-

կէր և ուր բուստի կ'աշխատէր : Խօսակցելով և խաղալով ի՞նչ
արհեստին կ'օգնէի զոր կ'սորվեցնէր ինձ : Նուազ ճարպիկ բայց
անորմէ աւելի ուժեղ, կտորները մանրելու աւելի կ'յաջողէի :
Այսպէս կրկին գործ կ'ընէինք, և մէկ օրուան մէջ երկու կը
շահէր :

Ընդ հակառակը իրիկունը երբ աղաքը և ընտանիքը կ'ննջէին,
ինք աշակերտ կ'ըլլար և ես դասատու : Կարգալ և դրել կ'սոր-
վեցնէի, գիրքերուս վրայ գիրերը կապել տալով և ձեռքը բռ-
նելով որպէս զի զանոնք գրել սորվի : Մօրեղբորդին չկրնա-
լով ամէն օր գալ ես անոր տեղը կ'բռնէի : Կամ այս երիտա-
սարդը աղեղ և կաղ ըլլալուն համար, թէև քաղցր, համբե-
րող և ծանրաբարոյ էր, իր հօրաքրոջ աղջկան այնչափ հրա-
պոյր և ակնածութիւն չէր ազդեր, կամ իր դասերու ատեն խիստ
անմտադիր ըլլալուն խիստ նուազ յառաջադիմութիւն կ'ըլլար
անոր քան թէ ինձի հետ : Երեկոյեան կէսը ուսման տեղ կատա-
կելով, խնդալով և մանկանց զատարակութիւնը ձեւացնելով
կ'անցընէին : Խեղճ երիտասարդը իր աշակերտէ յափշտակուած
ըլլալուն խիստ երկչոտ էր զանիկա յանդիմանելու : Ինչ որ Կրա-
ցիէլլա փափաքէր՝ կ'կատարէր որպէս զի աղջկան զեղեցիկ յօն-
քերը զժկամակութեան կնձիւ մը չառնէին և շուրթերը փոքրիկ
ծամսձութիւն մը չընէին : Շատ անգամ կարդալու սահմանուած
ժամը բուստի կտորներ մաքրելով, կամ մեծ մօր աղեկատին տախ-
տակին վրայ բուրդի կարժերը փաթտելով կամ Պէրբոյի ուռկա-
նին ծակերը նորոգելով կ'անցնէր : Ամէն բանով զո՛հ կ'ըլլար,
միայն թէ իր մեկնած ատենը Կրացիէլլա հաճութեամբ քմծիծա-
ղէր, և այնպիսի շեշտով ապրի՞ք ըսէր որ նորէն Կրացիէլլա
նակէր :

Գ

Ընդ հակառակը երբ ինձի հետ ըլլար՝ զասը կարևոր կ'ըլլար :
Շատ անգամ կ'երկարէր մինչև որ մեր աչերը քունէ կ'ծանրա-
նային : Իր կախած գլխէ, ծռած վեղէ, և գիրքին ու կերպարան-

քին մտադիր անշարժութենէ կ'տեսնուէր թէ խեղճ աղջիկը յաջողելու համար բոլոր ձիւղը կ'թափէր : Արմուկը ուսիս վրայ կը կուծնէր զբքին մէջ կարգալու համար ուր մասս տողը կ'դժէր և արտասանելու բառը կ'ցուցնէր : Երբ կ'զբէր մատերը ձեռքիս մէջ կ'ընէի զբիչը կիսովին առաջնորդելու համար :

Եթէ սխալ մ'ընէր խիտ և բարկացայտ կերպով կ'յանդիմանէի զինք . չէր պատասխաներ և միայն ինքզինքին հետ կ'բարկանար : Երբեմն լալու պատրաստ կ'տեսնէի , այն ատեն ձայնս կ'բաղցրացնէի և վերստին սկսելու կ'քաջալերէի : Եթէ ընդ հակառակը աղէկ կարգար և զբէր կ'տեսնուէր թէ ինքնին ծափահարութեանս մէջ իր վարձատրութիւնը կ'փնտուէր . հպարտ երևելով աւելի ինձ տուած հաճութեան քան թէ իր յաջողութեան պզտիկ յաղթանակին վրայ , կարմրելով առ իս կ'գառնար ճակտին վրայ և աչաց մէջ յայտնի ուրախութեան նշոյլներով : Վարձատրէի զինք քանի մ'երես Պօղ և Վիդիլնէ կարգալով զոր ամենէ աւելի կ'ընտրէր , կամ Թասօի քանի մը զեղեցիկ տանաւորները , ուր հովիւներու զիւղային կեանքը կ'նկարագրէ որոնց մէջ Հէրմինի կ'ընակի , կամ երբ երկու սիրահարաց ցաւերը և յուսահատութիւնը կ'երգէ : Այս սաղեբուն գաշնակը կարգալս գաղբեցնելէ շատ ետք լալ և երազել կու տար իրեն : Բանաստեղծութիւնը՝ սիրոյ ծնունդ տալու վրայ եղող երիտասարդ սրտի մէջ միայն ամենէ մեծ և ամենէ երկարատև արձագանդը կ'ընէ : Կարծես թէ ամէն սուփանաց նախազայցումն է այն : Աւելի ետքը , յիշատակի և սոցոյ կ'նմանի : Այսպէս կենաց երկու ներհակ ատենները կ'տխրեցնէ . երիտասարդութեան մէջ յոյսերով , և ծերութեան մէջ զղջումներով :

Դ

Կանթեղին լոյսով և մեր ոտից տակ ձէթի կրակին գաղջ տաքութեամբ այս երկար և քաղցր զիշերներու զուարճալի ընտանութիւնը մեր մէջ տղայական մտերմութիւններէ զատ երբեք ու-

րիչ մտածումներ և տարրեր փափաքներ չէին պատճառեր : Պաշտօն պանուած էինք , ես զբեթէ ցուրտ անհոգութեամբս և ինք իր անբժութեամբն ու անարատութեամբ : Միացած ատեննուս պէս հանդարտ կ'բաժնուէինք , և այս երկար խօսակցութիւններէ վայրկեան մ'ետքը նոյն տան մէջ կ'ննջէինք , քանի մը քայլ միայն իրարմէ հեռի , երկու այնպիսի մանկանց նման որ իրիկունը միատեղ կ'խաղան և իրենց սարդ զբօսանքէ անդին բան մը չեն մտածեր : Չզայմանց այս անգործութիւնը՝ որ այնպայտ կերպով ինքնին կ'սնանին , տարիներ պիտի տևէր եթէ չսրտահէր զիսուած մ'որ ամէն ինչ վեր 'ն վայր շրջեց և յայտնեց մեր բարեկամութեան ինչ ըլլալը որ այնչափ երջանիկ ըլլալու կ'բաւէր մեզ :

Ե

Ձէքօ , այս էր Կրացիէլայի մօրեղբորդուոյն անունը , կ'շարունակէր ձմու զիշերները օր ըստ օրէ աւելի յաճախել ձկնորսին տունը : Թէև գեռահաս աղջիկը ընտրութեան նշան մը չէր տար և միշտ անոր կատակներու սովորական առարկան մինչև անգամ խաղալիկը կ'ըլլար , սակայն խեղճ Ձէքօ այնչափ քաղցր բարեւոյ և խոնարհ էր անոր առջև՝ որ Կրացիէլա կ'ստիպուէր անոր բարութիւններէ շարժիլ և երբեմն հաճութեամբ ծիծաղիլ : Ասիկա բաւական էր Ձէքօյի : Այն սիրող այլ տկար բնութեանց տէր անձերէն էր որ սիրուելու համար բնական յատկութիւններէ զրկուած ըլլալնին զգալով , զո՛հ կ'ըլլան սիրել առանց փոխադարձ պահանջելու և կ'զօհուին կամայ գերիներու պէս եթէ ոչ երջանկութեամբ՝ զէթ ծառայութեամբ այն կնոջ որու սիրտը իրենց վրայ կ'իշխէ : Ասոնք սիրոյ մէջ ամենէ վեհ բնութիւնները չեն բայց ամենէ զրուտները : Վ'զման անոնց վրայ բայց նաև կ'զմայլին : Սիրել սիրուելու համար մարդկային է , բայց սիրել սիրելու համար զբեթէ հրեշտակային է :

Զ

Ամենէ անշնորհ ձևերու մէջ իսկ, խեղճ Չեքոյի սիրոյ մէջ հրեշտակային բան մը կար: Այսպէս Կրացիէլայի կողմէ իր ներկայութեան առջև ինձ ցուցուած ընտանութիւններէ և համակրութենէ, խոնարհելէ կամ նախանձելէ շատ հեռի էր, կ'սիրէր զիս, վասն զի Կրացիէլա զիս կ'սիրէր: Իր հօրաքրոջ աղջկան բարեկամութեան մէջ առաջին կամ միակ տեղը չէր խնդրեր, այլ երկրորդը կամ վերջինը. ասով ամէն ինչ կ'բաւէր իրեն: Վայրկեան մը անորմէ հաւնուելու, հաճութեան նայուածք մը, նշան մը, կամ համակրական բառ մ'ընդունելու համար, պիտի զար իսկ Գաղղղոյ մէջէ զիս փնտռելու և սանելու անոր՝ որ իրմէ աւելի զիս կ'ընտրէր: Կարծեմ պիտի ատէր իսկ զիս եթէ անոր ցաւ պատճառէի:

Իր սիրոյ պէս իր հպարտութիւնն ալ միայն անոր վրայ էր: Թէ և արտաքուստ այնչափ ցուրտ, բայց խոհուն, զրօն և կանոնաւոր էր ինչպէս որ Աստուած և իր տղեղութիւնը զինք բրած էին: Բնազգօրէն թերևս կ'դուշակէր թէ իր հօրաքրոջ աղջկան զգացմանց վրայ իշխանութիւնս մշտնջենաւոր պիտի չըլլար. թէ որ և իցէ անհրաժեշտ զիպուած մը զմեզ պիտի բաժնէր. թէ ես օտարական հեռաւոր երկրէ մը և այնպիսի վիճակէ և հարըստութենէ ըլլալով որ Բրօսիտայի նաւարարի մը աղջկան հետ յայտնապէս հակակշիռ էի. թէ օր մը Կրացիէլայի և իմ մտերմութիւնս սխաձիին պէս պիտի կարուէր. թէ այն ատեն միայնակ լքուած և յուսահատ պիտի մնար առանց իրեն. թէ այս յուսահատութիւնն անդամ անոր սիրտը պիտի խոնարհեցնէր և իրեն պիտի նուիրուէր վտաբեկ բայց ամբողջ: Ինք՝ միայն միութարչի և բարեկամի պաշտօնը կրնար պահանջել, բայց իր հայրը չ'ըրիշ մտածում մ'ունէր:

Է

Հայրը՝ Չեքոյի Կրացիէլայի վրայ ունեցած սէրը ճանչնալով երբեմն երբեմն զան տեսնելու կու գար: Իր գեղեցկութեան և խոհեմութեան վրայ շարժած, իր արհեստին գործածութեան և ընթերցանութեան ու զրի մէջ ըրած արագ յառաջադիմութեանց վրայ սքանչապած, մտածելով նաև թէ բնական տղեղութիւնները պիտի չ'ներէին Չեքոյի պատշաճ և ընտանիքի խանդաղատանքէ տարբեր բանի անձկալ, որոշած էր իր որդին Կրացիէլայի հետ ամուսնացնել: Իր հարստութիւնը գործաւորի մը համար բաւական նշանաւոր, կ'ներէր իրեն կարծել թէ իր խնդիրը երախտիք մ'էր որու Անտրէա, իր կիներ և աղջիկը պիտի չ'խորհէին իսկ ընդդիմանալ: Չեքոյի կամ խօսեցած ըլլալուն կամ իր մտածումը անորմէ պահելով յանկարծ իր օտաջած երջանկութեան վրայ զարմացնել ուղեւրով զայն՝ որոշեց երևան հանել իր նպատակը:

Ը

Ծննդեան նախընթաց օրը սովորականէ աւելի ուշ գացի ընտանեաց ընթրիքին մասնակցելու: Անտրէայի և կնոջ նեղացած կերպարանաց վրայ ցրտութիւն և խուժութիւն մը տեսայ: Աչերս Կրացիէլայի վրայ վերցնելով զիտեցի թէ լացած էր: Իր երեսի վրայ յատակութիւնը և ուրախութիւնը այնչափ բնական էին որ տրտմութեան այս անսովոր նշանը նիւթական քօղի մը պէս կ'պատէր զինք: Պիտի ըսուէր թէ իր մտածմանց և սրտին ստուերը երեսին վրայ տարածուած էր: Անշարժ և համր մնացի չհամարձակելով խեղճ անձերը հարցափորձել և ոչ Կրացիէլայի հետ խօսիլ վախնալով որ ձայնին հնչիւնը միայն չպայթեցնէր սիրտը զոր հազիւ բռնելու կարող կ'երևէր:

Իր սովորութեան հակառակ ինձ չէր նայեր : Թող ձեռքով մը հացի կտորները բերանը կ'տանէր , և տեսնուելու համար ուտել կ'կենդծէր . բայց չէր կրնար և հացը սեղանին տակը կ'նետէր : Ընթրիքը լմնալէ առաջ , լուիկ , տղաքը պտակեցնելու պատրուակաւ ելաւ իրենց սենեակը տարաւ պանոնք , և հոն դոցուեցաւ ոջ ծնողաց և ոչ ինձ դիշեր բարի ըսելով և առանձին թողուց զմեզ :

Երբ դուրս ելաւ , հօրը և մօրը հարցուցի թէ իրենց մտածմանց և զաւակնուն տրամութեան պատճառը ինչ էր : Այն ասեն պատմեցին ինձ թէ ցորեկը Ձէքօյի հայրը տուն եկած և իրենց աղջկը իր տղուն ամուսնութեան համար խնդրած էր , թէ ասիկա մեծ երջանկութիւն մը և բազմ մ'էր իրենց ընտանեաց համար , թէ Ձէքօ հարստութիւն պիտի ունենար , թէ Կրացիէլլաւ՝ որ այնչափ բարեսիրտ էր , իր երկու պղտիկ եղաբայր հետը տունելով զաւակներուն պէս պիտի մեծցնէր զանոնք , թէ իրենց ծերութեան օրերը այսպէս թշուառութեան դէմ ապահով պիտի ըլլային , թէ երախտադիտութեամբ այս ամուսնութեան հաւանած էին և Կրացիէլլայի խօսեցած էին , թէ ան բան մը չպատասխանած էր անշուշտ աղջկան մ'երկչտութեամբ և համեստութեամբ : թէ իր լուծիւնն ու արցունքները իր զարմացման և սրտին յուզման պատճառաւ էին , թէ պիտի անցնէր այս ալ իբր ծաղկի վրայ եղած ճանձ մը , և թէ Ձէքօյի հօր և իրենց մէջ որոշած էին նշանաւոր Ծննդեան հանդէսներէ վերջ ընել :

Թ

Գեռ կ'խօսէին անոնք մինչդեռ ետ երկար ատենէ ՚ի վեր չէի ըներ : Երբէք չմտածած էի ինքնին Կրացիէլլայի վրայ ունեցած զգացումն : Չգիտէի թէ ինչպէս կ'սիրէի զինք , պարզ մտերմութիւն մ'էր , բարեկամութիւն մը , սէր , սովորութիւն թէ բոլոր այս զգացումներէ ամբողջութիւն մը որ իմ անոր վրայ ունեցած համակումս կ'կազմէր : Բայց մտածելով որ կենաց և սրտի այս քաղցր յարաբերութիւնները , որ ակամայ իմ և անոր մէջ հաս-

տատուած էին , յանկարծ պիտի փոխուէին . խորհելով որ պիտի կորդէին զայն ինձմէ ուրիշ տալու համար . թէ ընկերի և քրոջ տեղ , ինչպէս էր հիմա , օտարական և անտարբեր պիտի ըլլար ինձ , թէ հոն պիտի չըլլար , թէ ամէն ժամ պիտի չտեսնէի , թէ ինձի կանչող ձայնը պիտի չլսէի , թէ իր աչացը մէջ ալ պիտի չկարդայի յանկուցող և փափուկ լոյսով մը միշտ ինձ ուղղուած այն ճառագայթը որ սիրտս կ'լուսաւորէր մեղմիկ և մայրս ու քոյրերս յիշեցնել կու տար ինձ : Երբ կ'երեակայէի այն անջատուը և խորին դիշերը՝ որ շուրջս պիտի պատէր յանկարծ , հետեւեալ օրը , որ իր ամուսինը ուրիշ տուն պիտի տանէր զայն , այն սենեակը ուր ալ պիտի չպառկէի , իմն՝ ուր ալ պիտի չմըտնէր . այն սեղանը ուր ալ իր նստիլը պիտի չտեսնէի . այն տանիքը՝ ուր արթնցած ատենը իր մերկ ոտքերու և ձայնին հնչիւնը պիտի չլսէի . այն եկեղեցիները՝ ուր կիրակի օրեր պիտի չառաջնորդէի իրեն . այն նաւակը՝ ուր իր տեղը պարագ պիտի մնար և ուր միայն հողմին և ալեաց հետ պիտի խօսէի : Մեր անցեալ կենաց այս քաղցր սովորութեանց կերպարանքները , զորս կ'յիշէի և որք յանկարծ կ'ցնդէին առանձնութեան և ոչնչութեան անդուղին մէջ ձղբու համար զիս , այս ամէնը առաջին անգամ զգալ տուին ինձ թէ ինչ էր այս աղջկան ընկերութիւնը ինձի համար և իմացուցին ինձ թէ սէր կամ բարեկամութիւն եղող զիս անոր կապող զրացումը կարծածէս աւելի զօրաւոր էր և իմ Նարօլիոյ մէջ վայրենի կենաց վրայ ունեցած անձանթ հրասպոյրս , ոչ ծովն էր , ոչ նաւակը , ոչ տան խոնարհ սենեակը , ոչ ձկնորսը , ոչ իր կիներ , ոչ Պէրբօն , ոչ տղաքը , այլ միայն մէկ անձ էր զայն ազդող և այն անձը տունէն անհետանալով , ամէն ինչ պիտի անհետէր : Եթէ պակսէր ան իմ արդի կենացս մէջէ , ալ բան մը չկար : Չգացի այն շփոթ վայրկեանը՝ զոր երբէք խոստովանած չէի և որ այնպէս հարուածեց զիս որ բոլոր սիրտս սարսուաց և փորձեցի սիրոյ մէկ անհունութիւնը անհուն տրամաթեամբ որու մէջ սիրտս զահալիւած զգաց :

Թ

Առութեամբ սենեակս մտայ : Բոլորովին հաղուած անկողնիս վրայ նետուեցայ : Փորձեցի կարգալ, զրեւ, մտածել և ցրուել մաքրի դժուար աշխատութեամբ մը սրտի խռովութիւնս : Ամէն ինչ անօգուտ եղաւ : Կեբքին խռովութիւնս այնչափ զօրաւոր էր որ երկու մտածում չկրցայ ունենալ, և ոյժիս սպառելը անդամ քունս չբերաւ : Երբէք Կրացիէլայի կերպարանքը այնչափ հրապուրիչ և հաստատ երևցած չէր աչացս առջև : Ա՛վայելէի զան ամէն օր տեսնուած բանի մը պէս, և ուրու արժէքը զայն կորսնցնելով միայն կ'հասկցուի : Մինչև այն օրը իր դեղեցկութիւնը անդամ բան մը չէր ինձի համար . անոր վրայ զգայածս բարեկամութեան ազդեցութեան հետ կ'խառնէի ինչպէս նաև իր կերպարանքը կը յայտնէր : Չզիտէի թէ զգայմանցս մէջ զմայլում կար և ամենափոքր սուիփ մը իսկ չէի դուշակեր իր խանդաղատանաց մէջ :

Այս անքուն դիշերուան սրտիս երկար ընթացից մէջ անդամ չկրցայ աղէկ մեկնութիւն մը տալ այս ամենու վրայ : Թէ տըրտմութեանս և թէ զգայութեանցս մէջ ամէն ինչ խառն էր : Ար նմանէի այնպիսի մարդու մը՝ որ յանկարծ հարուածէ մը շփոթած չզիտէր տակաւին թէ ո՞ր կողմը կ'ցաւի, բայց ամէն կողմէ ցաւ կ'զգայ :

Տան մէջ ձայն ելլելէ առաջ անկողնէս ելայ : Չզիտեմ ինչ բնազդում մը կարճ միջոց մը հեռացնել կ'տարիւր զիս, իբր թէ այս տեսակ ժամանակի մէջ կրնար խռովել ներկայութիւնս այս բնտանեաց խորանը, որու ճակատադիրը օտարականի մ'առջև այսպէս կ'խռովէր :

Մեկնեցայ Պէրբոյի իմացնելով որ քանի մը օր պիտի չվերագառնամ : Պատահմամբ այն ճամբան բռնեցի ուր առաջին քայլերս կ'տանէին : Կարօլոյ երկայն ծովեզերքը հետևեցայ Բէսինայի և Բօրթիչի կողմը և Աէսուֆի ստորտը, առաջնորդներ առի Թօրբէ տէլ Կրէքօի մէջ : Սան Սալվաթօրէ ճգնարանին դրան առջև

քարի մը վրայ պառկեցայ այն սահմանը՝ ուր բնակուած բնութիւնը կ'վերջանայ և կրակէ երկիրը կ'սկսի : Հարբուխը քանի մը ատենէ 'ի վեր եռայման մէջ էր, և ամէն բորբոքումին այն մոխրէ և քարերէ ամպերը կ'նետէր՝ որոնց զլրբիւր գիշերները կ'լսէինք ճգնարանին տակ եղած լավայէ ժայռին մէջ : Հոն առաջնորդներս մերժեցին աւելի հեռի ընկերանալ ինձ : Առանձին ելայ . դժուարաւ վերջին կոնոնը հասայ ոտքերս և ձեռքերս խութեցի թանձր և կիզող մոխրի մէջ որ մարդու բեռին տակ կը փլէր : Հրաբուխը վայրկեան առ վայրկեան կ'զուար և կ'որոտար : Հրացեալ և դեռ կարմիր քարերը ասդին անդին շուրջ կ'թրուչէին մոխրին մէջ մարբելով : Բան մը չկասեցուց զիս : Բերանին մինչև վերջին ծայրը հասայ և նստայ : Կարօլոյ ծոցին, զեղին և հիանալի քաղքին վրայ արևուն ծաղիլը տեսայ : Յուրա և անզղայ էի այն տեսարանէն որու վրայ զմայլելու կու գան հազար մղոններէ այնչափ ճամբորդներ : Այս ծովու եզրերու և ալեւ զարնուած շէնքերուն անհուն լոյսին մէջ, միայն փոքրիկ սպիտակ կէտ մը կ'փնտռէի ծառերու մթին կանաչին մէջ Բօղլիբէ բլրան ստորտը ուր Անտրէայի խրճիթը կ'կարծէի նշմարել : Մարդս որչափ տարածութիւնը զիտէ և տեսնէ, բնութիւնը իրեն համար կ'բաղկանայ երկու կամ երեք զգալի կէտերէ ուր իր հողին կ'եզերի : Կորզեցէք կեանքէ զձեզ սիրող սիրտը, ինչ կը մնայ : Կոյնպէս է բնութիւնը : Անհետացուցէք այս վայրը կամ սուներ զոր ձեր մտածումները կ'փնտռեն կամ ձեր յիշատակները կ'բնակին, այն ատեն ճշմարիտ պարսպ մ'է բնութիւնը ուր նայուածքը կ'խորասուղի առանց յատակ և հանդարտութիւն զտնելու : Պէտք է ուրեմն զարմանալ որ արարչութեան վսեմ տեսարանները այնչափ տարբեր կերպով կ'դիտուին ճամբորդներէ : Առան զի ամէն մէկը իրեն հետ իր նայուածքը կ'տանի : Հողւոյն վրայ եղած ամպը, հորիզոնի վրայ զտնուած ամպէ մը աւելի կ'ծածկէ և կ'այլազուտէ երկիրը : Տեսարանը տեսարանին մէջն է : Փորձառու եղայ ասոր :

ԺԱ.

Ամէն ինչ գիտեցի, բան մը չտեսայ : Ի զուր անդղայի մը պէս մինչև հրաբուխին խորը իջայ ցրտացած լավաներու ծայրին կըռթնելով : Ի զուր խորունկ ճեղքուածներէ անյայ ուսկից սողայող շողին և կայծերը կ'խեղդէին և կ'այրէին զիս : Պարսպ տեղը բիրտեղացած ծծումբի և աղի ընդարձակ ձորերը կ'գիտէի որոնք կրակին շնչաութենէ զունաւորուած սառնամանեաց կ'նմանէին . վտանդին առջև ալ զմայլման պէս ցուրտ մնացի : Հողիս ուրիշ տեղ էր . 'ի զուր կ'ուզէի կանչել զան անկէ : Իրիկունը վերստին ճգնարանը իջայ : Առաջնորդներս ճամբեցի : Բօմբէխայի այգիներուն մէջէ վերադարձայ : Ամբողջ օր մը անցուցի խորասուզած քաղքին անապատ փողոցները ժուռ դալով : Այս երկու հազար տարիէ վերջը բացուած գերեզմանը լոյսին տալով իր փողոցները , յիշատակարանները և արուեստները , Աէստֆի պէս անզգայ թողուց զիս : Այս մխրին բոլոր հողին այնչափ դարերէ 'ի վեր Աստուծոյ հովէն ալուած էր որ սրախ ալ չէր խօսեր : Այնպիսի անտարբերութեամբ կ'կոխէի ոտիցս տակ իրենց քաղաքին այն փողոցներու մէջ մարդերու փոշին , որ կարծես թէ ծովէն դէպ իր եզրը մղուած պարսպ խեցեմորթներու կոյտեր էին առնոնք : Թամանակը ահադին ծով մ'է , որ միւսին պէս մեր աւերակները երևան կ'հանէ : Չենք կրնար ամենու վոյց ողբալ : Ամէն մարդու իր տրտմութիւնները և ամէն դարու իր կարեկցութիւնը բաւական են :

Բօմբէխայէ մեկնելով ֆասթէլամարի և Սորանթի լեռանց անտառակէց կիրճերու մէջ մտայ : Հոն բնակեցայ քանի մը օր զիւղէ զիւղ երթալով , և այծարածներէ լեռներու ամենէ նշանաւոր վայրերը ստաջնորդուելով : Ապրբեր գիտող նկարիչ մը կը կարծէին զիս , վասն զի երբեմն երբեմն դժպրութեան փոքրիկ տետրի մը մէջ , զոր բարեկամս թողած էր , քանի մը զիտողութիւններ կ'գրէի : Բայց թափառական հոյի մ'էի որ զիւղէ մէջ

ասդին անդին կ'ըջաղայէի օրերս անցընելու համար : Ամէն ինչ կ'պակտեր ինձ : Ես ալ ինքզինքիս կ'պակտէի :

Չկրցայ աւելի երկար շարունակել : Երբ Ծննդեան տօները անցան և տարուան այն առաջին օրը , զոր մարդիկ տօն մը ըրած են , ժամանակը խիստ հիւրի մը պէս զուարճութիւններով և պատկներով հրատարակուող կակղեցնելու համար , աճապարեցի 'սարօլի մտնել : Գիշերը հոն հասայ վարանելով , բաժնուած Կրացիէլան տեսնելու անհամբերութեան և ալ չտեսնելու սարսափին մէջ : Քսան անդամ կանկ առի , Մարձեւիկայի մօտեմալով նստակներու ծայրը նստայ :

Տունէն քանի մը քայլ հեռի Պէբօյի հանդպեցայ : Զիս տեսնելով ուրախութեան աղաղակ մը ձղեց , և պզտիկ եղբօր մը պէս վերջ ցատկեց : Գէպ իր նաւակը տարաւ զիս և բացակայութեանս ատեն անցածները պատմեց :

Ամէն բան շատ փոխուած էր տան մէջ : Կրացիէլա մեկնելէս 'ի վեր լալէ դադրած չէր : Ճաշի համար սեղան ալ նստած չէր : Բուստի չէր աշխատեր : Բոլոր օրերը իր սենեկին մէջ դրոցուած զինքը կանչած ատենին չպատասխանելով և բոլոր զիշէրները տանիքին վրայ ժուռ դալով կ'անցընէր : Կրացիները կ'ըսէին թէ խենթեցած է կամ մեղամաղձութեան մէջ ինկած է : Բայց ինք զիտէր թէ ստոյգ չէին այն խօսքերը :

Բոլոր չարիքը , կ'ըսէր տղան , Չէբօյի նշանուէլէն էր զոր ինք չէր սիրեր : Պէբբինս ամէն ինչ տեսած և լսած էր : Չէբօյի հայրը ամէն օր մեծ հօրը և մօրը պատասխանը առնելու կուզար : Այս վերջինները չէին դադրեր ամէն օր Կրացիէլան տանջել որպէս զի վերջապէս իր հաւանութիւնը տար : Չէր ուզեր ասոր վրայօք բան մը մտիկ ընել . կ'ըսէր , « Աւելի ճենաօլա կ'փախչիմ » : Նաբօլոյ կաթոլիկ ժողովրդեան մէջ այս խօսքը հետեւեալին հաւատար է . « Աւելի ուրացեալ կ'ըլլամ » : Անձնասպանութենէ աւելի մեծ սպառնալիք մ'է այս . հօգուոյն յախտեան կան անձնասպանութիւնը :

Անտրէա և իր կինը՝ որոնք Կրացիէլան կ'պաշտէին , թէ անոր ընդդիմութեան և թէ երջանկութեան հաստատութեան ան-

Տեսիլը տեսնելով կ'յուսահատէին : Իրենց սպիտակ մազերուն վրայ կ'ազաչէին , իրենց ձերութեանը , թշուառութեանը և երկու աղոց սպաղային վրայ կ'խօսէին իրեն : Այն ատեն Արայիէլը կ'քաղցրանար : Աւելի համակրութեամբ կ'ընդունէր Չէքօն որ երբեմն երբեմն իրիկունը խոնարհաբար Արայիէլայի սենեկին դուռը նստելու կու գար և պղտիկ տղոց հետ կ'խաղար : Բարի իրիկուն և մնաս բարեառ կ'ըսէր դրան մէջէն , բայց հազիւ երբեմն բառ մը պատասխան կ'ընդունէր : Գժոհճ բայց համբերող կ'մեկնէր և հետեւեալ օրը միշտ անփոփոխ կ'գար : « Քոյրս իրաւունք չունի , կ'ըսէր Պէրբինօ : Չէքօ շատ կ'սիրէ զինք և խիստ բարի է : Շատ երջանիկ պիտի ըլլայ եթէ չմեծէ : Աւերջապէս այս իրիկուն , յաւելցուց , մեծ հօրս և մեծ մօրս թախանձանքներէ և Չէքօյի արտասուքներէ յաղթուելով դուռը քիչ մը բացառ և ձեռքը երկնցուց . Չէքօ մատնի մը անցուց մատին և խոստացաւ վաղը նշանուիլ : Բայց ո՞վ զիտէ որ վաղը նոր կամբ մը պիտի չունենայ : Ան որ այնչափ քաղցր և ուրախ էր , Աստուած իմ , ո՞րչափ փոխուած է : Պիտի չկրնաք ճանչնալ զինք . . . » :

ԺԲ

Պէրբինօ նստակին մէջ պառկեցաւ , իսկ ես անցածները իմանալով անորմէ , տուն մտայ :

Անտրէա և իր կինը տանիքին վրայ առանձին էին : Բարեկամութեամբ ընդունեցան զիս , և երկար բացակայութեանս վրայ փափուկ յանդիմանութիւններ ըրին : Արայիէլայի վրայ ունեցած իրենց ցաւերը և յոյսերը պատմեցին : « Եթէ հոս ըլլայիք , ըստ ինձ Անտրէա , դուք որ այնչափ կ'սիրուիք իրմէ և որ երբեք ո՛չ ըսած չէ ձեզի , շատ պիտի օգնէիք մեզ : Աւերստին զձեզ տեսնելով ո՞րչափ գոհ ենք : Աաղը նշանաւորը պիտի ըլլայ , ձեր ներկայութիւնը միշտ երջանիկ ըրած է զմեզ » :

Իսեղճ մարդերու այս խօսքերուն վրայ բոլոր մարմնոյս մէջ սարսուռի մը շրջիլը զգացի : Ներքին բան մը կ'զգայնէր ինձ որ

իրենց զժբաղդութեան պատճառ ես պիտի ըլլայի : Արաղձայի և կ'զողայի Արայիէլան տեսնել : Բարձր ձայնով իր ծնողացը խօսիլ սկսայ , անցայ և դարձայ դրան առջևէն այնպիսի մէկու մը պէս որ չուզէր կանչել բայց կ'ուզէ լսուիլ : Խուլ և համր կեցաւ և չերեցաւ : Սենեակս մտնելով պառկեցայ : Աւերջապէս միտքս պատեց տեսակ մը հանդարտութիւն որ միշտ խօսվեալ հողոյ մէջ տարակուսի վերջանալէն և որ և իցէ բանի մը մինչև անգամ զժբաղդութեան վստահութենէ ետքը կու գայ : Անշունչ և անզոյ բեռի մը պէս անկողնիս վրայ ինկայ : Մտածմանցս և անդամներուս յոգնութիւնը շուտ մը զէպ 'ի խառն երազներ մղեց զիս , և վերջը , քունի ոչնչութեան մէջ :

ԺԳ

Գիշերը երկու երեք անգամ կէս արթնցայ : Չմեռուան այն դիշերներէ մին էր որ սակաւաղիւտ բայց աւելի տխուր կ'ըլլան տաք կլիմաներու մէջ և ծովու եզերքը : Փեղկերուս ձեղքերուն մէջէ անընդհատ փայլակներ կ'ցայտէին սենեկիս պատերան վրայ բոցավառ աչքի մը ցոլումին պէս : Հողմը կ'զոտար անթեցած շուներու բաղմութեան պէս : Թանձր ծովու մը մունջ բաղխումները Վարձեղենայի բոլոր եզերքը կ'հնչեցնէր , իբր թէ ժայռերու կտորներ կ'նետուէին :

Գուռս հօվէն կ'զողար և կ'բաղէր : Երկու երեք անգամ կարծեցի որ կ'բացուէր և կ'զոյուէր ինքնին և թէ ալէկոծութեան շնչուանի և ողբին մէջ , մարդկային խեղդուած ձայներ և հեծկլտանքներ կ'լսէի : Մինչև անգամ կարծեցի թէ խօսքերու հընչուիլը և անուանս արտասանուիլը լսեցի վշտալի ձայնէ մը որ օդնութիւն կ'հայցէր : Ելայ նստայ , բայց բան մը չլսեցի . կարծեցի թէ ալէկոծութիւնը , տեսողը և երազները իրենց ցնորքներու մէջ կ'ընկղմէին զիս , և վերստին ննջեցի :

Առտու ալէկոծութեան տեղ յստակ արև մը կար : Բայց իրական ողբերով և խեղճ ձկնորսին ու կնոջ յուսահատ ձայն-

քով արթնցայ, որոնք Կրացիէլայի գրան սեմին վրայ կ'ողջային: Իսեղճ աղջիկը դիշերը փախած էր: Տղաքը արթնցուցած և համբուրած էր լսելու նշան ընելով: Անկողնին վրայ ձգած էր իր ամենէ գեղեցիկ հաղուսաները, օղերը, մանեակները և ունեցած քիչ մը ստակը:

Հայրը իր ձեռքին մէջ քանի մը կաթիլ ջուրէ թրջուած թղթի կտոր մը կ'ըռնէր զոր գնդասեղով մը անկողնոյն վրայ դրուած գտած էին: Հինգ կամ վեց սող դրուած էին զորս շուարեալ կարգալու կ'աղաչէր ինձ: Առի թուղթը, միայն այս խօսքերը կ'պարունակէին որոնք տենդէ գողգոջուն ձեռքով դրուած էին և դժուարաւ կ'կարդացուէին. « Դաս խոստացայ . . . ձայն մը կ'ըսէ ինձ որ կարողութեանս վեր է . . . : Ոտքերնիդ կ'համբուրեմ: Ներեցէք ինձ: Արօնաւորուհի ըլլալ աւելի կ'ընտրեմ: Մխիթարեցէք Ձէքօն և Պարոն . . . : Անոր և սողոյը համար Աստուծոյ պիտի աղօթեմ: Տուէք անոնց ինչ որ ունիմ: Ձէքօյին մատնին ալ իրեն դարձուցէք . . . »:

Այս սողերը կարգալէս վերջը բոլոր ընտանիքը վերստին արտասուաց հեղեղ հոսեցին: Փոքրիկ տղաքը, դեռ մերկ, լսելով որ քոյրերնին ալ պիտի չղար, իրենց ձայները երկու ծերերուն հեծումն կ'խառնէին և բոլոր տան մէջ կ'վազվզէին Կրացիէլայ կանչելով:

ԺԴ.

Տունակը ձեռքէս ինկաւ: Աերցուցած ատենս, դրանս քով դեպիւր նարնջենի ծաղիկ մը տեսայ զոր վերջին կիրակին դեռ ահա աղջկան վարսերուն մէջ տեսնելով զարմացած էի, և աստուածաբաշտութեան փոքրիկ միտալը զոր միշտ էր կուրծքին մէջ կ'պահէր և զոր քանի մ'ամիս առաջ հիւանդութեանս ատեն վարագոյրէս կախած էր: Ալ չտարակուսեցայ թէ դուռս ստուգիլ դիշերը բացուած և դոցուած էր. թէ այն խօսքերը և խեղդուած հեծկլամանքները՝ զորս լսած և հովուն տրտունջները կարծած էի, խեղճ աղջկան բարեները և ողբերն էին: Սենեկիս սեմին արտա-

քին կողմին վրայ չոր տեղ մը, տանիքին վրայի անձրեի հետքերուն մէջ կ'հաստատէր թէ դեռ ահա աղջիկը փոթորկին ատենը հոն նստած, թէ իր վերջին ժամը սղալով և լալով անցուցած էր, նոյն քարին վրայ պառկած կամ ծնրադիր: Նարնջենի ծաղիկը և միտալը ժողվեցի և օրհնեցի կուրծքիս մէջ:

Իսեղճ մարդերը իրենց յուսահատութեան մէջ իրենց պէս լալուս վրայ կ'ըզացուէին: Կրցածիս չափ մխիթարեցի զանոնք: Որոշուեցաւ որ եթէ աղջիկը վերստին գտնէին Ձէքօյի խօսքը ալ չպիտի ընէին: Ձէքօ ինքնին, զոր Պէրբօն կանչելու գացած էր, առաջինը եղաւ տան խաղաղութեան և հօրաքրոջ աղջկան դարձին զոհուելու: Որչափ յուսահատ բայց դարձեալ երջանիկ էր որ իր անունը տոմսակին մէջ սիրով յիշուած էր և տեսակ մը մխիթարութիւն կ'գտնէր անոր յուսահատութեան մնաս բարեներուն մէջ:

« Բայց ինձի մտածեց » , կ'ըսէր ինքնին և աչերը կ'սրբէր: Իսկոյն որոշուեցաւ մեր մէջ թէ բոպէ մը հանդիստ չառնուինք փախստականին հետքերը գտնելէ առաջ:

Հայրը և Ձէքօն աճապարանօք դացին քաղքին կանանց անթիւ վանքերու մէջ փորձելու համար: Պէրբօն և մեծ մայրը Կրացիէլայի բոլոր դեռ ահա բարեկամուհիներու տունը վազեցին որոնց համար կ'կասկածէին թէ իր մտածումներու և փախուստին խոստովանութիւնը բրած էր: Ես օտարական, ծովու եղերքը նաբօլիոյ նառահանդիսաները, քաղքին դռները դացի պահապանները և նաւարարները հարցնելու համար թէ մէկերօն տեսած էր դեռ ահա Բրօսիտացուհի մը քաղքէն ելլելն ու նաւ մտնելը:

Առտու պարապ հետադոտութիւններով անցաւ: Ամենքիս ալ լռիկ և տխուր տուն դարձանք մէկմէկու ընթացքին պատմելու և վերստին խորհրդակցելու համար: Տղոցմէ վատ ոչ մէկը բերանը հացի կտոր մը տանելու կարողութիւնը օրհնեցաւ: Անորէս և իր կինը ու ժամափ Կրացիէլայի գրան սեմին վրայ նստանք և Պէրբօն և Ձէքօ առանց յուսոյ թափառելու դացին փողոցներու և եկեղեցիներու մէջ որոնք նաբօլիոյ մէջ իրիկունը կ'բացուին երեկոյեան աղօթքի և օրհնութեանց համար:

ԺԵ

Առանձին անոնյութ ետքը դուրս ելայ և տրամութեամբ ու պատահմամբ Բօղիլիբի այլը սանող ճամբան բռնեցի : Այրէն անցայ , և մինչև Նիղիտա կղզին շրջապատող ծովուն եզերքը դացի :

Ծովեզրէն աչերս Բրօսիտայի վրայ շրջեցան որ անկէ կրիայ խեցիին նման կապտադոյն ալեաց վրայ կ'ծփի : Հարկաւ մտածմունքս ալ նոյն կղզւոյն մէջ Արայիէլայի հետ անցուցած զուարթ օրերուս վրայ դարձան : Բնազդում մ'առաջնորդեց ինձ : Յիշեցի որ դեռահաս աղջիկը հոն դրեթէ իր տարեքով բարեկամուհի մը ունէր , գրացի խրճիթներուն աղքատ բնակիչ մը աղջիկ , որ մասնաւոր հաղուստ մը կ'հագնէր իր ընկերներէ տարբեր : Օր մը երբ կ'հարցնէի իրենց հազուապէս մէջի տարբերութեան պատճառը , ըսաւ ինձ թէ կրօնաւորուհի էր բայց ազատ իր ծնողաց հետ կը բնակէր տեսակ մը վանքի և ընտանեկան կենաց վիճակի մէջ : Իր վանքին եկեղեցին ցոյց տուաւ ինձ : Աղբւոյն մէջ շատ կային իրեն նման , ինչպէս նաև Իշխայի և Նաբօլիոյ գիւղերու մէջ : Միտքս եկաւ թէ Արայիէլա ինքզինք Աստուծոյ ուխտելու համար թերևս նոյն բարեկամուհոյն գացած էր խնդրելու որ իր վանքին դուռերը բանայ իրեն : Հաղիւ թէ այս մտածեցի՝ մեծ քայլերով Բուզօլի ճամբան ուղղուեցայ , Բրօսիտայի ամենէ մօտ քաղաքը ուր նաևեր կ'գտնուին :

Ժամ մը չանցած Բուզօլ հասայ : Նառահանգիտը վազեցի , երկու թիավարներու կրկին վճարեցի որ յանձնառու եղան զիս Բրօսիտա տանիլ իրիկունը անհանդարտ ծովով : Նառակը ճամբայ հանեցին , ես ալ իրենց հետ զոյգ մը թի առի : Գժուարաւ Միզէն հրուանդանը կրկնեցինք : Երկու ժամ վերջը կղզին ելայ և առանձին շնչասպառ ու դողդոջուն գիշերուան խաւարին և ձմեռուան հողմին բնազդումներուն մէջ այն երկայն սանդուղին աստիճաններէ ելայ՝ որոնք Անարէայի խրճիթը կ'տանէին :

ԺԶ

« Եթէ Արայիէլա կղզւոյն մէջն է , կ'ըսէի իւրովի , նախ հոս եկած ըլլալ պէտք է , այն բնական զղացումով որ թուշունը դէպ իր բայնը կ'տանի և աղան դէպ իր հօրը տունը : Եթէ հոն չըլլայ իսկ քանի մը հետքեր պիտի իմացնեն ինձ որ անցած է : Այն հետքերը պիտի առաջնորդեն ինձ ուր որ է : Իսկ եթէ ոչ ինքը և ոչ հետքերը գտնեմ ամէն ինչ կորսուած է : Կենդանի գերեզմանի մը դուռերը յաւիտեանս իր երիտասարդութեան վրայ գոցուած պիտի ըլլան » :

Այս սոսկալի խռովութիւնով յուզեալ վերջին աստիճանին դպայ : Գիտէի որ ժայռին ծակին մէջ պառաւ մայրը մեկնած ատենիս տան բանալին պահած էր : Բաղեղը վերցուցի և ձեռքս խոթեցի : Մատերս բոլորովին կնճառուած մութին մէջ բանալին կ'փնտռէին դողդողալով որ երկաթին ցուրտը չզգամ , վասն զի ասիկա ալ իմ յոյսս բոլորովին պիտի անհետէր . . . :

Բանալին չկար : Աւրախութենէ խեղդուած ձայն մը ձգեցի և յամբաքայլ բակը մտայ : Գուռը պատուհանները դոց էին , թեթև թեթև նշոյլ մը՝ որ պատուհանին ճեղքուածներէն կ'ելէր և թզեանին տերեւներու վրայ կ'երերար , բնակարանին մէջ վառած կանթեղ մը կ'մատնէր : Ո՛վ կրնար տան զուակէն զատ բանալին գտնել , դուռը բանալ և կանթեղը վառել : Չտարակուսեցայ որ Արայիէլա իզմէ երկու քայլ հեռի էր և աստիճաններու վերջինին վրայ ծնկան վրայ եկայ զիս հոն առաջնորդող հրեշտակին շնորհակալ ըլլալու համար :

ԺԷ

Տունէն ձայն մը չէր ելեր : Ականջս սեմին գրի . երկրորդ

անենկին խորը շնչառութեան մը թոյլ ձայն և հեծկլտանքներ լսեցի : Մեղմիկ գուռը շարժեցի իբր թէ միայն հողմէ իր ծինեաց վրայ կ'երերար , Արացիէլայի մտադրութիւնը քիչ քիչ հրաւիրելու համար էր այս , որպէս զի մարդկային ձայնի յանկարծ և անակնկալ հնչիւնը զինք կանչելով չսպաննէ : Շնչառութիւնը կանկ առաւ : Այն ատեն մեղմիկ Արացիէլայ կանչեցի սրտիս մէջի ամենէ հանդարտ և ամենէ փափուկ շեշտով : Թոյլ ձայն մը տան խորէն ինձ պատասխանեց :

Վերստին կանչեցի պաղատելով որ գուռը բանայ իր բարեկամին , եղբօր որ զիշերը առանձին կու գար ալէկոծութեան մէջ իր բարի հրեշտակէ առաջնորդուած զինք փնտուելու , գտնելու , յուսահատութենէն ազատելու , ընտանեաց և իրեն ներումը բերելու , իր պարտականութեան , երջանկութեան , խեղճ մօր և սիրելի պղտիկ տղոց վերադարձնելու համար :

« Աստուած իմ , ան է , անո՛ւնս է , անոր ձայնն է » , պոռայ մնջիկ :

Աւելի խանդով Արացիէլլինա կանչեցի այն զգուալի անուամբ զոր երբեմն կատակ ըրած ատեննիս կու տայի :

« Ո՛հ , ստուղիւ ան է , ըսաւ : Ձեմ սխալիր , Աստուած իմ , ան է » :

Լսեցի որ չոր տերևներու վրայ կ'ելէր որոնք իր ամէն մէկ շարժումին սօսաւիւն կ'հանէին , քայլ մը կ'առնուր զալ բանալու համար , բայց վերստին թուլութենէ և շարժումէ ուժաթափ կ'իյնար առանց յառաջանալ կարենալու :

ԺԸ

Ա՛լ չվարանեցայ , անհամբերութեանս և անձկութեանս բոլոր ոյժով հին դրան ուսովս վարկի . նիզը բացուեցաւ և տան մէջ վազեցի :

Աստուածածնայ առջև Արացիէլայէ վառուած փոքրիկ կանթեղը աղօտ նշոյլով մը կ'փալփար : Վազեցի երկրորդ սենեկին

խորը ուր իր ձայնը և անկումը լսած էի և ուր նուազած կ'կարծէի զինք : Նուազած չէր այլ միայն ճիզը տկարութեան մատնած էր . իրեն անկողնոյ տեղ ծառայող կոյս մը չոր թուփերու վրայ վերստին ինկած էր և ինձ նայելով ձեռքերը կ'կցէր : Աչերը՝ տենդէ կենդանացած , դարմացումէ բացուած , սիրով մեղկացած կ'փայլէին երկու աստղերու պէս՝ որոնց նշոյլները երկնքէ կ'հասնին և կարծես քեզ ուղղուած են :

Գլուխը՝ զոր կ'աշխատէր վերցնել , թուլութենէ ետևը տերևներու վրայ կ'իյնար իբր թէ վիզը կտրուած ըլլար : Բաց 'ի այտերուն ծայրերու քիչ մը վարդազոյն կարմրութենէ հոգեվարութեան պէս գունատ էր : Իր զեղեցիկ մարմինը արատուած էր արցունքներով խառնուած փոշիէն : Սեաւ հաղուստը գետինը տարածուած տերևներու մոյլ դոյնին հետ կ'խառնուէր որոնց վրայ պառկած էր : Մերկ ոտքերը մարմարիոնի պէս ճերմակ երկարած թուփերու վրայէ անցնելով քարի մը վրայ կ'հանգչէին : Բոլոր անդամներուն վրայ սարսուռներ կ'շրջէին և ակուաները աղու մը ձեռքին մէջի բամբակին նման կ'կրճտէին : Այն կարմիր թաշկիւնակը , որ ընդհանրապէս իր զեղեցիկ երկայն վարսերը կ'պահէր , հանած և իր ձախտին վրայ մինչև աչերուն ծայրը քօղի պէս տարածած էր : Յայտնի էր թէ գաղաղի մը խաւարին և անշարժութեան պէս իր կերպարանքը պատանելու ծառայած էր , և միայն իմ ձայնս լսելով և բանալու համար ելած ատենը վերուցած էր :

ԺԹ

Թուփին քով ծունր դրի , իր սառած երկու ձեռները ձեռացս մէջ առի և շուրթերուս տարի զանոնք շունչովս տաքցնելու համար , աչերէս քանի մը արտասուք անոնց վրայ սահեցան : Իր մատերու ջնջիւնով սեղմելէն իմացայ թէ սրտիս այս անձրևը զզացած էր և շնորհակալ կ'ըլլար ինձմէ : Նաւարարի վերարկուս հանելով ոտքերուն վրայ տարածեցի և բրդին մէջ փաթթեցի զանոնք :

Կ'թողուր որ ընեմ, երջանիկ մոլեղնութեան մը մեկնութեամբ օղնելու, կ'հետեւէր միայն ինձ բայց առանց շարժումով մը ինձ օղնելու, մանկան մը պէս որ իր խանձարուրին մէջ կ'թողու որ վաթթեն և դարձնեն զինք: Ետքը թուփի երկու երեք կոյտեր առաջին սենեկին վառարանին մէջ նետեցի օղը քիչ մը տաքցընելու համար: Ասնթեղին կայծէն վառեցի զանոնք և վերստին եկայ նստելու տերեւէ անկողնին քով:

« Ա՛րչափ աղէկ կ'զղամ, ըսաւ ինձ մեղմ խօսելով, քաղցր, հաւասար, միօրինակ ձայնով իբր թէ սիրտը ամէն հնչիւն և շեշտ կորսնցուցած՝ և անոնցմէ միայն մէկ եղանակ մնացած ըլլար, որ 'ի զուր ուղեցի ինքզինքս պահել, 'ի զուր աշխատեցայ միշտ քեզմէ խոյս տալ: Մեռնիլ աւելի գիւրին է քան թէ քեզմէ ուրիշ մը սիրել: Ուղեցին զիս նշանել. բայց դու ես միայն հողոյս նշանածը: Երկրիս վրայ ուրիշ մէկու մը չեմ նուիրուիր վասն զի գաղտնի քեզ նուիրուած եմ: Գո՛ւ երկրիս վրայ, կամ Աստուած երկնից մէջ. այս է ըրած ուխտս այն առաջին օրը՝ երբ իմացայ թէ սիրտս քեզմով լցուած է: Գիտեմ թէ խեղճ աղջիկ մ'եմ ես՝ մտածումովս անգամ ոտիցդ դպելու անարժան. ասոր համար երբէք չինգրեցի քեզմէ որ զիս սիրես. և երբէք պիտի չհարցնեմ թէ զիս կ'սիրես: Բայց ես, կ'սիրեմ, կ'սիրեմ, կ'սիրեմ՝ գեղ»:

Եւ կարծես թէ իր բոլոր հոգին այս երեք խօսքերու մէջ կ'ամփոփէր:

« Եւ հիմա անարդէ, նախատէ զիս և ոտիցդ ներքև կոխէ՞: Եթէ կ'ուզես ծաղրէ զիս յիմարի մը պէս որ կ'կարծէ թէ թաղուհի մ'է իր հնոտեաց մէջ: Բոլոր աշխարհիս նախատանաց յանձնէ զիս: Այս պիտի ըսեմ անոնց. Այո՛, կ'սիրեմ զայն. և եթէ իմ տեղս ըլլայիք նոյնը պիտի ընէիք. պիտի սիրէիք զայն՝ կամ պիտի մեռնէիք »:

Ի

Աչերս կախած վերցնելու չէի համարձակեր վախնալով որ այսչափ սիրոյ ուղղուած նայուածքս աւելի չզրուէր կամ նուազ սէք

չյայտնէր: Մակայն այս խօսքերու վրայ իր ձեռաց վրայ կցած ճակատս վերուցի և քանի մը խօսք թոթովեցի:

Մասերը շուրթերուս վրայ գրաւ. « Թո՛ղ զիս որ ամենը խօսիմ: Հիմա գոհ եմ. ալ տարակոյս չունիմ, Աստուած մեկնեց: Մտիկ ըրէ՛: »

« Երէկ, երբ տունէն մեկնեցայ բոլոր զիշերը դրանդ առջև կուռելէ և ողբալէ վերջը, երբ ալեկոծութեան մէջէ հոս հասայ՝ կ'կարծէի որ ալ երբէք պիտի չտեսնէի զքեզ և թէ մեռեալի մը պէս դէպ 'ի գերեզման կ'երթայի: Ատղը լուսնալուն պէս կրօնաւորուհի պիտի ըլլայի: Երբ երէկ զիշեր կ'զլին հասայ և վանքը գացի՝ շատ ուշ էր և դուռը գոց գտայ: Բանալու մերժեցին ինձ: Հոս եկայ զիշերը անցընելու, և Աստուծոյ տունը ու սրահի գերեզմանը մտնելէ առաջ հօրս տան պատերը համբուրելու համար: Տղու մը հետ բարեկամուհիի մը գրեցի որ վաղը զիս փնտուելու գայ: Բանալին առի, Աստուածածնայ առջև կանթեղը վառեցի: Ծնկան վրայ եկայ և ուխտ մը ըրի, վերջին ուխտ մը, յուսոյ ուխտ մինչև իսկ յուսահատութեանս մէջ: Ասան զի եթէ երբէք սիրես՝ պիտի զոյս որ միշտ հողոյդ խորը վերջին հրոյ կայծ մը կ'մնայ ամէն ինչ մարած կարծած ատենդ իսկ: »

« Սուրբ Պաշտպանուհի, ըսի իրեն, ուխտիս նշան մը զրկէ՞ « հաւատելու համար թէ սէրը չխաբեր զիս և ստուգիս Աստուծոյ այնպիսի կեանք մը կ'նուիրեմ որ միայն իրեն պէտք է « վերաբերիլ: »

« Ահաւասիկ վերջին զիշերը զոր մարդոց մէջ կ'անցընեմ: « Մէկը չգիտեր ո՛ւր ըլլալս: Ատղը թերևս պիտի գան փնտու « լու զիս երբ ալ պիտի չգտնուիմ հոս: Եթէ առաջ բարեկա « մուհիս գայ պէտք եմ որոշումս կատարել և յաւիտեանս վաճառի « մէջ պիտի հետեւիմ անոր: Բայց եթէ միւսը անորմէ առաջ « երևի ան իմ հրեշտակէս առաջնորդուած զայ գտնէ և « միւս կենաց եղը կասեցնէ զիս Ո՛հ, այն ատեն յայտնի « պիտի ըլլայ որ զիս չէք ուզեր և պէտք եմ անոր հետ վերա « դառնալ մնացած օրերս զինք սիրելու համար: Թող այն ըլլայ: »

« յաւելցուցի : Եթէ Քու և Աստուծոյ կամքն է այս հրաշքը ը-
 « րէք : Այս խնդիրքս ընդունել տալու համար կարողութեանս
 « համեմատ նուէր մը կ'ընեմ Քեզ ես որ բան մը չունիմ : Ահա
 « ւասիկ վարսերս , իմ խեղճ և երկայն վարսերը զոր այնչափ կը
 « սիրէ և քանի անգամ ծիծաղելով քակեց անոնց հողմէն ուսե-
 « րուս վրայ երերալը տեսնելու համար : Ա՛ն անոնք , կ'նու-
 « րեմ Քեզ , ես ինքնին կ'կտրեմ ցուցնելու համար թէ բան մը
 « չեմ խնայեր , և թէ զլուխս ատաշուրնէ կ'հնազանդի այն մըկ-
 « րատին որ վաղը աշխարհէ բաժնուելովս պիտի կտրէ զանոնք » :

Այս խօսքերու վրայ ձախ ձեռքով մտաքննեաց թաշկինակը՝ որ
 զլուխը կ'դոցէր , վերցուց և միւս ձեռքով կտրուած մազերուն
 երկայն վարսերը , որոնք իր քով տերեւէ անկողնոյն վրայ դրած
 էր , բռնելով ինձ ցցուց : « Աստուածածին իր հրաշքը ըրաւ ,
 յաւելցուց աւելի սաստիկ ուրախութեամբ և հաստատուն շեշտով
 « Քեզ առ իս զըկեց , ս'ւր որ ուզես պիտի երթամ : Մազերս ա-
 նորն են , կեանքս քուկդ է » :

Իր գեղեցիկ սեռու վարսերուն հիւսուածներու վրայ ինկայ , ո-
 րոնք ձեռացս մէջ մնացին ծառէ կտրուած թոռամած ճիւղի մը
 պէս : Մունջ համբոյրներով դոցեցի զանոնք , սրտիս վրայ սեղ-
 մեցի և արցունքներովս թրջեցի իբր թէ իր մէկ մասը եղած ըլ-
 լար զոր մեռած հողին մէջ կ'թաղէի : Ետքը աչերս իրեն դար-
 ձնելով , իր չքնաղ գլուխը տեսայ , որ բոլորովին մերկացած բայց
 իր զոհողութեամբ աւելի զարդարուած և գեղեցկացած էր , ուրա-
 խութեամբ և սիրային կերպով կ'փայլէր իր մազերու աւելի կո-
 րուսած ատեն քան մկրատով կտրուած սեռու և անհասար մա-
 սերուն մէջ : Երիտասարդութեան խորտակուած արձանին նման
 երեցաւ ինձ , որու շնորհքը և գեղեցկութիւնը , ժամանակին ա-
 վերու մեծերը անգամ կ'աւելցնեն դուրս և զմայլում շարժելով : Այս
 ինքզինքը պղծելը , և իմ սիրոյս համար իր գեղեցկութեան սպա-
 նութիւնը սրտիս հարուած մը տուին որու հնչելուն բոլոր անձս
 սարսուեցուց և երեսն 'ի վայր զիս իր ոտից առջև իյնեցուց : Սի-
 րոյ ինչ ըլլալը զզայն նախ և այս նախկին զրպեւմը սէր կար-
 ծեցի :

ԻՍ.

Ափսո՛ս , կատարեալ սէր չէր , բայց միայն անոր օտուերը
 սակայն դեռ շատ երիտասարդ և շատ միամիտ էի չխարուելու հա-
 մար : Կարծեցի թէ կ'պաշտէի զինք ինչպէս որ այնչափ անմե-
 ղութիւն , գեղեցկութիւն և սէր՝ սիրահարէ մը պաշտուելու ար-
 ժանի էին : Ըսի իրեն այնպիսի անկեղծ կերպով զոր յուզմունքը
 կ'ազդէ և այն խանդով զոր առանձնութիւնը , գիշերը , յուսա-
 հատութիւնը և արտասուքը կ'ներշնչեն : Հաւատաց ինձ վասն զի
 ապրելու համար հաւատալու պէտք ունէր , ասկէ զատ վասն զի
 ինք իր հողւոյն մէջ բաւական ստիփ ունէր ուրիշ հազար սրտե-
 րու պակասը դոցելու համար :

Այսպէս սահեցաւ ամբողջ գիշերը , երկու անձերու ապահով
 բայց միամիտ և մաքուր խօսակցութեան մէջ , որոնք անմեղու-
 թեամբ իրենց խանդը կ'յայտնեն և որոնք կ'բազման որ գիշերը
 և լուութիւնը յաւիտեանական ըլլան որպէս զի իրենցմէ օտար բան
 մը իրենց բերին և սրտին մէջ չմննէ : Իր բարեպաշտութիւնը ,
 իմ երկշտ զուշութիւնս և մեր հողւոյն այլայլութիւնը անգամ
 որ և իցէ վտանգ կ'հեռացնէին մեզմէ : Մեր արտասուաց քօղը
 վրանիս էր : Հեշտութենէ հեռի ըլլալու համար սրտի շարժումէ
 աւելի զօրոտոր բան մը չկայ : Այնպիսի մտերմութեան հետ չա-
 րաչար վարուիլը երկու հոգիներու պղծումը պիտի ըլլար :

Երկու ձեռքերը իմ ձեռացս մէջ կ'բռնէի , կ'զգայի որ կեանք
 կ'առնէին : Կ'երթայի ամբողջ զով ջուր բերելու որ խմէ կամ
 ճակտին և այտերուն սրակեմ : Կրակը վերստին կ'վառէի քանի
 մը կոճղեր նետելով , ետքը դարձեալ կ'նստէի այն քարին վրայ՝
 որու քով զլուխը մտնենիներու վրայ կ'հանդէր , լսելու և կըր-
 կին մտիկ ընելու համար իր սիրոյ հեշտալի խոստովանութիւն-
 ները որ ակամայ ծնած էին անարատ և քաղցր բարեկամութեան
 երեւոյթով , թէ ինչպէս նախ վախցած և ետքը քաջալերուած
 էր , թէ ինչ նշանով վերջապէս հասկցած էր որ կ'սիրէր զիս :

Թէ քնչպէս ընտրութեան զաղտնի նշաններ տուած էր ինձ անյայտ կերպով, որ օրը կ'կարծէր իր մատնուած ըլլալը, որ օրը գետած էր որ կ'պատասխանէի իրեն : Թամբը, ձեերը, փախչող ծիծաղները, և միտքը պահած խօսքերը, այս վեց ամուսն մէջ մեր կերպարանքին վրայի ակամայ ամպերը և յայտնութիւնները, ամէն ինչ իր միտքը պահած էր, ամէն ինչ կ'իշխէր, նման հարաւային լեռներու խոտին զոր հովը կ'այրէ ամառը և հրոյ նշանը կ'պահուի ամէն տեղերը ուր կայծը անցած է :

ԻԲ

Այստեղցնէր ասոնց զգայման այն բոլոր ծածուկ աւելորդապաշտութիւնները որ ամենատոչինչ դէպքերու արժէք և բացատրութիւն կ'տան : Մի առ մի իր հողւոյն քօղերը իմ առջևս կ'բանար : Կարծես թէ Աստուծոյ առջև մերկ կ'երևէր իր ամբօթութեամբ, մանկութեամբ և թոյլտուութեամբ : Հոգին կենաց մէջ մէկ անգամ միայն ունի այս վայրկեանները ուր ամբողջ ուրիշ հողւոյ մը մէջ կ'հոսէ շուրթերու այն անսպառ մրմունջով՝ որոնք չեն բաւեր իր սիրային խոստովանութեանց և կ'վերջացնեն զանոնք շփոթ և չարտասանուած խօսքեր թոթովելով, ննջող մանուկի մը համբոյրներու նման :

Ես ալ մտիկ ընելէ, հեծելէ և սարսուալէ չէի յարեր : Թէև իմ թեթև և դեռ երիտասարդ սիրտս ոչ բաւական հասուն և ոչ առատ էր ինքնին այսչափ բոցավառ և երկնային զգացումներ արտադրելու, սակայն այս զգացումները իմ սրտիս մէջ հոսելով այնպիսի նոր և հեշտալի տպաւորութիւն մը կ'ընէին որ իմանալով կ'կարծէի զոչ զանոնք : Սխալմունք : Ես սառ էի ինք հուրն էր : Յոլացնելով և կ'կարծէի թէ կ'ստեղծէի : Այսու ամենայնիւ անոր վերաբերած այս ճառագայթը իմ վրայ ալ ցոլանալով երկուքնիս ալ նոյն զգայմամբ օդին մէջ ծածկուած կ'երևցնէր :

ԻԳ

Այսպէս սահեցաւ ձմեռուան այս երկար գիշերը : Նոյն գիշերը թէ իրեն և թէ ինձի համար « Կ'սիրեմ » ըսող առաջին հառաչին տեղութիւնը ունեցաւ միայն : Երբ ցերեկ եղաւ թուեցաւ մեզ թէ հաղիւ սկսուած խօսք մը կ'ընդմիջէր :

Արեգակը հորիզոնէն արդէն բարձրացած էր երբ իր ճառագայթները զոցուած փեղկերէն սահելով կանթեղին լոյսը աղօտեցին : Գուռը բացած ատենս տեսայ որ ձկնորսին ընտանիքը վաղելով սանդուղէն կ'ելլէր :

Բրօսիտացի գեուահաս կրօնաւորուհին, Կրայիէլայի բարեկամը, որու նախընթաց օրը իր սոմսակը ղրկելով յայտնած էր հետեւեալ օրը իր վանք մանելու գիտաւորութիւնը, որտի յուսահատութիւն մը կասկածելով գիշերը իր եղբայրներէ մէկը Նաբօլի ղրկած էր Կրայիէլայի որոշումը ծնողաց իմացնելու համար : Այսպէս իրենց զուկին գտնուելու իմանալով աճապարանօք եկան, զղջացած իրենց յամաւորութեան վրայ միանգամայն ուրախ ըլլալով որ յուսահատութեան եզրը կասեցուցին զայն, ուր ազատ և ներուած պիտի կրնային տուն վերադարձնել :

Մեծ մայրը անկողնին քով ծնկան վրայ եկաւ իր երկու բազուկներով հրելով երկու փոքրիկ տղայքը զորս անոր սիրտը մեղմացնելու համար բերած էր և անոնց մարմնով իբր վահանէ մը պատսպարուելու իր թուին յանդիմանութեանց դէմ : Տղայքը պոռալով և լալով իրենց քրոջ բազկաց մէջ ինկան : Զանոնք շոյելու և մեծ մօրը համբուրելու ըրած շարժումէն Կրայիէլայի գլուխը զոցող թաշկինակը ինկաւ և իր մազերէ զրկուած գլուխը երևան ելաւ : Իր գեղեցիկութեան ըրած այս անարգութեան նպատակը աղէկ հասկնալով սոսկացին : Վերստին հեծկտանքներ սրայթեցան տան մէջ : Կրօնաւորուհին ներս մանելով բոլոր բազմութիւնը հանդարտեց և միտքարեց, կտրուած վարտերը ժողվեց, Աստուածածնայ պատկերին գպցուց և սպիտակ մետաքսէ թաշկի-

նակի մը մէջ փաթթելով մեծ մօր զենջակին մէջ գրաւ զանոնք: « Պահեցէք ասոնք, ըսաւ անոր, որպէս զի երբեմն իր երջանիկ կամ վշտալի ատեն իրեն ցուցնելով յիշեցնէք իրեն որ երբ իր սիրած անձին վերաբերի գիտնայ թէ իր սրտին նակիին ընծան միշտ Աստուծոյ վերաբերիլ պէտք է ինչպէս որ իր զեղեցիկութեանը այս մաղերով անոր կ'վերաբերի » :

ԻԴ

Իրիկունը Նաբօլի վերադարձանք ամենքնիս միատեղ: Կրացիէլլան գտնելու և աղատելու դէպքին մէջ ցուցած ջանքս ծեր կնոջ և ձկնորսին իմ վրայ ունեցած սէրը կրկնապատկած էր: Ոչ մէկը իմ փոյթիս և իր իմ վրայ ունեցած հակումին ինչ ըլլալուն վրայ կ'կասկածէր: Իր բոլոր ընդդիմութեան պատճառը Ձէքօյի տգեղութիւնը կ'կարծէին: Այս ատելութեան կ'յուսային ժամանակով և կարողաբութիւններով յաղթել: Կրացիէլլայի խոտացան որ ալ պիտի չստիպեն զինք ամուսնանալու: Ձէքօ ինքնին իր հօրը աղաչեց որ ալ չխօսի: Իր խոնարհութեամբ, վարքով և նայուածքով մօրաբեռորդիէն ներողութիւն կ'խնդրէր վըշտացը պատճառ ըլլալուն համար: Տան մէջ հանդարտութիւնը վերադարձաւ:

ԻԵ

Ոչ Կրացիէլլայի կերպարանքին և ոչ իմ երջանկութեան վրայ ստուեր մը կ'երևէր, բայց ՚ի այն մտածումէն որ այս երջանկութիւնը վաղ կամ անաղան պիտի ընդմիջէր իմ դէպ ՚ի հայրենիքս վերադառնալով: Երբ Գաղղիոյ անունը արտասանուէր խեղճ աղջկեր մահուան ստուերը տեսնելու պէս կ'զեղչէր: Օր մը սենեակս մտնելով բոլոր քաղաքի հաղուստս յատակին վրայ պատառուած և նեառուած դստայ: « Ներէ՛ ինձ, ըսաւ Կրացիէլլա ս-

տիցս առջև ծնկան վրայ դալով և իր վշտալի երեսը իմ վրայ վերցնելով, ես ըրի այդ ԳժԷրդար-Են-Է: Ո՛հ, մի յանդիմաներ զիս: Շատ վիշտ կ'զգամ երբ յիշեմ որ օր մը այս նաւարարի հաղուստը պիտի հանես: Կ'թուի ինձ թէ այն ատեն այս սիրտդ պիտի թողուս և հայուստիդ հետ ուրիշ սիրտ մը պիտի առնես»:

Այս պղտիկ փոթորիկներէ վերջ, որոնք խանդին եռանդէն կը պայթէին, և որոնք կ'հանդարտէին մեր աչաց քանի մը արտասուքներով, երեք ամիս այսպէս սահեցան երեակայական երանութեան մը մէջ որու ամենապարզ դէպք մը զպելով պիտի ջնջէր:

Ամպի մը վրայ էր մեր գրախտը:

Այսպէս սէր ճանչցայ մանկան մը աչաց մէջ կաթիլ մը արտասուքով:

ԻԶ

Քանի՛ երջանիկ էինք երբ միատեղ կրնայինք կատարելապէս մոռնալ որ Բօզիլիբի ստորին սնակէ, արևու առջևի այն պաշտամէ, այն փոքրիկ սենեկէ ուր օրուան կէսը խաղալով կ'աշխատէինք, այն եղբրբին աւազին վրայ քաշուած նաակէ, և այն զեղեցիկ ծովէ՛ որու զովութիւնը և շուրերու քաղցր ձայնը, խոնաւ և աղբու հովով մեզ կու դար, քանի՛ երջանիկ էինք երբ կ'մոռնայինք որ ասոնցմէ զատ ուրիշ աշխարհք մը չկար:

Բայց ափսոս, երբեմն կային ժամեր ուր կ'մտածէինք թէ աշխարհս հոն չէր եղբրեր և թէ օր մը պիտի ծագէր որ լուսնին կամ արևին նոյն ճառագայթին տակ պիտի չդանէր զմեզ: Կը սխալեմ երբ սրտիս այն ատենուան չորութիւնը կ'մեղադրեմ վերջէն զղացածիս հետ բաղդատելով զայն: Կ'սկսէի Կրացիէլլան սիրել. ինքնին խոտովանածէս հազար անգամ աւելի: Եթէ այնչափ սիրած չըլլայի, բոլոր կենացս մէջ հողոյս մէջ ձգած հետքք այնչափ խորունկ և դառն չէր ըլլար, իր յիշատակը այնչափ փափկութեամբ և տխրութեամբ սրտիս մէջ չէր գրոշմուեր, և իր կերպարանքը յիշողութեանս մէջ այնչափ ներկայ և պայծառ չէր ըլլար: Թէև այն ատեն սիրտս աւաղէ էր, սակայն այս ծովային

Ճաղիկը շատ եղանակներու համար հոն կ'արմատէր, նման Իշխա
կզըղոյն եղերքը հրաշալի շուշաններուն ծաղկելուն :

ԻԷ

Ճառագայթէ զընուած ո՞ր աչքը կամ ծլելով թարշամած ո՞ր
սիրտը պիտի չսիրէր զայն : Իր դեղեցկութիւնը սիրոյ հետ իրիկ-
ուրնէ առաու կարծես կ'աճէր : Ալ չէր մեծնար բայց իր բոլոր
շնորհքով կատարեալ կ'ըլլար, շնորհք որ երէկ մանկան մը կը
վերաբերէին բայց այսօր ծաղկած օրիորդի մը : Իր նուրբ ձեւ-
րու պատանեկութեան քաղցր և բոլորաձև դիժերով փոխուիլը
աչքով կ'տեսնուէին : Իր հասակը կ'ուզուէր առանց առաձգու-
թիւնը կորսնցնելու : Իր դեղեցիկ մերկ ոտքերը ալ այնչափ թե-
թե չէին կոխեր գետինը, բայց կ'թողուր որ քսուէին այն ծուլու-
թեամբ և թուլութեամբ՝ որ կ'նշ մը սիրոյ առաջին մտածումնե-
րը սկսած ատեն բոլոր մարմնոյն ծանրութիւն կու տան :

Իր մաղերը կ'բուսնէին դարնան դաղջ ալեայ տակ խարտեաչ
և խիտ ծովային բոյսերու նման : Շատ անգամ կ'զըօսնուի անոնց
աճումը մատերովս չափելով իր ժապաւինուած կանաչ հաղուս-
տին վրայ : Իր մարմինը կ'սպիտակէր և կ'դուստուրէր նոյն գոյն-
երով որ ամէն օր բուստին վարդագոյն փոշին իր մատերու ծայ-
րը կ'ներկէր : Աչքերը օր ըստ օրէ կ'մեծնային և կ'ընդլայնէին
յանկարծ երեցած սիրոյ այս նոր հորիզոնը պատելու համար :
Ապրելու զարմանքէն էր երբ կալաթէ մարմարիւնին մէջէ առա-
ջին բարախում մը կ'զգար : Հետս ահամայ ամօթխածութիւններ,
գիրքի, նայուածքի և ձեւերու երկչոտութիւններ ունէր զորս եր-
բէք նախ ունեցած չէր : Այլիտէի որ ես ալ մունջ և գողգոջուն
էի իր քով : Պիտի ըսուէր թէ երկու յանցաւորներ էինք մինչ-
դեռ երկու երջանիկ պատանիներ էինք : Այսու ամենայնիւ քա-
նի մ'ատենէ ի վեր այս երջանկութեան տակ արտութիւն մը կը
պահուէր կամ կ'նշմարտէր : Մենք չէինք գիտեր պատճառը,
բայց ճակատագիրը գիտէր : Միատեղ անցընելու ժամանակին
կարճութեան զգայումն էր այս :

ԻԸ

Շատ անգամ Արացիէլա իր փոքրիկ եղբարքը հաղուեցնելէ
և սանարելէ վերջը զուարթօրէն իր աշխատութիւնը սկսելու աեղ
պատշգամին յենած պատին վրայ կ'նստէր, թղենիի մը մեծ տե-
րեներուն շուքին տակ որ վարէն մինչև պատին ծայրը կ'հասնէր :
Հոն անշարժ կ'մնար ամբողջ կէս օրեր ակնապիշ : Երբ իր մեծ
մայրը կ'հարցնէր թէ հիւանդ էր, ցաւ մը չունիմ կ'պատասխա-
նէր բայց աշխատելէ առաջ յոյնած եմ : Չէր ուզեր որ այն ա-
տեն խօսէին իրեն : Ամենէ ալ երեսը կ'զարձնէր բաց ինձմէ, և
կ'նայէր ինձ երկար ատեն առանց բառ մը խօսելու : Երբեմն շուր-
թերը կ'շարժէին իբր թէ կ'խօսէր, բայց անանկ բառեր կ'թո-
թովէր զորս ոչ մէկը կ'հասկնար : Երբեմն սպիտակ երբեմն վար-
դագոյն փոքրիկ սարսուռներու անցնիլը կ'տեսնուէր այտերուն
մարմնոյն տակէ որոնք կ'կնճուուէին առաւօտեան հովին առաջին
շունչէն ննջող ջուրին շարժելուն պէս : Բայց երբ իր քով նըս-
տելով ձեռքը կ'բռնէի և իր գոցած աչերուն երկայն արտևա-
նուներու կ'զայէի գրչիս կոթովը կամ շահասպարամի ճիւղին
ծայրովը՝ այն ատեն ամէն ինչ կ'մոռնար և առաջուան պէս կ'ըս-
կէր խնդալ և խօսակցիլ : Միայն թէ ինձի հետ խնդալէ և կա-
տակելէ ետքը արտում կ'երևէր :

Երբեմն կ'ըսէի իրեն . « Արացիէլա, ինչ կ'նայիս այսպէս ժա-
մերով հոն ծովու ծայրը, միթէ մեր չտեսած բան մը կ'տեսնես
դու :

— Կ'տեսնեմ Գաղղիան սառէ լեռներու ետև, կ'պատասխա-
նէր ինձ :

— Եւ այդչափ գեղեցիկ ինչ կ'տեսնես Գաղղոյ մէջ, կ'յա-
ւելցնէի :

— Կ'տեսնեմ մէկը որ քեզի կ'մամսի, կ'կրկնէր, մէկը որ ան-
եզը սպիտակ ճամբու մը վրայ կ'քալէ, կ'քալէ, կ'քալէ : Ա՛քա-
լէ միշտ առանց դառնալու միշտ յառաջ, և ամբողջ ժամեր կ'ըս-

առանձմ, յուսալով որ կ'վերադառնայ իր հետքերու վրայ. բայց չվերադառնա՛ր» :

Ետքը երեսը դենջակին մէջ կ'պահէր, և ամենէ զորովալի անունները կանչելովս իսկ իր գեղեցիկ ճակատը չէր վերցնէր :

Ես ալ այն ատեն շատ տխուր սենեակս կ'մտնէի : Ա'փորձէի միտքս ցրուելու համար կարգալ բայց միշտ թղթին և աչերուս մէջ տեղ անոր երեսը կ'տեսնէի : Ա'թուէր ինձ թէ բառերը ձայն կ'առնէին և մեր սրտերու պէս կ'հառաչէին : Ես ալ շատ անգամ առանձին լալով կ'անցընէի. բայց սեւամաղձութեանս վրայ ամչնալով երբէք Արացիէլայի չէի ըսեր որ լացած եմ : Ա'բշափ է'վերպէի. ինձմէ արատուք մը ս'բշափ երջանիկ պիտի ընէր զինք :

ԻԹ

Այիշեմ իր սրտի ամենէ մեծ վիշտ տուող տեսարանը, որմէ վերջը կատարելապէս երբէք չմոխթարուեցաւ :

Քանի մ'ատենէ 'ի վեր գրեթէ իր տարիքով երկու կամ երեք աղջիկներու հետ բարեկամութեամբ կ'պտուած էր : Այս դեռահաս աղջիկները պարտեզներու մէջի մէկ տնակը կ'ընակէին, և ուսումնարանի մը դեռահաս Գրանսուհիներու հաղուստները կ'ձեռնին կամ կ'նորոգէին : Միւրատ թաղաւորը հաստատած էր այս ուսումնարանը իր պաշտօնեաներու և զօրապետներու աղջկանց համար : Գեռահաս Բրօսիտացուհիները շատ անգամ աշխատելով վարէն Արացիէլայի հետ կ'խօսէին որ պատշդամին յենած պատին վրայէ կ'նայէր անոնց : Այս վանքին աշակերտներուն գեղեցիկ տանթեւանները, ընտիր մետաքսեղէնները, աղւոր փեղայրները, կօշիկները, ժապաւէնները, շալերը կ'բերէին կամ կը տանէին Արացիէլայի ցուցնելով : Զարմացման և հիացման ձայները չէին վերջանար :

Երբեմն փոքրիկ կարուհիները Արացիէլան իրենց հետ կ'առնէին Բօզլիլիքի փոքրիկ մատուռին պատարաղին կամ երեկոյեան աղօթքին ընկերանալու համար : Անոնց զիմաւորելու կ'երթայի

երբ օրը կ'խոնարհէր և զանգակին կրկնուած հնչունը երէցին օրհնութիւն տալը կ'խմացնէր ինձ : Ա'վերադառնայինք ծովու աւազին վրայ խաղալով, դայող կոհակին հետքին ետեւ յառաջանալով, կամ կ'փախչէինք կոհակէն երբ վերստին կու գար սաքերնուս վրայ փրփրով : Աստուած իմ, ս'բշափ աղւոր էր այն ատեն Արացիէլա երբ վախնալով որ օսկեհու գեղեցիկ հողածափները չթրջէ, բազուկները երկնցուցած առ իս կ'վազէր իբր թէ իրեն հասնող կամ ոտքերը միայն լըող նախանձոտ ալիքէն սրտիս վրայ կ'փախչէր :

L

Քանի մ'ատենէ 'ի վեր կ'զիտէի որ իր մտածումներէ մէկը կը պահէր ինձմէ : Գաղանի խօսակցութիւններ կ'ընէր իր բարեկամուհիներու հետ : Տեսակ մը պղտիկ դաւ մ'էր որու մէջ չէին ընդունէր զիս :

Գիշեր մը սենեկիս մէջ կարմիր հողէ փոքրիկ ճրագի մը լոյսով կ'կարդայի : Տանիքին վրայի գուռը բաց ձգած էի ծովուն հովը առնելու համար : Արացիէլայի և աղոյ սենեկին մէջ լսեցի աղմուկ մը, աղջիկներու երկար փափառքներ, խեղդուած ծիծաղներ, վերջը պղտիկ զանգասներ, բարկութեան բառեր, հուսկ յետոյ նոր ձայներ երկար լուծիւններով ընդմիջուած : Նախ մեծ ուշադրութիւն չըրի :

Սակայն այն հողը և տեսակ մը զաղանի պահելու համար փափառքներու խեղդիլը հետաքրքրութիւնս շարժեցին : Գիւրջս ձգեցի, ձախ ձեռքով հողէ ճրագս բռնեցի և աջ ձեռքով հովէն պատսպարեցի որ չմարի : Մունջ և քարերու վրայ քայլերս թեթեւցնելով անձայն տանիքէն անցայ : Ախանջս Արացիէլայի դրան գրի և լսեցի քայլերու աղմուկ մը՝ որ սենեկին մէջ կ'երթնէի, լաթերու ճմլում մը՝ զոր կ'ծալէին կամ կ'պարզէին, կանանց մատնոցներու, ասեղներու և մկրասներու շշուիլ որոնք ժապաւէններ կ'շտկէին, թաշկինակներ կ'զնգասեղէին, և այն շատախօսութիւնները և քաղցր ձայներու բզղումը՝ զոր շատ ան-

դամ լսած էի մօրս տունը երբ քոյրերս պարահանդէսի համար կ'հաղուէին :

Հետեւեալ օրը Բօղիլիբի մէջ հանդէս չկար : Արացիէլլայ երբ բէք խորհած չէր իր գեղեցկութիւնը պաճուճանքով աւելցնելու : Հայելի մը անդամ չկար իր սենեկին մէջ : Տանիքին շրջորին ջուրի ամանին մէջ ինքզինք կ'նայէր կամ աւելի իմ աչերուս մէջ :

Հետաքրքրութիւնս այս պաղանիքին չգիմացաւ : Ծուռկովս դուռը հրեցի : Գուռը բացուեցաւ և երեցայ սեմին վրայ կանթեղ 'ի ձեռին :

Գեռահաս կարուհիները աղաղակ մը ձղեցին և թռչոց թռիչքին նման փախեցան սենեկին անկիւնները իբր թէ ոճրագործութեան մը մէջ բռնած ըլլայի զերենք : Գեռ իրենց ձեռաց մէջ բուստի կտորներ կ'բռնէին , մէկին ձեռքը կար թել , միւսին մըլիբատ մը , ասիկա ծաղիկներ կ'բռնէր , ուրիշ մ'ալ ժապաւէններ , բայց Արացիէլլա սենեկին մէջ տեղը տախտակէ աթոռի մը վրայ եղած ըլլալուն և իմ անակնկալ երեւոյթէս ասլիքով չկրցած էր փախչիլ : Գուռի պէս կարմիր էր : Աչերը կախած չէր համարձակեր ինձ նայիլ և հագլու շունչ կ'առնուր : Ամենքն ալ կ'լռէին սպասելով որ ինչ պիտի խօսէի : Ես ալ բան մը չէի խօսեր : Տեսածիս զարմացման և մունջ գիտողութեան մէջ ընկղմած էի :

Արացիէլլա հանած էր իր հաստ բրդէ շրջազետտը , Բրօսիտացուհոյ ժապաւինած հագուստը որ կուրծքի վրայ բաց է դեռահաս աղջկան շնչառութիւնը և տղուն կենաց աղբիւրը զիւրացնելու համար , նոյնպէս ոսկեթելով հիւսուած տախտակէ կուճով հողաթափները որոնց մէջ ընդհանրապէս իր մերկ սաքերը կ'խաղային , պղնձէ գլխով երկայն ասեղները որոնք իր սեռա մասերը զլելին վրայ կ'փաթթէին ինչպէս որ առաջաստակալ մը նաւուն վրայ առաջաստը կ'պատէ , վերջապէս ապարանջանի նման լայն օղբն ալ առաւօտեան լաթերուն հետ անկողնին վրայ խառն նետուած էին :

Այս յունական գեղջկային հագուստին տեղ որ թէ աղքատութեան և թէ հարստութեան կ'վայելէ , որ մինչև սրունդին կէսը ինկած շրջազետտով , պոստիկին ձեղքուածով և թեւոյնե-

րու կտրուածքով կնոջ մը մարմնոյն ամէն ձեւերուն աղաատութիւն և դիւրաշարժութիւն կու տայ , Արացիէլլայի աղաչանօք իր դեռահաս բարեկամուհիները հաղցուցեր էին զրեթէ իր տարիքով և հասակով վանքի մէջի պաղղեացի օրիորդի մը հագուստը և զարդերը : Հագած էր մետաքսէ շրջազետտ մը , վարդագոյն դօտի մը կ'կրէր , պարանոցի սպիտակ թաշկինակ մը , կեղծ ծաղիկներով զարդարուած գտակ մը , և կապտագոյն ողորկ կերպասէ կօշիկներ մետաքսեայ կապերով : Այս հագուստին մէջ շփոթած կ'կենար իբր թէ իր մերկութեան մէջ մարդու մը նայուածքէ յանկարծ տեսնուած ըլլար : Ես ալ կ'նայէի իրեն առանց աչերս պարձնելու , բայց ոչ նշանով մը , ոչ ձայնով մը և ոչ ծիծաղով մը իր ծպտումին վրայ զպայածս յայտնելով : Արցունք մը սիրտս հոսեց : Իսկոյն հասկցայ խեղճ աղջկան նպատակը : Իր և իմ վիճակի մէջ եղած տարբերութեան վրայ ամչնալով ուզած էր փորձել դոնէ հագուստի նմանութիւնով իմ աչացս առջև բաղդերնիս միացնելու : Ինձմէ զազանի և իր բարեկամուհիներու օգնութեամբ կարողարած էր ասիկա յուսալով որ յանկարծ աւելի գեղեցիկ և աւելի ինձի յարմար պիտի երևէր այս հագուստով քան թէ իր կղզոյն պարզ հագուստին մէջ : Շատ խաբուած էր : Կ'սկսէր լուծենէս հասկնալ : Իր կերպարանքը յուսահատ անհամբերութիւն և գրեթէ արտասուալից երեւոյթ մը կ'առնուր որ ինձի կ'յայտնէր իր պաղտնի նպատակը , միտքը և պատրանքը :

Այսու ամենայնիւ բաւական գեղեցիկ էր այսպէս : Իր մտածմունքը հաղար անգամ աւելի գեղեցիկ երեցնել պէտք էր զայն աչացս : Բայց իր գեղեցկութիւնը գրեթէ տանջանքի կ'նմանէր : Մարտիրոսութեան փայտակոյտին վրայի ցիցին վրայ դամուած քորթէժի դեռահաս կոյսերու պատկերին նման էր , որոնք իրենց կապերուն մէջ կ'ոլորուն որպէս զի իրենց սրբութիւնը պղծող նայուածքներէ խոյս տան : Ափսո՛ս , Արացիէլլայի համար ալ ասիկա մարտիրոսութիւն մ'էր . բայց չէ թէ , ինչպէս տեսնելով պիտի կարծուէր , ունայնութեան մարտիրոսութիւնը , հապա իբր օրոյ :

Վանքին մանկամարդ Քրանտուհին հաղուստը, զոր հաղած էր, անշուշտ անոր նիհար հասակին և տասներեք կամ տասնչորս տարեկան վանքի մէջ և աղջկան մը վտիտ ուսերու և թեքու համար կտրուած ըլլալուն շատ նեղ եկած էր ծովու և արևու դեղեցիկ աղջկան անջատեալ հասակին և բոլորակ ուսերուն: Հաստը ամէն կողմէ կ'պատուէր, ուսերուն, կուրծքին վրայ և դօսիին շուրջը վայրենի թղթնի մը կեղևին նման որ ծառին ճիւղերուն վրայ կ'պայթի դարնանային հիւթերու առատութեան ատեն: Գեռահաս կարուհիները որչափ որ աշխատած էին հոն հոս շրջազգեստը դնդասդել, սակայն բնութիւնը ամէն շարժումին զգեստը պատուած էր: Շատ տեղերէ մետաքսին պատուածքներուն մէջէ վիզը կ'սեռնուէր կամ բազուկները կ'երևէին կարերուն ձեղքերէն: Շապիկին հաստ լաթը հաղուստին մէջէ կ'երևէր, և իր խտութեամբ մետաքսին վայելչութեան հետ կ'հակառակէր: Բազուկները նեղ և կարճ թեւոցին մէջ սեղմուած վարդագոյն թիթեռնին նման դուրս կ'ելլէին: Միշտ մերկ յունական լայն հողաթափներու սովորած ոտքերը, կօշիկներուն ողորկ մետաքսը կ'ոլորէին որով կարծես թէ ոտքերուն շուրջը չուաններ կապուած կ'սեղմէին զանոնք: Մագերը՝ գէշ տեղադրուած տանութեայի և կեղծ ծաղիկներու տակ, կարծես իրենք կ'վերցնէին այս գլխոյ դարդը և այն չքնաղ երեսին՝ զոր պարագայ տեղ ուղած էին այլակերպել, պաճուճանքին մէջ լրբութիւն մը և կերպարանքին վրայ համեստ ամօթխածութիւն մը կու տային որ ամենատար և ամենաքանցելի կերպով մէկմէկու ներհակ էին:

Իր դիւրքը իր երեսին պէս շփոթուն էր: Շարժելու չէր համարձակեր վախնալով որ ձակտին ծաղիկը կ'լիսնցնէր կամ հաստը կ'ձմլէր: Քալել չէր կրնար այնչափ կօշիկները ոտքերը սեղմած էին և քայլերուն հաճելի տձեռութիւն մը կու տային: Պիտի ըսուէր թէ ծովու արևին այս միամիտ Եւան իր առաջին պըրանքին որոգայթին մէջ ինկած էր:

ԼՍ.

Լուութիւնս այսպէս սենեկին մէջ վայրկեան մը տեսց: Աերջը բնութեան այս սրժումէ աւելի վշտացած քան թէ ուրախացած յառաջացայ անոր շուրթերովս քիչ մը ծաղրող նշան մը խեղաթիւրելով և յանդիմանութեան ու քաղցր կատակի թեթև նայուածքով մը դիտելով, իբր թէ պաճուճանաց այս հանդերձանքին մէջ դժուարու կ'ճանչնայի զինք: «Ստուգիւ, դ՞ու ես, Կրայիւլլա, ըսի իրեն: Ո՞վ երբէք պիտի կարենայ ճանչնալ դեղեցիկ Բրօսիտացուհին Բարիղի այս պաճուճապատանքին մէջ: Ինչպէս, շարունակեցի քիչ մ'աւելի խտութեամբ, չես ամչնար այլափոխել այն՝ զոր Աստուած այնչափ դեղեցիկ ըրած է բնական հաղուստի մը մէջ: Ո՞րչափ աշխատիս, զարձեալ ալեաց նոյն աղջիկը պիտի ըլլաս նաւարարի ոտքով և քու դեղեցիկ երկնից արևէն զարդարուած: Պէտք ես յանձնառու և Աստուծոյ շնորհակալ ըլլալ: Այս վանդակի թռչունին փետուրները երբէք ծովու ծիծառն պիտի չյարմարին »:

Այս խօսքը սիրար ծակեց: Չհասկցաւ որ իմ մտքիս մէջ ծովու ծիծառն համար ինչ տուփալի ընտրութիւն և պաշտում կային: Կարծեց որ իմ քաղաքիս և սերունդիս դեղեցիկութեան նմանեւ յոյսը կ'օչնչացնէի: Հաւատաց թէ ինծի համար տեսլիք դեղեցիկանալու և իր խոնարհ վիճակին վրայ աչերս խարելու բոլոր ջանքերը կորսուած էին: Յանկարծ արտասուաց մէջ ինկաւ, և անկողնին վրայ նստած երեսը մատերուն մէջ պահած, աղաչեց քրթմնջող ձայնով մը իր գեռահաս բարեկամուհիներուն որ գան զինք հանելի զարդարանքէն ազատելու: «Շատ աղէկ դիտելի, ըսաւ հեծելով, թէ աղքատ Բրօսիտացուհի մ'եմ միայն, բայց կ'կարծէի որ հաղուստս փոխելով այնչափ պիտի չամչցնէի զքեզ, երբ օր մը քաղաքդ հեռէի քեզի: Կ'տեսնեմ որ եղածիս պէս մնալ պէտք եմ և ծնած տեղս մնոնիլ: Բայց պէտք չէ իր ինձ յանդիմանել ասոր վրայ »:

Այս խօսքերու վրայ զայրոյթով քաշեց զլինին ծաղիկները և քարկոթեամբ իրմէ հեռի նետելով ոտիցը տակ կոխեց յանդիմանութեան խօսքեր ըսելով անոնց, ինչպէս որ իր մեծ մայրը նաւարեկութենէ ետքը նաւակին տախտակներուն ըրած էր: Յետոյ դէպ ինձ վաղելով, ձեռքիս կանթեղը փչեց որպէս զի ահա՛ ճած հաղուստին մէջ աւելի երկար չտեսնեմ զինքը:

Ջգացի որ սխալած էի խտուածամբ հետը կատակելով, և թէ կատակը ճշմարտութեան տեղ առնուած էր: Ներողութիւն խնդրեցի անորմէ: Ըսի իրեն որ յանդիմանած էի վասն զի հազար անգամ աւելի հրապուրիչ կ'դտնէի Բրօսիտացուհիի քան թէ Քրանտուհիի հաղուստով: Ստոյգ էր, բայց հարուածը տուած էի: Ալ մտիկ չէր ընէր ինձ բայց կ'հեծկէր:

Բարեկամահիները հանուեցուցին զան, հետեւեալ օրը վերըստին տեսայ զինք: Կղզեցոյ հաղուստը հազած էր, բայց աչերը դեռ արցունքներէ կարմիր էին այն կատակին համար որ բոլոր զիշերը զինք լացուցած էր:

ԼԲ

Նոյն ատենները սկսաւ Գաղղիայէ ընդունած նամակներէս տարակուսիչ կասկածելով որ զիս կ'կանչէին վերադառնալ: Չէր համարձակեր զողնալու զանոնք, այնչափ արդար էր և խարեւու անկարող, թէ և իր կենաց կամ մահու խնդիրն էր այս. բայց երբեմն ինն օր կ'պահէր զանոնք և իր սօկիէ դնդասեղով անկողնին քովը պատին վրայ կախուած Աստուածածնայ թուղթէ պաակերին ետեը կ'դնէր: Այլորհէր թէ Սուրբ Աոյսը մեր սիրոյ համար իր իննօրեայ աղօթքներէ շարժելով հրաշքով մը նամակներուն պարունակութիւնը և վերադարձի հրամանները իրեն քով մտալու հրաւերի պիտի փոխուէր: Այս պղտիկ բարեպաշտ դաւերուն ոչ մէկը աչերէս կ'վրիպէր, և ամենքն ալ աւելի ինձ թիրեղի կ'ընէին զինք: Բայց վերջին ժամը կ'հասնէր:

ԼԳ

Մայիսի վերջին օրերուն մէջ զիշեր մը, դուռը սաստիկ զարկին: Բոլոր ընտանիքը կ'քնանար: Բանալու դացի, և Վ. . . բարեկամն ներս մտաւ: «Քեզի փնտռելու կու դամ, ըսաւ: Ահա ասիկ մօրմէզ նամակ մը. կարծեմ պիտի չմերժես: Չիերը կէս զիշերուան համար վարձուած են: Հիմա տանըմէկ է. երթանք, կամ երբէք պիտի չերթաս: Մայրդ պիտի մեռնի տրամութենէն: Գիտես որ ընտանիքդ ինչ աստիճան պակասութիւններու պատասխանատու կ'ընէ զայն: Այսչափ քեզի համար զոհուած է ան. վայրկեան մ'ալ դու անոր համար զոհուէ: Կ'երգնում որ ուրիշ ձեռք մը և երկար տարի մը քեզի հետ հոս կ'անցընեմ, կ'խոստանամ ասիկա: Բայց պէտք ես ներկայութեամբդ ընտանեացդ երեխս, և մօրդ հրամաններուն հնազանդիս»:

Ջգացի որ կորսուած եմ:

«Հոն սպասէ ինձ», ըսի իրեն:

Մենեակս դարձայ, աճապարանօք լաթերս պայուսակիս մէջ նետեցի: Արացիէլայի գրեցի, ըսելով իրեն ինչ որ տամբութեամբ տարեկան սրտի խանդ մը կրնար բացատրել, և ինչ որ դատողութիւնը կրնար հրամայել իր մօրը հնազանդ գտակի մը: Երգում ըրի իրեն ինչպէս որ ինքնին կ'երգնուի որ չորրորդ ամիսը չ'լրացած իր քով պիտի վերադառնայի գրեթէ ամենեկին ալ չմեկնելու համար: Մեր ապագայ կենաց անստուգութիւնը Նախախնամութեան և սիրոյ յանձնեցի: Բաակս թողուցի իրեն բացակայութեանս ատեն իր ծեր ծնողաց օյնելու համար: Նամակը գոցելով լուի քայլերով յառաջացայ և իր սենեկին դրան սեմին վրայ ծուր դրի. քարը և տախտակը համբուրեցի, Տոմսակը դրան տակէն սենեկին մէջ նետեցի, խեղդելով սրտիս մէջի հեծկըլտանքը:

Բարեկամս իր ձեռքով թևս մտաւ, վերցոց և տարաւ զիս: Այս միջոցին Արացիէլայ, որու այս անսովոր աղմուկը վախցու-

ցած էր, դուռը բացաւ : Լուսինը տանիքը կ'լուսաւորէր : Խեղճ աղջիկը բարեկամս ճանչցաւ, տեսաւ սրայուսակս զոր ծառայ մը ուսերուն վրայ կ'տանէր : Թեւերը տարածեց, սոսկալի ձայն մը ձգեց և անշարժ տանիքին վրայ ինկաւ :

Ազդեցինք անոր : Ինքզինքը կորսնցուցած՝ անկողնին վրայ դրինք : Բոլոր ընտանիքը հասաւ : Երեսին վրայ ջուր սրկեցին, կոչեցին զինքը իրեն սիրելի եղած ամէն անուններով, բայց միայն իմ ձայնս լսելով կենդանութիւն առաւ :

« Կ'տեսնես, ըստ բարեկամս, կ'սպրի, հարուածը տուած է, աւելի երկար մնաս բարեկները աւելի սոսկալի պիտի ըլլան » : Խեղճ աղջկան երկու սառած ձեռքերը վզէս քակեց, և տունէն դուրս քաշեց զիս : Ժամ մը ետքը մութին և լուսեան մէջ Հոովմայ ճամբան կ'երթայինք :

ԼԳ

Կրացիէլայի գրած նամակիս մէջ շատ հասցէներ թողած էի : Անորմէ առաջին նամակը Միլանի մէջ ընդունեցայ : Կ'ըսէր ինձ թէ մարմնով աղէկ էր բայց սրտով հիւանդ, սակայն իմ խոստմանս կ'հաւատար և վստահութեամբ Նոյեմբերի մօտ կ'սպասէր ինձ :

Լիօն հասնելով աւելի յայտնի և աւելի վստահելի դիւր մը տուի : Նամակին մէջ կարմիր շահողրամի քանի մը տերեւներ կաշին սրոնք տանիքին ցած պատին վրայ հողէ ամանին մէջ կը բուսնէին, և որոնցմէ ամէն կիրակի ծաղիկ մը մազերուն մէջ կը գնէր : Արդեօք իրեն վերաբերած բան մը զրկելու համար էր, կամ նշանակի մը տակ ծպտեալ փափուկ յանդիմանութիւնով մը կ'ուզէր յիշեցնել որ ինձի համար իր մազերը զոհած էր :

Կ'ըսէր որ տենդ ունեցած էր, թէ սիրտը կ'ցաւէր, բայց օր ըստ օրէ կ'աղէկնար, թէ օդափոխութեան և կատարելապէս առողջանալու համար իր մօրեղբոր աղջկան Չէքօյի մէկ քրոջ տունը զրկած էին զինք Վօմբօ առողջ և բարձր բլրան վրայ որ Նաբօլի կ'տիրէ :

Ետքը երեք ամիսէն աւելի առանց նամակ ընդունելու անցան : Ամէն օր Կրացիէլայի վրայ կ'մտածէի : Հետեւեալ ձմեռուան սկիզբը Խտալիա պիտի վերադառնայի : Իր արտում և ղեղեցիկ կերպարանքը միշտ կ'երեւէր ինձ զգումով և երբեմն քաղցր յանդիմանութեամբ : Այն ապերաստ տարիքին մէջ էի ուր թեթեւութիւնը և նմանողութիւնը երիտասարդի մը իր լաւազոյն զգացումները դէշ ամօթի կ'զարձնեն. անդուժ տարիք, որու մէջ Աստուծոյ ամենէ գեղեցիկ պարզեները, անարատ սէրը և պարզ բարեկամութիւնները աւաղի վրայ կ'իյնան. և զեռ ծաղիկ աշխարհիս հովէն կ'անհետին : Բարեկամացս չար և հեղինական հպարտութիւնը շատ անդամ սրտիս մէջ կ'վիճէին պահուած և կենդանի սիրոյս հետ : Պիտի չհամարձակէի խոստովանիլ առանց կարմրելու և անոնց հեղնութեանց ենթարկելու ինչ որ էին իմ փափաքներու և արամութեանցս առարկային անունը և վիճակը : Կրացիէլլա կենացս մէջ մոռցուած չէր այլ քողարկուած : Այս սէրը, որ սիրտս կ'հմայէր, մարդկային պատիւս կ'խոնարհեցնէր : Իր յիշատակը՝ որ առանձնութեանս մէջ կ'սնուցանէր զիս, մարդկան մէջ գրեթէ ասպառւի պէս կ'տանջէր զիս : Ո'րչափ կը զղջամ այսօր այն ատենը ամհնալուս համար, և այն անարատ աչերուն ուրախութեանս մէկ ճառագայթը կամ արաստուայ մէկ կաթիլը միայն ո'րչափ աւելի կ'արժէին բոլոր այն կանանց նայուածքներէ, հրապոյրներէ և ծիծաղներէ որոնց համար պատուատ էի անոր կերպարանքը զօհել : Ա՛հ, երիտասարդ մարդը սիրելու անկարող է : Ոչ մէկ բանի արժէքը գիտէ : Ճշմարիտ երջանկութիւնը կորսնցնելէ ետքը միայն կ'ձանձնայ : Անտառին նոր ծլած տունկերու մէջ աւելի սողացող հիւթ և շարժուն ստուեր կայ, բայց կաղնիին ծեր սրտին մէջ աւելի զօրութիւն :

Ճշմարիտ սէրը հասուն կենաց ստուղն է : Տանըրութ տարուան մէջ չենք ձանձնար զայն այլ կ'երեւակայինք : Բուսական բնութեան մէջ երբ պտուղը հասնի տերեւները կ'իյնան, գուցէ մարդկային բնութեան մէջ ալ նոյնն է : Շատ անդամ մտածեցի զայս այն ատենէ ՚ի վեր՝ որ գլխիս վրայ սպիտակ մաղեր կ'հաշուեմ : Յանդիմանեցի ինքզինքս այն սիրոյ ծաղիկին արժէքը չգիտ-

նալուս համար : Անայնութիւն էի միայն : Անայնութիւնը մոլութեանց ամենէ անմիտը և ամենէ անդուլտ է , վասն զի ճշմարիտ երջանկութեան վրայ կ'զգջայնէ :

ԼԵ

Նոյեմբերի առջև օրերուն զիշեր մը , պարահանդէսէ դարձած ասենա տոմսակ մը և ծրար մը տուին ինձ զորս Նարբիէ ճամբորդ մը բերած էր նամակատունէն , Մաքօնի մէջ ձիերը փոխելու ատեն : Անձանթ ճամբորդը կ'ըսէր ինձ թէ ինձի համար նշանաւոր պաշտօն մը ունենալուն համար , զոր իր բարեկամներէ մէկը Նարբիոյ գործատան վերատեսուչը յանձնած էր , անցած ատեն իր յանձնարարութիւնը կ'հատարէր . բայց բերած լուրերը տխուր և սպալի բլալուն համար չէր խնդրեր զիս տեսնել . կ'աղաչէր միայն ծրարը Բարիդի մէջ ընդունիլ :

Գողալով ծրարը բացի : Առաջին պահարանին մէջ Արացիէ լայէ վերջին նամակ մը կար որ միայն այս խօսքերը կ'պարունակէր : « Բժիշկը կ'ըսէ որ երեք օրէ առաջ պիտի մեռնիմ : Կ'ուզեմ քեզ վերջին մնաս բարևս ըսել ոյժս կորսնցնելէ առաջ : Ո՛հ , եթէ հոս բլայիր , պիտի ապրէի անշուշտ : Բայց Աստուծոյ կամքն այս է : Քիչ ատենէ և ընդ միշտ երկնքի բարձրէն քեզի հետ պիտի խօսիմ : Սիրէ հոգիս : Բոլոր կենացը մէջ հեռոյ պիտի բլայ : Գիշեր մը քեզի համար կտրած մտազերս քեզ կ'թողում : Աստուծոյ նուիրէ՛ զանոնք քաղքիդ մատուռի մը մէջ , որպէս զի ինձի վերաբերած բան մը միշտ քովդ բլայ » :

ԼԶ

Նամակը ձեռքերուս մէջ մինչև արտու անշարժ մնայի : Այն ասան միայն երկրորդ պահարանը բանալու կարողութիւնը ունե-

ցայ : Բոլոր իր դեղեցիկ մաղերը մէջն էին ինչպէս որ խրճիթին մէջ այն զիշերը ցուցած էր ինձ : Գեռ քանի մը նոյն զիշերուան թուփի չոր տերեւներու խառնուած էին : Ատարեցի ինչ որ իր վերջին կամքին մէջ հրամայած էր ինձ : Այն օրէ ՚ի վեր իր մահուան շուքը կերպարանքիս և երիտասարդութեանս վրայ տարածեցաւ :

Տասներկու տարի ետքը Նարբի վերադարձայ : Իր հետքերը փնտռեցի : Բան մը մնացած չէր ոչ Մարձելինայի և ոչ Բրօսիտայի մէջ : Աղղոյն ժայռին վրայի տունը աւերակ էր : Առատաղի մը տակ մտխրագոյն քարերու կոյտ մը մնացած էր միայն , որու մէջ այժարածները անձրևի ատեն իրենց այծերը կ'ապաստանէին : Ժամանակը երկրիս վրայ շուտ կ'աւերէ ամէն բան , բայց երբէք չկրնար անհետել սրտի մը մէջէ առաջին սիրոյ հետքերը :

Խեղճ Արացիէ լայ : Չատ օրեր անցան այն օրերէ ՚ի վեր : Սիրեցի և սիրուեցայ : Իմ տխուր ճամբաս ուրիշ շատ զեղեցիկութեան և սիրոյ ճառագայթներէ լուսաւորուեցաւ : Աւրիշ հոգիներ ինձ բացուեցան կանանց սրտի մէջ յայտնելու համար այն զեղեցիկութեան , սրբութեան և անարատութեան ամենամաժուկ դանձերը զորս Աստուած երկրիս վրայ կեդրոնացուցած է , երկինքը հասկցնելու , նախողացնելու և բաղձացնելու համար : Բայց ոչ ինչ քու առաջին երևոյթի նսեմացուց սրտիս մէջ : Արչափ ասրեցայ այնչափ մտածմունքով քեզ մօտեցայ : Քու յիշատակը կ'նմանի հօրդ նաւակին այն ջահին զոր հեռաւորութիւնը չզրկէ կ'աղառէ և որչափ մեզմէ հեռանայ այնչափ աւելի կ'իտայլի : Չզրտեմ թէ մահկանացու մարմինդ ո՞ր կ'հանգչի , ոչ ալ թէ մէկը կ'ողջայ քեզ քաղաքիդ մէջ . բայց ճշմարիտ զերեզմանդ հոգւոյս մէջն է : Հոն է որ ամբողջ ամիոփուած և թաղուած ես : Անուղ երբէք առանց ազգեցութեան չհանդպիր ինձ : Կ'սիրեմ այն լեզուն որ կ'արտասանէ զան : Եւ միշտ սրտիս խորը արտօսը մը կայ որ կաթիլ առ կաթիլ կ'ըղթի և զազանապէս յիշատակը զվայցնելու և քաղցրացնելու համար կ'հոսի :

ԼԵ

1830ին օր մը , իրիկունը Բարիզի մէկ եկեղեցին մտնելով , Ճերմակ սաւանով ծածկուած դեռահաս աղջկան մը դադաղը բերելին տեսայ : Այս դադաղը Կրացիէլեան յիշեցուց ինձ : Սիւնի մը շուքին ետեւ պահուեցայ , Բրօսիտայի վրայ մտածեցի և երկար ատեն լացի :

Արաստօքս չորցան . բայց այն ամպերը՝ որ թաղման տրտմութեան մէջ մտքէս անցած էին , չանհետացան : Լուիկ սենեակս դարձայ : Յիշեցի այս երկար դրութեանս բոլոր դէպքերը , և լալով ու մէկ շնչով գրեցի Ասալին զղջած վերնագրով ոտանաւորը : Քսան տարուան տկարացած զգացումի մը եղանակն է որ սրտիս առաջին աղբիւրը ցայտեցուց . բայց կ'տեսնուի դեռ մտերիմ թեւի մը շարժումը որ վերաւորուած է և երբէք կատարելապէս աւուղջանալիք չունի :

Ահաւասիկ այն տունները , վէճքի մը բոյժը , սրտի մը ցօղը , և դամբանական ծաղկի մը հոտը : Միայն Կրացիէլեայի անունը կ'պակսի անոնց մէջ : Ա'դնէի զայն ոտանաւորի մը մէջ եթէ երկրիս վրայ գտնուէր բաւական անարատ բիւրեղ մը այն արցունքը , այն յիշատակը , այն անունը ամիոփելու համար :

ԱՌԱՋԻՆ ԶՂՂՈՒՄ

Հնչուն յեղերս ուր Սօրբէնթեան բուռն կոհակք Նարնջեւոյն ոտից ներքև կը մղուին , Հոն , ճամբուն մօտ և քաղցրաբոյր ցանկին տակ Կը հանգպի փոքրիկ վէմ մը օտարին Անմտաղիւր մէկ հայուածքին :

Հոն շահողրամն տերևոց տակ կը պահէ
Անուն մը միայն , զոր արձագանգ կրկնած չէ :
Սակայն անցորդն երբեմն հոն կայ առնելով
Տարիքն կարգայ տերեքն մէկդի կորդելով ,
Եւ երբ զգայ արտասուելըն աչերու՝
« Տասն վեց տարուան ; կ'ըսէ , կանոնս մեռնելու » :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
Թողունք հեծեն հով և ալիք կապտաղոյն :
Գարձիք , դարձիք ս իմ տըխուր մտածումներ ,
Ձեմ ուղեր լալ , այլ երազել :

« Տասն վեց տարուան » , կ'ըսէ : Այո , տասնըվեցն
Երբէք ուրիշ ճակտի այսչափ չ'փայլեց .
Երբէք կիզող այս եղբրքին ճառագայթ
Գեղեցկադոյն յաչս ցոլացած չէ մինչ ցարդ :
Ե՛ս միայն զայն ես կը տեսնեմ կենդանի
Հողոյս մէջ , ուր բան մը բնաւ չ'անհետի .
Հողոյս մէջ , ուր միտքս զայն անմահ է թողած
Նման ժամուն , ուր իր աչերն ինձ յարած
Ծովուն վերայ իր զըոյցներն կ'երկարէր ,
Թողով վարսերն հովուն որ զայն տարածէր ,
Եւ շրջելով քօղին ստուեր իր այտին
Մտիկ կ'ընէր զիշերուան երգն ձկնորսին :
Քաղցրը հովուն զովութիւնը կը շնչէր ,
Եւ ծիծաղիտ երկնից լուսինն ինձ ցուցներ ,
Գիշերային ծաղկի նման , որու վրայ
Յօղն արծաթեայ և արշալոյսն կը ցոլայ :
Եւ կ'ըսէր ինձ . « Ինչո՞ւ օդին , սրտիս մէջ
Լի հաճութեամբ փայլի ամէն ինչ այսպէս :
Երբէք կապոյտ լուսատարած այս վայրեր ,
Եւ ոսկեղոյն աւաղներու այս եղեր ,
Ուր կոհակներ ծովու խորէ կը մըլուին
Հոն մեռնելու , և ցան և ցիր կը փշրին .
Երբէք լեռանց այս երկնաբերձ զագաթներ ,
Եւ այս ծոցերն՝ զորս պըսակին անտառներ ,

Լոյսերն , երգերն եղերց վերայ և ալեայ
 Ջրայութեանցս հրապոյրն այսչափ չեն շարժած :
 Այս գիշերուան պէս միտքս երբէք խորհած չէ ,
 Արդեօք սրտիս մէջ նոր անտղ մի ծագած է :
 Առանց ինձի , ըսէ , գիշերք ձեր քաղքին
 Մեր գիշերուան գեղեցկութեան նմանին » :
 Ետքը մեր քով նստած իր մայրն կը դիտէր :
 Ճակատն անոր ծնկան վերայ կը ննջէր :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
 Քողունք հեծեն հով և ալիք կապտազոյն :
 Գարձիք , գարձիք ո՞ իմ արխուր մտածումներ ,
 Ձեմ՝ ուզեր լալ , այլ երազել :

Աչերն , շարթերն սրչափ անբիծ սուրբ էին ,
 Ո՛րչափ երկինք լուսաւորէր իր հողին :
 Գեղեցկափայլ Նեմիի լիճն , զոր մի հով
 Չը խռովէր և է յաւերժ անվրդով ,
 Քափանցկութիւն , յտակութիւն կատարեալ ,
 Չունի երբէք որչափ ունին իրենց փայլ :
 Իրմէ յառաջ հողոյն մտածմունք տեսնուէր :
 Արտեանունք՝ որ կը պահեն իր աչեր ,
 Չեն քողարկեր անմեղութեամբ լի նայուածքն .
 Հող մը ճակտին վերայ կնձիւ չէ թողած :
 Ինչու՞մ ամէն կողմ : Այն ծիծաղն շրթանց վրայ՝
 Որ ետք բեքնին վրայ արտութեամբ վերջանայ ,
 Իր կիսարայ շրթանց վրայ միշտ ծփար ,
 Ծիածանի նրման օրուան մի սլայծառ :
 Այս գրաւիչ գէմքն ստուեր մի չէր քողարկեր ,
 Այս ճառագայթն ամպի մէջէ անցած չէր :
 Իր անորոշ տատանտա քայլն կը ծփար ,
 Ինչպէս կոհակ մ՛ուր լոյսն ծփայ անդադար :
 Կամ վաղելու համար վաղէր , և իր ձայնն ,
 Իր մանկային մաքուր հողոյն արձագանդն
 Այն սուրբ հողոյն բիւր գաշնակներն նուազէր ,
 Որով իրեն լըսող օդն իսկ կը հրճուէր :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
 Քողունք հեծեն հով և ալիք կապտազոյն :
 Գարձիք , գարձիք ո՞ իմ արխուր մտածումներ ,
 Ձեմ՝ ուզեր լալ , այլ երազել :

Իր սրտին մէջ նախ զրոշմեցաւ իմ երեսս ,
 Նրման լոյսին առտու բացուող աչքին մէջ :
 Այն օրէ՛ վեր ալ չգիտեց ուրիշ բան ,
 Իր սիրելէ վերջ տիեզերք սէր եղան :
 Ջիս իր կենաց հետ շփոթուն կը խառնէր ,
 Եւ կը տեսնէր հողոյս ամէն խորհուրդներ .
 Եւ մասնակից կ'ըլլայի ես իր աչքին
 Առջև ծփող հըրապուրիչ աշխարհին ,
 Երջանկութեան երկրիս , երկնից ալ յուսոյ .
 Ա՛լ ժամանակ և անջրպետ են անդոյ :
 Իր անմեղ միտքն ասոնց վերայ չէր խորհեր ,
 Ժամը միայն իրեն կեանքը կ'սպառէր :
 Ինձմէ առաջ անյիշատակ էր կեանքը ,
 Բայց ինձմէ վերջ այս օրերէ գիշեր մը
 Կազմէր անոր և իմ բոլոր ապագան :
 Կը վստահէր այն քաղցրարոյր բնութեան՝
 Որ մեզ ժպտէր , և այն մաքուր աղօթքին՝
 Ջոր իր ծաղկամբ կ'երթար սիրած խորանին
 Նուիրելու , ո՛չ արտասուք այլ ժպտուն
 Ուրախութեամբ և հաճութեամբ իր հողոյն :
 Եւ զիս մանկան պէս կը քաշէր տաճարին
 Սանդուղներուն , հնազանդէի իր ձեռքին ,
 Մինչդեռ իր ձայնն մեղմիկ կ'ըսէր . « Աղօթէ՛ ,
 Առանց քեզի չ'իյտեմ երկինք իսկ ի՞նչ է » :

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն .
 Քողունք հեծեն հով և ալիք կապտազոյն :
 Գարձիք , գարձիք ո՞ իմ արխուր մտածումներ ,
 Ձեմ՝ ուզեր լալ , այլ երազել :

Ապագանի մէջ մաքուր ջուրն արդիւրի՛,

Տեսէք ինչպէս լըճի մը պէս բոլորչի
 Կապոյտ, յստակ յանձուկ շրջան կ'ամբիօփի,
 Պաստպարուած վրդովումէն փոթորիկի,
 Նոյն արևու ճառագայթէն, որ կրնայ
 Ջայն չորցնել աւազանին իսկ վրայ:
 Սպիտակ կարապ մը ջուրին մէջ լողալով
 Վիզը մէջը, որ կը պատի կնճիւով,
 Ար զարգարէ ջրէ հայելին անսեմ:
 Բայց թէ իր թռիչքն ուղղէ ուրիշ աղբերց դէմ,
 Խոնաւ թեւովք զարնէ ալիքն երեբուն՝
 Երկինք անհետ կ'ըլլայ ջուրին մէջ իսկոյն:
 Փետուրքն ինկած մթադնութիւն տան ջուրին,
 Իբրը թէ անդղն իր տեսակին թճնամին
 Ալիքներու վրայ սփռած էր իր մահը:
 Եւ հրաշալի լըճին պայծառ կապոյտը
 Մութ կոհակ մ'է, զոր կը ծածկէ աւազը:

Երբ մեկնեցայ՝ այսպէս ամէն ինչ գողաց
 Իր հոգւոյն մէջ, և հոգեվար սրտին կայծ
 Ճառագայթին մարեղէ ետք սրբացաւ:
 Դէպ 'ի երկինք, չգառնալու ալ բընտ:
 Չէր սպասեր իր անցեալին դարձերուն,
 Տարակոյսէ 'ի յոյս չ'ունէր վարանում,
 Տանջանքի հետ չ'կուռեցաւ իր կեանքը,
 Եւ մէկ շնչով քամեց վշտի բաժակը,
 Եւ ընկղմեց նախկին արցունքն իր հոգին:
 Նըման իրմէ՛ նուազ սիրուն թռչունին,
 Որ դիշերը վեզը թեին տակ դըրած
 Կ'ուզէ ննջել մունջ վիճակի մէջ ինկած,
 Այսպէս յուռոյ կորուստ իր սիրտ խըռոված
 Ննջեց ամսոս, բայց դիշերէն շատ առաջ:

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն.
 Թողունք հեծեն հով և ալիք կապտագոյն:
 Դարձիք, գարձիք ո՞ իմ տըխուր մտածումներ,
 Ձեմ ուզեր լալ, այլ երազել:


Տասն հինգ տարի հող անկողնին մէջ ննջեց
 Ոչ ոք շերտին վերայ արցունք մի հոսեց:
 Մտացութիւնն, մեռելոց երկրորդ զապաղն
 Անոր տանող ճամբան զոյցեց անդանդալ:
 Այն կորսուած քարին վերայ մարդ չ'երթար
 Եւ չ'աղօթեր, չ'մտածեր վշտահար
 Բայ իմ մտքէս, երբ անցեալս յիշելով՝
 Հարցնեմ սրտիս, օրերս սահող հապճէպով՝
 Եւ երբ աչերս յիշատակացըս յարած՝
 Ողբամ երկինս մէջ իմ աստղերս մարած՝
 Նա՛ն առաջինն եղաւ, և իր քաղցըր լոյսն
 Բարեպաշտ կայծ մի կ'արձակէ իմ հոգւոյս:

Ինչո՞ւ յիշել տեսարաններն անցելոյն.
 Թողունք հեծեն հով և ալիք կապտագոյն:
 Դարձիք, գարձիք ո՞ իմ տըխուր մտածումներ,
 Ձեմ ուզեր լալ, այլ երազել:

Սոսկ յիշատակն, զոր բնութիւնն է տուած,
 Փըշտա տունկ մ'է գունատ տըկար ու կանաչ,
 Մերթ հողմահար, մերթ արեւն այրեցած
 Ջղջումի պէս իր սրտին մէջ է բունած:
 Բուսնի ժայռին մէջ ստուեր իսկ չտալով.
 Իր տերեւներ պատին ճամբուն փոշիով:
 Սողայ երկրի մօտ, ուր ծուած իր ճիւղեր
 Ար կոտորեն միշտ այծերու ախոսներ:
 Իսկ դարնայնի, ծաղիկ մը ձեան հատի պէտ
 Իր շերտին վրայ մէկ երկու օր կը տեսնես.
 Բայց իր հոտը բուրբէ շատ իսկ առաջ
 Հոփն հասնելով զայն կը ձգէ թարշամած.
 Ինչպէս իսկ կեանքն որ ստուերի պէս մարի,
 Երջանկութիւնն գեռ անձանօթ իր սրտի:
 Չղայնութեան և փափկութեան մի թռչնիկ
 Ծըռող ճիւղին վերայ ձգէ գայլայլիկ
 «Ծանգիկ, ըսէ, որ կեանքն քեզ շուտ թարշամեց
 Ձկայ երկիր մ'ուր վերածնին ամէն ինչ»:

Ա՛Տ, յիշեցէք, անցեալ ժամերն մի մոռնաք :
 Հառաչելու կ'օղնեն ինձ ձեր յիշատակք :
 Գացէք, հոգոյս հետ մըտածմունք իմ մըտայլ,
 Սիրարս փղձկուն է, կ'ուզեմ լալ :

Այսպէս զրի առնուած արցունքներով կ'զղջայի տանը ութ տարեկան սրտիս խստութեան և ապերախտութեան վրայ : Երբէք վերստին կարող չեմ կարգալ այս ոտանաւորը, առանց ինքզինքս ատելու և առանց սլաշտելու այն թարմ կերպարանքը՝ զոր յաւիտեանս պիտի յիշեցնեն ինձ հարօլից թափանցիկ և տխրազին ալիքները : Բայց հոյիները կ'ներեն երկնից մէջ : Գուք ալ ներեցէք ինձ ' ' ' : Լացի :



	Գ-հէլ-	Գ-հէլ-
Աղահն. կատակերգութիւն	6	Եղծ զըպարտութեան
Աղնէս	7	Երեք հրացանակիրք. 3 հատոր
Ակամայ բժիշկ	4	Երկասիրութիւնք երկուց ըն-
Աղօթագիրք. Հատարակ կազմ	7	կերակցաց
Կիսակաշի	9	Երկարանութիւն
Ոսկեղօծ	20	Էլիզա
« թաւշասպաս	30	Էվանէ վէ խաթա իչին տուալէր
« » ար-		Ընդհանուր կանոնք Ս. Մեսրոպ-
Ճաթաղօծեալ և ոսկեղծ-		եան վարժարանիս Ձմիւռնիոյ
ծեալ շրջանակօք	50	Ընթերցարան. Բ տիպ
Փղօսկրեայ	115	Ընթերցարան Ս. Յ. Պալա-
Ամօրի	20	պանեանի
Այբբենարան. Է տիպ	4 1/2	Թշուառք. 10 հատոր
Այտա. ողբերգութիւն	4	Թուարանութիւն
Անդէղա ֆաճիօլի	4 1/2	Ժէնըվիէվ. Բ տիպ
Անձէլօ. թատրերգութիւն	5	Ժօզէֆ Պալասոն. 8 հատոր
Ապաստանարան սիրոյ Մէ-		Իվանօէ. մամլոյ տակ
դասգասեայ	2	Իրաւունք. լրագիր
Ապացոյց Հայոց Աստուած-		Լէօ Կաճ Ափիօն ծխողի մը սէրը
պաշտութեան առաջնութեանը		Լուի ԺԷ.
Առողջարանութիւն		Լուսաբանութիւն
Առ պարոն Պլըշ Սարգիս		Լուքրէցիա Պօրճիա
Ասողարանութիւն		Լօթօ Ֆրաթէրնօ
Արևելեան Մամուլ. 2 տա-		Խթան ընդդէմ քացոյղաց
րուան	184	Ծաղիկ. 3 հատոր
Արկածք Սրբայ Հայու հոյն	4 1/2	Կանոնագիր Ս. Մեսրոպեան
Արիի Արարատեան	26	վարժարանին որ 'ի Ձմիւռնիա
Բուսաբանութիւն		Կատակերգութիւն սխալանաց
Գաղանիք Փարիզի. 8 հատոր	126	Կենդանաբանութիւն
Գաղանիք Փարիզի վիպասան-		Կիւլիվէրի ճանրորդութիւնք
ութեան թատրերգութիւնք	10	Կիւնասէքեարըն Տօսթու
Գանկարանութիւն		Կովիտասին ցուցակը
Գարուն Հայաստանի. հանդէս		Կրացիէլլա
Գիրք խօսակցութեան Տա-		Հաղար ու մէկ զիշերներ,
ճիերէն և Հայերէն	4	6 հատոր. Բ տիպ
Գատատէրք	5	Հայ ընթերցատուն Ձմիւռնիոյ
Գիմակ. հանդէս կիսամեայ	30	Հայկական նամականի
Ելեկտրաբանութիւն		Հայու մը ուղիղ դատողու-
Եղիշէ	8	թիւնները

	Դասակարգում		Դասակարգում
Հասկարադ աղջիկը . Բ տիպ	3	Շաթուրիան	
Հեղարան . Գ տիպ . . .	2	Ռամզը զրասիրութեան . . .	9
Հերթումն կարծեայ . Բ տիպ	3	Պատիժ	
Հոովմայ արարողութիւնը . . .	2	Ջերմարանութիւն	
Հոովմեական պարզև		Ռաֆայէլ	13
Հրասէլասայ պատմութիւնը		Սարֆը մէմուհ Ֆէննը տէ-	
Չայնարանութիւն		ֆաթիր . Ա և Գ հատոր	40
Չղողարանութիւն		Բ Ծ	30
Մադնիսարանութիւն		Սէրը բժիշկէ . կատակերգութիւն	3
Մաթիլա . 4 հատոր	80	Սիպէլ	
Մանր ուսմունք Գրիտոնէ-		Սոն Ապէստէրածըն սէրկիւ-	
ական հաւատոյ . Գ տիպ	4	ղէշթի օլմն վուգուաթ	5
Մանոն Լէսքո	12	Վալէրիա և Լը Պարսպուլիէ	4
Մարդ	2 1/2	Վէրթէր	10
Մէամէրաբանութիւն		Վիկթորիա	14
Միլլէթինի սէվ		Տեղեկադիր տարեկան ընթացից	
Միութիւն սահմանադրական .		թաղական խորհրդոյ Ջմիւռ-	
վեցամեայ շրջանը	26	նիոյ . 1865	
Միքրո-Մէդաս , Ժանս և		Տեսարան հանդիսիցն Հայ-	
Քօլէն , Ճերմակ ու Սև	5	կայ , Արամայ և Արայի	
Մուխթասար Գրիտոնէա-		Տէր իմ Յիսուս	10
կան վարդապետութիւն	3	Տոմարակալութիւն գործնական	26
Մուսայը սուրբ Մեսրոպեան		Տուալարըն վէ սուրբ Հա-	
վարժարանին Ջմիւռնիոյ	4	զորգութիւնուն գայտէլէրի	
Ա տեսրակ		Տրամարանութիւն	
Բ Ծ	5	Տօրա . սիրային վէպ մի	20
Մանուլրտարանութիւն		Բուզնամէ 1864 տարւոյն	6
Մոնթէ-Գրիսթոյ կոմն , 6		Բօլէնի խորհրդածութիւնը	
հատոր . Ա հատորը երկ-		Փամէլայի առաքինութիւնը	7
րորդ անգամ տպագրեալ	90	Փայտեայ խաչը	2 1/2
Յայտարարութիւն կանոնայ		Փօլին	10
Մեսրոպեան վարժարանի		Քանի մը խօսք մեր ազգին	
Յաւերժահարսն . հանգէս		արդի վիճակին վերայ	
կիսամեայ		Քերականութիւն Հայերէն	
Յորդոր մահուան երկիր զին դէմ		լեզուի	12
Նախախնամութեան գաղանկը	2	Քիմիարանութիւն	
Նասրէտաին խօճայի ծաղը-		Քսան տարի ետք . 4 հատոր	60
արանութիւնը . Բ տիպ	2	Քրիտոնէական վարդապետ-	
Նարեկ . Բ տիպ	20	ութիւն . Գ տիպ	4
Նարեկ ոսկեգօծ	30	Օսմանեան պատմութիւն	16
Նամանարուժութիւն		Օրացոյց Տէտէեան	
Նօրը-Տամ Փարիզի . 3 հատոր	45	Օրիորդ լա Բէնդինի	18

« Ազգային գրադարան »



NL0248532

